

Հրահ. Դր. Ռ- ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

# ՍԱՅԵԱԹ - ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԸ

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ, ՎԵՆԱԿՐՈՒԹԻՒՆ, ԲԱՆԱԽՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Հոյս ընծայեց Ես

Տպարան «Մ

«ՄՈՂԵՐԸ», Թեհրան

1943



891. 99

Ա-18

ԱՅՏԻՊԱՆՈՒԹՅՈՒՆ Ե՛ 1961 թ.

# ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԸ

ժական յօդուածով, լեզուի ուսումնասիրութեամբ, բառարանով  
և այլ յօդուածներով ու դիտողութիւններով

ՐԱԹԵՏԵՍԻՐԵՑ

ՊՐՈՖ. Թ. ԱՐԻԱՀԱՄԵԱՆ



Լոյս ընծայեց Ետապա Թովմասեան

Տպարան «ՄՈՂԻՆ», Թեհրան

1943 թ.

77 29368



Սոյն հաստորի հրատարակութեան ծախսը սիրալիք կերպով յանձն առաւ պ. Շաւառյ Թովմասեանը, որին յայտնում եմ խորին շնորհակալութիւնս:

Ը. ԱՐՐԱՆՍՅԱՆ

11. The present Government of the State of New York  
has the honor to acknowledge the receipt of your letter  
of the 10th inst. in relation to the above matter.  
and in reply to inform you that the same has been  
forwarded to the proper authorities for their consideration.

ԳԼՈՐԳ ԱԽՂԵՐԴԵԱՆԻ

ԼՈՒՍԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆԻՐԱԲԵՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ.

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
CHICAGO, ILL.  
JAN 10 1900

2 0 Ն

**ՍԱՅԵԱՔ-ՆՈՎԱՅԻՆ**

Լշիւմէդ ջունուն իմ էլի Օրիան Բարա թահէրի պէս.

Տաս տարի է ման իմ գալի, ծնոխ դալամ շահէրի պէս.

Հիմի նըստիմ ինթիգարուլ թարիփդ անիմ մահէրի պէս.

Ես մէ փուրըր նալի նըման. քու գոզըն ծով. Սայեաթ-Նովա

**Բ. ԱՐԲ.**



## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1858 թին Մուկուայում լոյս տեսաւ Գէորգ Անվերդեանի հրատարակութեամբ Սայեաթ Նովայի հայերէն երգերի ժողովածուն:

Եթէ ի նկատի ունենանք, որ մեր աշխարհաբար լեզուն այդ ժամանակ իր առաջին մանկական քայլերն էր անում և ժողովուրդը զուրկ էր զրական աւանդութիւնից, այս հոյակապ աշխատութիւնը պէտք է համարենք արտասովոր մի երևոյթ մեր կուլտուրական պատմութեան մէջ: Եւ իրում, հրատարակիչը թէպէտև բժիշկ, բայց լոյս է ընծայում գիրքը առաջնակարգ մասնագէտի կատարելութեամբ. իր ընդարձակ առաջաբանում նա տալիս էր մի խղճմիտ ուսումնասիրութիւն Սայեաթ Նովայի կեանքի և գրական դարձունէութեան մասին. սրան հետևում էր Թիֆլիզի բարբառի ուսումնասիրութիւնը, որ մինչև այժմ էլ կարդացւում է հետաքրքրութեամբ, ապա տալիս էր մի շարք հմուտ ծանօթութիւններ իւրաքանչիւր երգի մասին առանձին-առանձին և վերջապէս գալիս էր բառարանը ծանօթութիւններին զուգընթաց, մի չքեղ գործ, որ ներկայացնում էր ինչպէս տարահնչիւն հայերէն, այնպէս և մանաւանդ փոխառած բառերի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը: Այս երկը, որ ինչպէս ասացինք, մի եզակի երևոյթ էր ներկայացնում, բնականաբար չէր կարող գնահատուել ոչ ժամանակի ազէտ հասարակութեան և ոչ գրագէտ տիրացուների կողմից և միայն Մ. Էմինը և մի երկու այլ գիտնական անձինք համակրանքով վերաբերուեցին դէպի Անվերդեանի գործը: Անվերդեանի հրատարակութիւնը դարձաւ միայն գրավաճառների պահեստներում, անօգուտ անցաւ և Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութեան Սայեաթ Նովայի տաղերի աժանագին հրատարակութիւնը (6 կուպ. արժէքով) և այդպիսով չը գնահատուեց ոչ միայն Անվերդեանի գործը, այլև մեծ բանաստեղծի երկասիրութիւնները:

1913 թիւը դարձման կէտ է ներկայանում Սայեաթ Նովայի

երկերի պատմութեան մէջ. շնորհիւ Թիֆլիզի Հայ Գրողների ընկերութեան նախագահ Յ. Թումանեանի եռանդուն ջանքերի՝ տեղի են ունենում դասախօսութիւններ, զեկուցումներ և երեկոյթներ աշուղների մասնակցութեամբ. միաժամանակ լոյս են տեսնում յօդուածներ, նուիրած Սայեաթ Նովայի գործին՝ Վերահրատարակւում է Ս. Նովայի երկերի ժողովածուն, որին կցւում է Ախվերդեանի առաջարանը և մի սխտեմատիկ բառարան, կազմուած Ախվերդեանի բառարանի հիման վրայ:

Հայ գրողների այդ խթանը անհետեանք չը մնաց. խորին հետաքրքրութիւն առաջացաւ վրաց գրականութեան մէջ և 1918 թ. հոշակաւոր աշուղի վրացերէն երգերի ժողովածուն արդէն արպագրուած էր Ի. Գրիշաշվիլիի խմբագրութեամբ և առաջարանով. Հետագայում Սայեաթ Նովայով զբաղւեցին Գ. Լիոնիձէ և պրոֆ. Մելիքսէթեկ, օգտուելով վրացական արիւնւային նիւթերից և 1930 թ. հրատարակեցին վրացերէն լեզուով առաջինը՝ «Աշուղ Սայեաթ Նովան», երկրորդը՝ «Ըր» էր Սայեաթ Նովան:

Մի նոր հրատարակութիւն Սայեաթ Նովայի հայերէն տաղերի տեղի ունեցաւ Երևանում 1931 թ. Գ. Լեոնեանի խմբագրութեամբ, ընդարձակ ներածական յօդուածով, ծանօթութիւններով, բառարանով և մատենագիտութեամբ:

Դեռ ևս անտիպ մնում են Սայեաթ Նովայի թուրքերէն տաղերը, բայց այդ ուղղութեամբ հետաքրքրւում են Խորհրդային Ազրբեյջանում և Հայաստանում:

Այսպիսով, մասնաւոր 1913 թւից սկսած, Ս.-Նովայի տութիւնը խոշոր քայլեր է արել և զարգացել է հոկայական հասկերով Գ. Լեոնեանի մատենագիտութիւնը 1931 թ. թւում է հարիւրից ավելի գործեր, գրած զանազան լեզուներով՝ հայերէն, վրացերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն և նուիրած Սայեաթ Նովային:

Բայց եթէ մենք ուշի ուշով հետեւենք այդ զարգացման, կը տեսնենք մի տեսակ վերացականացում, հարցերի խճողում և հե-

հացում բուն նիւթից: Այս դրութիւնը վեր սերբում է ինչպէս կենսազրականին, որտեղ մի շարք պատշաճներ են հրապարակ դրուած առանց դրական պատասխանի, այնպէս և լեզուին, որի վերծանելու միակ յուսալի միջոցը համարուած է սրամիտ ենթադրութիւնը:

Մեզ թւում է՝ անհրաժեշտ է վերադարձ դէպի Ախվերդեան. կենսազրականի մէջ՝ ի նկատի ունենալով չափաւորութիւն, լեզուի ոլորտում՝ գիտական ուսումնասիրութիւն, որի վրայ կանգնած էր Ախվերդեան, որի թերութիւնները բացատրուած են գիտական յուսալի միջոցների բացակայութեամբ այդ ժամանակ, բայց ոչ հետախուզողի անկարողութեամբ:

Սոյն մեր հրատարակութիւնը արւում է վերոյիշեալ գիտակցութեամբ և վերաբերում է գլխաւորապէս Սայեաթ Նովայի լեզուին: Իրապէս՝ էլ շատ աւելի կարեւոր է լեզուն, բանաստեղծի երկերը ուղիղ հասկանալու այդ միակ միջոցը, որի մէջ կուտակուել են բազմաթիւ սխալներ Ախվերդեանի ուսումնասիրութիւնից և կրկնապատկուել ու եռապատկուել են հետազայում: Հնարաւոր չափով ուղղել այդ սխալները և Սայեաթ Նովայի երկը դնել ըմբռնման մի նոր մակարդակի վրայ, ահա այս տպագրութեան *raison d'être* /

Այս նկատումներով կազմուած է մեր բառարանը, որտեղ օգտագործուած են Սայեաթ Նովայի փոխառած բառերի անմիջական աղբիւրները—բառերէն և պարսկերէն բառերը, բացատրուած են Ախվերդեանի անբացատրուելի համարուած բոլոր բառերը և սրբագրուած են ինչպէս Ախվերդեանի, այնպէս և հետագայ բառարանների բազմաթիւ սխալները:

Բ. ԱՐԲԱՀԱՍԵԱՆ



## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

**ՄԵՌՈՒՆԴԸ.**— Սայեաթ Նովայի առաջին կենսագրութիւնը տուել է մեզ Ախվերդեան, օգտուելով բանաստեղծի տաղերից, տարիքաւոր անձանց պատմութեանց և այլ աւանդութիւններից, որոնք մինչև այժմ էլ մնում են գլխաւոր աղբիւր Սայեաթ Նովայի կենսագրութեան: Ըստ այդ տեղեկութիւնների 18-րդ դարի սկզբների մի խեղճ հայ գալիս է Հալէքից բախտ սրտնելու Թիֆլիզում. նա մղձախ էր, ըստ վերջին ուսումնասիրութիւնների՝ Կարապետ անունով. նա ամուսնանում է հաւաքարցի Սառա անունով մի աղջկայ հետ. բանաստեղծը ինքը ևս հաստատում է այդ փաստը իր թուրքերէն ստանաւորներից մէկի մէջ, ստելով.

Վաթանքմ Թիֆլիզ դուր սամթի Գուրջիստան,

Անամ հաւաքարլու, աթամ հաւաքլու:

(Հայրենիքս Թիֆլիզն է կողմն Վրաստան, մէքս հաւաքարցի, հէքս հաւաքցի. Թարգմ. Ախվերդեանի):

Այս ամուսնութիւնից ծնւում է փոքրիկ Արուսիկը, ապագայ Սայեաթ Նովան, Թիֆլիզում, իսկ ըստ Լիոնիձէի, որ հիմնւում է Թէյմուրազ արքայազնի խօսքերի վրայ—Սանահնում: Մանդեան թւականն անյայտ է. ըստ Ախվերդեանի նա ծնուած պէտք է լինի 1712 թ., ըստ Լիոնիձէի և Մելիքսէթբէկի հաշիւների՝ 1718—22 թուականներին: Այդ հաշիւները բոլորն էլ կասկածելի են:

**ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.**— Թէ ինչ կրթութիւն է ստացել մանուկ Արուսիկը մինչև արհեստաւոր դառնալը, յայտնի չէ. ըստ վրացական տեղեկութիւնների<sup>1)</sup> նա Դարիանի վանքում պէտք է սովորած լինի, բայց այդ անհնարին է, որովհետեւ ինչպէս պարզւում է, այդ վանքը հիմնել է Իրակլի Բ-ի կին Դարիա թագուհին այն ժամանակ, երբ Սայեաթ Նովան արդէն հոգեւորական էր: Յամենայն դէպս

1) Դրոէքս 1878 թ. № 119.

Սայեաթ Նովայի վանքում կրթւած լինելը անհաւանական չէ, բայց թէ ինչ վանքում—վրացական թէ հայկական և յատկապէս որ վանքում, այդ մասին ոչինչ չգիտենք։ Այսպէս թէ այնպէս, Սայեաթ Նովայի կրթութեան շափի մասին պէտք է եզրակացնել նրա երկերից, իսկ այդ երկերը տրամադրում են մեզ ենթադրել, որ նա պարզէտ է եղել երեք լեզուով՝ հայերէն, վրացերէն և պարսկերէն, բայց չը նայած իր գործածած փայլուն պատկերներին, գուրկ է եղել սխատմատիկ կրթութիւնից և նրա կրթութիւնը եղել է զրլ-խաւորապէս հետեւանք ինքնադարգայման։

**ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԸ.**— Թուրքերէն բանաստեղծութիւններից մէկում Սայեաթ Նովան ասում է. լրացաւ իմ 12 տարին, ինձ վարպետին ուսման տուին. լրացաւ իմ 13 տարին, ես լրիւ սովորեցի արհեստը. լրացաւ իմ 14 տարին, վարպետիս խալաթ նուիրեցի (այսինքն վարձատրեցի թանկագին ընծայով—հետեւանք գործի աւարտման)։ Այստեղից պարզ է, որ նա եղել է արհեստաւոր և կատարեալ հաւանականութեամբ՝ ջուլհակ, ինչպէս այդ հաւաստիացնում է Ախվերդեանը, հիմնուելով իր լսածների և աւանդութեան վրայ և իհարկէ, գիտակցելով իր ասածը։ Իսկ զանազան կարծիքներ, ինչպէս օր. որ նա հիւսն էր, որովհետեւ գործ է ածում դուրգար բառը (ԼԲ. 11 ծուռն փէտըն չի դըրըստի ռանդան, դուրգար Սայեաթ Նովա), չեն զիմանում քննադատութեան, որովհետեւ դուրգար գործ է ածուած փոխաբերական իմաստով, ինչպէս այդ նկատել է դեռ Ախվերդեանը. այսպէս և վաճառականի վարկածը. ի դէպ, վաճառականութիւն սովորողը կարիք չունէր «վարպետին» խալաթ նուիրելու։ Յամենայն դէպս, Սայեաթ Նովայի հիմնական արհեստը պէտք է ընդունել ջուլհակութիւնը, որից զատ նա կարող էր, որպէս ընդունակ մարդ, այլ արհեստներ ունենալ։

Ջուլհակութեան մէջ Սայեաթ Նովան ըստ Ախվերդեանի այնքան է առաջադիմել, որ ինքը մի մեքենայ է հնարել, որով կրտաւը փողոցում հինելու փոխարէն հինել և գործել է իր տանը։ Բայց նա վաղ զգացել է իր մէջ աշուղի կոչում, նուիրուել է այդ

գործին և ու. Կարապետի կարողութիւնով սովորել է քամանչէն, շոնգուրն ու (տ)ամբուրէն և հրապարակ դուրս եկել Սայեաթ Նովա կեղծ անունով:

**ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ.**— Շուրջ 1750 թ. մենք տեսնում ենք Սայեաթ Նովային Կախնթիայի թագաւոր Իրակլի Բ.ի արքունիքում: Մեկնասաների բանաստեղծներին հովանաւորելու սովորութիւնը շատ հին է և տարածուած թէ Արեւելքում և թէ Արեւմուտքում. բայց նա յատկապէս ընդունուած էր Պարսկաստանում, որտեղ համարեա բոլոր նշանաւոր բանաստեղծները եղել են արքունիքներում որպէս շա'էր (բանաստեղծ) կամ մալէքօշօ'արա (բանաստեղծների արքայ). այսպէս էր և Վրաստանում, որտեղ Սայեաթ Նովայից առաջ պալատական աշուղ էր Վախտանգ Զ. Թագաւորի մօտ հռչակաւոր Նաղաշ Յովնաթանը, որ աւելի վաղ նոյն պաշտօնն ունէր Երևանի խանի մօտ:

Վրաց արքունիքում շատ գորեղ էր պարսկական ազդեցութիւնը, որ տարածուած էր և պալատական երգերի և երաժշտութեան վրայ. Ս. Նովան պազատ ընդունուեց, որովհետեւ յարմարեցրել էր վրացական երգերը պարսկական եղանակներին:

**ԾԱՂԴԱԾՈՒ.**— Ըստ վրացի բանասէր Լիոնիձէի՝ Սայեաթ Նովան ոչ միայն պալատական երգիչ էր, այլև ծաղրածու: Նա երկու վկայութիւն է բերում Սայեաթ Նովայի երգերից, որտեղ նա ասում է ճես ծաղրածու եմք, որ սակայն գունազեղութեան համար զործածուած է: Լիոնիձէն յիշում է Խելաշվիլիի վրայ, որ խօսակցութիւն է ունեցել Սայեաթ Նովայի հետ. վերջինս ասել է, որ նրան բոլորը սիրում էին ի միջի այլոց խումբորայի համար. Լիոնիձէն խումբորա բառին ուղղուած է ծաղրածու նշանակութիւն տալ. մինչդեռ այդ նշանակում է զուարճութիւն, կատակ: Այնուհետև Լիոնիձէն պնդում է, որ Սայեաթ Նովան հագնում էր մէջիսների ժամանակ կարմիր զոյնի հագուստ, մի բան, որ ինքնին ոչ մի ապացոյց չի ներկայացւում, եթէ նկատի ունենանք այդ շրջանում կարմիր հագուստների տարածուած լինելն Արեւելքում:

Սայեաթ Նովայից երկու ծաղրական ոտանաւոր է Թափե վրացերէն լեզուով. մէկում նա կծու, նոյնիսկ կոպիտ կերպով ծաղրում է (Մ)Դիւանբէկ Ղափլանիշվիլին, որ մի թոյլ, համարեա անգամայոյժ մարդ էր և ամուսնանում էր իշխան Բազրատին Մուխրանցու պերճահասակ զեղատեսիլ աղջկայ հետ Երկրորդը վերաբերում է հռչակաւոր Անտոնիոս կաթողիկոսին (1720—1788), որ մի կրթուած իշխանացն էր և 24 տարեկան հասակում (1744 թ.) կաթողիկոսացել էր: Նա մօտիկ էր կաթայիկներին հետ, այդ պատճառով Մցխեթի եկեղեցական ժողովը 1755 թ. զանրեկէց արեց ներան. բայց Իրակլին 1762 թ. նորից նրան կաթողիկոսութեան հրաւիրեց: Սայեաթ Նովայի ոտանաւորը հետեւեալն է.

Դիմում Անտոնիոսին. Սրբազան կաթողիկոս

Քեզ է պատկանում մեր յարգանքը.

Ասում են զրպանդ լիքն է. այդ մնց պատահեց.

Անտոնիոսի պատասխանը. Ուղղեցէք կրծքիս մահարեր հրացանը.

Ինձ սուֆի (ազատախոհ) են կոչում.

Ես կորցրի խելքիս տոպրակը. այդ մնց  
պատահեց.

Մի կողմ թողնելով Սայեաթ Նովայի դետպանութեան հարցը, որ ծագել է զլիսաւորապէս վրաց զրականութեան մէջ և անդրադարձել է մեր զրականութեան մէջ ևս, մանաւանդ թամբուրի Արութինի վերսիան, որի համեմատ Նադիր շահի հետ Հնդկաստան զնացող և թամբուր նուագող Արութինը կարող էր Սայեաթ Նովան լինել, անցնենք Սայեաթ Նովայի շնորհագուրկ լինելու և պալատից հեռանալու հարցին:

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ՇՆՈՐՀԱԶՈՒՐԻ — Ինչպէս պարզ է Սայեաթ Նովայի ծաղրական բանաստեղծութիւններից, նա շատ կծու լեզու ունէր, որ շատ անգամ դառնում էր այս կամ այն աւագանու դէմ: Այսպէս 1751 թ. Թելաւում նա արքայապետ Վախտանգին ուղղում է մի զուեկտական ոտանաւոր նրա բանաստեղծին հասցրած ինչ որ վիրաւորանքի հետեւեալով. այդ ոտանաւորի մէջ կային այսպիսի

տողեր. Եւջերն ինչ կանեն ստներին հինա... Թող մարդ չասի մի  
է էս տղան. այբուբենը գիտեմ, դրանով եմ առաջի Անունըս Արու-  
թին, ես Սայեաթ Նովա, էնպէս խօսք կասեմ, որ երկինքը կը գո-  
ռայ: Թագաւորը զայրացաւ աշուղի վրայ նրա այս յանդգնութեան  
համար և հրապարակ դրուեց Սայեաթ Նովային պալատից հեռացնե-  
լու հարցը: Հետեանքը եղաւ Վրոն էն գլխէն իմաստուն իս՝ հո-  
յակապ քերթուածը 1763 թ., որտեղ ներքող շապլելով Իրակլին,  
Սայեաթ Նովան խնդրում է, որ Վաստժու սէրն կանչողի պէս՝ զըռ-  
նից նրան ջուղար չանի:

Այսպէս թէ այնպէս, Սայեաթ Նովային ներուում է յանցան-  
քը և նա մնում է իր պաշտօնի մէջ Թելաւում, ապա Թիֆլիզում,  
մինչև որ տեղի է ունենում երկրորդ և այս անգամ կատաստրո-  
ֆիկ ընդհարումն թագաւորի հետ: Ինչ էր առիթը այս դժբաղդու-  
թեան, յայտնի չէ. միայն յայտնի է Սայեաթ Նովայի հետագայ մի  
վրացերէն ոտանաւոր, որի մի տողը հաւանականաբար այս դէպ-  
քին է վերաբերում. «Մի Սայեաթ Նովա, դու լեզուով բազմացրիր  
քո վշտերը, արդ պատրաստ եղիր անախորժութիւններին»: Վերաբե-  
րում է այս Անտոնիոս կաթողիկոսի դէմ գրած պատկիլին, թէ այլ  
բան է ակնարկում, յայտնի չէ. միայն այս անգամ նա հեռացուեց  
անպատիւ կերպով, անուանուելով մաշա, հոտած ջրհոր: Հաւանա-  
կանաբար այդ հեռացումը արդիւնք էր ինտրիգների, այդ են կար-  
ծեն ցոյց տալիս հետեւալ տողերը.

Դատ արա ինձ, Տէր, չէ որ դու թագաւոր ես,

Ամբողջ Վրաստանի սրտով սիրածն ես (վրացերէն ոտանաւոր).

Սայեաթ Նովան շարունակում է.


Թէկուզ էլ որ ջարդեն կող ու կշտերս,

Կենդանի գլխով չեմ բաժանուելու.

Թէ Բուռն ինձ չի խեղդիլ, ծովը կը նետուիմ,

Երանի դուրս չանէիր, մի լաւ ձեռքէիր:

Բայց դուրս անելն արդէն իրողութիւն էր. շուրջ 1762 թ.  
Սայեաթ Նովան հեռացաւ գլխիկը, բայց ոչ թէ նոր իշխանաւոր-



ների մօտ՝ նոր փառք որոնելու, այլ վերջ ի վերջոյ կրօնաւորի հաս-  
մեստ օթեանը՝ մենաստան:

**ՍԱՅՆԱԹ ՆՈՎԱՑԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ.** — Արժէ մի քանի խօսք  
էլ տեսի այն անձնաւորութեան մասին, որ այնպէս ճարպկօրէն հը-  
րապուրել է Սայեաթ Նովայի քնարը և այնպիսի սրտամալիկ մըր-  
մունչներ դուրս կորզել նրանից:

Այդ անձնաւորութիւնը, որին Բրիւսով բարձրացրել է մին-  
չև արքայազատեր տատիճան, անյայտ անձնաւորութիւն է. նա ե-  
ղել է վայելչակազմ և դեղատեսիլ. Սայեաթ Նովայի հայերէն ո-  
տանաւորներից պարզ է, որ նա յաճախ խուսափել է բանաստեղծի  
ընկերակցութիւնից, իսկ վրացերէն ոտանաւորները նրան ստորա-  
ցընում են մինչև տափաւոր կնոջ տատիճան: Աշուղ Սկանդար Նո-  
վայի (1850 - 1917) վկայութեամբ Սայեաթ Նովայի սիրուհին գո-  
յութիւն ունէր նրա ամուսնացած շրջանում ժմէ փռանդ (կաթուղիկ)  
Սոլօյի աղջիկ, անուամբ Տալիթա՝<sup>1)</sup>. ըստ Գրիշաշվիլու նոյնպէս  
Սայեաթ Նովայի սիրուհու անունը Տալիթա էր, քուրճու կին, իսկ  
ըստ այլ աւանդութեան՝ Սոնա: Յամենայն դէպս հայոց գրականու-  
թիւնը մեծապէս երախտապարտ է անյայտ գեղեցկուհուն:

**ՍԱՅՆԱԹ ՆՈՎԱՆ ԿՐՕՆԱԻՈՐ.** — Անվերգեանը տեղեկաց-  
նում է, որ Սայեաթ Նովան թողնում է աշուղութիւնը դեռ կնոջ  
կենդանի ժամանակ, իսկ նրա մահից յետոյ՝ մօտ 1770 թ. մտնում  
է որպէս կրօնաւոր հաղպատի վանքը: Ապա պատմում է, թէ ինչ-  
պէս Սայեաթ Նովան լսելով, որ մի երեւելի օտարական աշուղ Թիֆ-  
լիզ է եկել և վախենալով, որ մի գուցէ իր սիրած քաղաքը յաղ-  
թուի աշուղական բափ մէջ, չը նայած ձմեռուայ բուքին, Թիֆլիզ  
է սլանում և աշխարհականի շորեր հագած գնում է մրցարանը:  
Մրցութիւնն սկսւում է. յաղթանակը մօտ էր, երբ վրայ են հաս-  
նում Դաւիթ եպիսկոպոսի մարդիկ, որոնք փնտռում էին անհնա-  
ղանդ վանականին:

Սայեաթ Նովայի հոգեորական շրջանի մասին Անվերգեան  
ոչ մի տեղեկութիւն չի տալիս, մինչդեռ նորագոյն ուսում-

1) Յ. Զաւրեան, Սայեաթ Նովա, Վէս Ե. էջ 25.

նասիրութիւնները պարզու՛մ են հետաքրքիր փաստեր, Յայտնի բանասէր Հր. Աճառեանը 1905—6 թ. Թաւրիզում ուսումնասիրում է մի ձեռագիր, որ ներկայումս էջմիածնում է № 1626 և ունի այսպիսի տողեր. «էջ 277 ս. Թուին Հայոց ՌՄԺԾ. գիր ամբուոյն Յօնէ, ասանուտէն Այծեղջիւրն է... զրեցաւ ի Կախայ քարվանսարէն: Ո՛վ ընթերցող յիշեայ զգծող զրոյս մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Սայեադ-Նովա կոչէն և հայրն իմ մահտեսի Կարապետն և մայրն իմ Սարրայ և դուք յիշեալ լինիք առաջի Աստուծոյ ամէն»:

Ոչ Հր. Աճառեանը և ոչ նրա ժամանակակիցները ուշադրութիւն չեն դարձրել այս նշանաւոր հատուածի վրայ և միայն 1929 թ. պրոֆ. Լ. Մելիքսէթբէկը իր Թիֆլիզում և Երևանում կարդացած գեկուցազրի մէջ հաստատեց Սայեաթ Նովայի և Ստեփանոս քահանայի նոյնութիւնը: Ուրեմն նախ քան կուսակրօն լինելը Սայեաթ Նովան քահանայ էր Կախեթի Կախ աւանում: Վրաց ազգիւրները ևս հաստատում են Սայեաթ Նովայի քահանայութիւնը:

Առանձնապէս կարևոր է այդ մտքով վանական Իոնէ Խելաշվիլու տեսակցութիւնը Սայեաթ Նովայի հետ Հաղպատում, ուր Սայեաթ Նովան հիւրասիրում է նրան, ապա չոնգուրը պատից ցած է առնում և նուազում ու երգում է իր դժբաղդութիւնը (վրացերէն լեզուով), որ նա աշխարհականից քահանայ դարձաւ և մանաւանդ արեղայ դարձաւ:

Ինչ վերաբերում է Սայեաթ Նովայի եպիսկոպոսութեան հարցին, որ հրապարակ դրեց Յ. Թումանեանը, ըստ որի նա ձեռնադրուել է եպիսկոպոս Դաւիթ անուանով և Իրակլիի հովանաւորութիւնն է վայելել, թէպէտ և ցոփ կեանք է ունեցել, այդ հարցը հիմնովին ջրու՛մ է հետագայ ուսումնասիրութիւններով:

**ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱԻ ԸՆՏԱՆԻՔԸ.**— Սայեաթ Նովայի սիրահարական գիրքը նրան յաճախ հիասթափումների առաջ էր կանգնեցնում, որ անգրագիտնում էր նրա ստեղծագործութիւնների վրայ. այսպէս նրա ԼԴ. տաղը յոռետեսութեան մի շտեմարան է

ներկայացնում: Վերջապէս խզելով սիրուն հետ 1759 թ., նա տնտեսանում է Շափիրզենց Մարմարայի հետ. այդ ժամանակուանից մարում է Սայեաթ Նովայի բանաստեղծական կրակը: Այս տնտեսութիւնը երկարատե կի լինում, կինը մահանում է 1768 թ.ին: Ախվերդեանը դառել է նրա գերեզմանը Խօջենց վանքի գերեզմանատանը հետեւալ մակագրութեամբ. «Քրօնիկոնի 456 էս գերեզմանում կամ Սայեաթ Նովու կողակից Մարմարն. ինձ սղորմի ասէք»:

Մարմարը Սայեաթ Նովային չորս զաւակ պարգեւեց. Մելիքսէթ՝ ծն. 1760 թ., Օհան կամ Իվան ՝ Պետերբուրգում 1823 թ., Սառա և Մարիամ: Զաւակները բոլորն էլ ամուսնացած էին: Մելիքսէթի որդին էր Թիֆլիզի յայանի քահանայ Տէր Մովսէս Սայեաթեան, որ տուեց Ախվերդեանին Սայեաթ Նովայի տետրակը և զանազան տեղեկութիւններ հօր մասին: Սայեաթ Նովայի երկու որդիներն էլ ժառանգել էին հօր ընդունակութիւնները. Մելիքսէթը Մօզդոկ էր տարել իր հօր դաֆթարն ու սազը և երգում ու նուագում էր մտերիճների շրջանում, իսկ Օհանը վրաց արքայազնի մօտ էր Պետերբուրգում որպէս սագանդար. նա յիշողութեամբ զրի առաւ հօր տաղերը և այսպէս կազմուեց մի երկրորդ դաֆթար, որ պահւում է գիտութեանց ճեմարանի Ասիական մուշէյում:

**ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ.**— Սայեաթ Նովայի մահուան մասին Ախվերդեանը գրում է. «Շատին յայանի է Թիֆլիզում, որ Սայեաթ Նովէն՝ խելով աղա Մահմադ խանի հեծելազօրի Վրաստանի սահմանին մօտենալն, միտն է բերում իր զաւակներուն (ունեցել է երկու աղայ՝ Մելիքսեղ, Օհան ու երկու աղջիկ՝ Սառա ու Մարիամ) ու զալիս է Թիֆլիզ: Էս տեղաց ուղարկում է նրանց Մօզդոկ, ուր սրանք գցում են իրանց հաստատ ընակութիւնն: Սայեաթ Նովէն դնում է իր զաւակներուն ճանապարհ թէ չէ, պարսիկքն մտնում են Թիֆլիզ: Հաղապատու առաջնորդարանն հէնց բերդի տակն ըլելով՝ թշնամիքն տուն են ընկնում եկեղեցու դաւիթն, ու կցում են կոտորելն ու կողոպտելն: Սայեաթ Նովուն վրայ են հասնում եկեղեցում աղօթք անելիս: Սրանից պահանջում են դուս

դալն ու հաւաստն ուրանալն, բայց կրօնաւորն պարսից թրերու տակն աւանդում է հոգին՝ ասելով:

Զըխմանամ քիլիսադան, դամմանամ Իսադան (եկեղեցուց չ'եմ դուս գալ, չ'եմ ուրանալ Յիսուսին), էսպէս խալիսի նոքարն նահատակուած է որպէս ծառայ Աստուծոյ սեպտեմբեր ամսին 1795-ին<sup>1</sup>:

Մահուան այս սրտառուչ վարկածը ընդունուած էր բոլոր ուսումնասիրողներին կողմից. ցոյց էին տալիս բանաստեղծի գերեզմանը Բերդի եկեղեցու, որտեղ հին գերեզմանի վրայ նոր դամբարան է կառուցուած 1914 թ. Կովկասեան Հայ դրոշմների ընկերութեան կողմից:

Սակայն վերջերս գտնուեցան դոկումենտներ, որոնք օգտագործուած են Լիոնիձէի և Մելիքսէթբէկի կողմից և յաւակնութիւն ունեն հերքելու Ախվերդեանի վերսիւն:

Մի կողմ թողնելով մի քանի յիշատակարաններ, որոնք խօսելով Աղա Մամադ շահի արշաւանքների մասին, չեն յիշում Սայեաթ Նովայի սպանութիւնը (որովհետեւ չը յիշել<sup>1</sup>) սպանութիւնը չի նշանակում, թէ նա չի սպանուել, յիշենք Պլատոն Իոսսելիանիի հաւաստիացումը, որի համաձայն Ս. Նովան վախճանուել է 1801 թ. և արքայազն Իօանին, Կալմասորա վէպի հեղինակին, որ մանրամասն պատմում է խելաշվիլու այցելութեան մասին Սայեաթ Նովային Հաղպատայ վանքում 1800 թ. (տ. վերը):

Լիոնիձէն ընդգծում է, որ Իիոսելիանին ծնուել է 1809 թ. և բարեխիղճ պատմիչ է. բայց Ախվերդեանն էլ ծնուել է միայն 9 տարի յետոյ՝ 1818 թ. և բացի բարեխիղճութիւնից և այլ յատկութիւններից անհունապէս աւելի շահագրգռուած է Սայեաթ Նովայի կեանքի ճշգրիտ վերարտադրումով: Իսկ խելաշվիլու գէպքը

1) Սայեաթ Նովայի մասին ներկայումս է, որ ունենք բարձր համարում և ենթադրում ենք որ բոլորն էլ պարտաւոր էին յիշել նրան. մասնակցները նրա վրայ նայում էին որպէս մի հասարակ վանականի վրայ, որին կարիք չը կար տարբերել միւսներից:

կարող էր վաղուց տեղի ունեցած լինել, բայց հեղինակը վերագրել է 1800 թւին, Յամենայն դէպս այս փաստերը որքան և զօրեղ, չեն կարող ծածկել Սայեաթ Նովայի որդի Օհանի կարծիքը և զգացմունքները: Սա Ասիական թանգարանում գտնուող Սայեաթ Նովայի տաղերի դաւթարի մէջ, որ գրել է ինքը 1823 թ., գրել է Ծ. աաղի համար հետեւեալ ծանօթութիւնը. «Այս մուխամազը Սայեաթ Նովան յօրինեց, որ շահը (Աղա Մահմադ խանը) պէտք է գայ մեծ ժխորով նրա գերեզմանի վրայ. այս է պատճառը, որ նրան մահ մաս աբխնա: Մուխամազի այդ վերջին տողերը հետեւեալներն են.

Աշխարհումըս քանի սաղ իմ, Սայեաթ Նովու գերեզմանն

Շահաբառի լալի նրման շահի վերգալուն մընում է:

Այս վկայութիւնից յետոյ զարմանալի չէ Գ. Լեոնեանի վրդովմունքը, որ Սայեաթ Նովայի մահը քաջքշում են մինչև 1801 թւականը, բացասելով նրա նահատակութիւնը, որի մասին սրտաւուչ կերպով վկայում է որդին և տարօրինակ է, որ ըստ պ. Զաւարեանի՝ հօր սպանուելու աւանդութիւնը շոյում էր Օհանի ինքնասիրութիւնը, որ մի անգամ միայն վախճուելով յիշում է այդ մասին դաւթարի մէջ, վախենալով, որ արքայորդիները կը նկատեն, կարծես թէ Օհանը խաղ էր անում իր հօր յիշատակի հետ և կարծես թէ մի անգամ միայն գրուածը չի նկատուել:

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱԹԻ ԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻԻՆԸ.— Սայեաթ Նովայի անունը զանազան կերպ են ստուգարանում. մենք ևս տուել ենք Սայեաթ Նովայի անունն ստուգաբանութիւնը Վէմէի 1934 թ. 2. համարի մէջ և (սայէդ) և յ (նովա) բառերից թիչխան երգերի և կամ տաղասացութեան վարպետ նշանակութեամբ: Այս բացատրութիւնը շուտով դադարեց մեզ բաւարարելուց և մենք կանգ առանք այլ բացատրութեան վրայ և յարմար առիթի էինք սպասում երևան հանելու Սայեաթ Նովայի անունն երկրորդ բաղկացուցիչ մասն է ոչ թէ յ (նովա) — նուազ, եղանակ, այլ և (նովէ) է, որ նշանակում է թոռ. այդ է թելադրում

մեզ նոյն բառի ներկայութիւնը և այլ աշուղներէ անուններում,  
ինչպէս Քիչիկ Նովա, Գիւրջի Նովէ, Սկանգար Նովա և այլն: Եւ  
(նոյն) բառն աղտեղ իմաստ չունի, մինչդեռ նովէ (ճիշտ արտա-  
սանութեամբ գործածուած Գիւրջի Նովէ բառում) ունի կատար-  
եալ իմաստ: Այսպիսով Սայեաթ Նովա կը նշանակէ Սայեաթի թոռ  
կամ Սայեաթեան: Այժմ կը մնայ պարզել բառի առաջին բաղկա-  
ցուցիչ մասը - Սայեաթ: Սա, համաձայն իր գրութեան ձևերին, կա-  
րող է լինել ۛ (սայէդ, տէր, իշխան, հրամանատար, պետ) կամ  
ۛ (սայյադ) որսորդ բառը: Այն չափով, որ չափով ընդունւած և  
տարածուած է «Սայեաթ Նովա» ձևը, Սայեաթ հաւանականաբար  
համապատասխանում է սայյադ (որսորդ) բառին և որչափով ուշա-  
ղըրութիւն դարձնենք «Սէյիդով» ձևի վրայ, որ գործ էին անում  
Սայեաթ Նովայի ժառանգները, որոնք ի բառը կը լինի Սայէդ,  
ըստ թուրքական արտասանութեան՝ սէյիդ. թւում է թէ նախնա-  
րելի է երկրորդ ձևը, եթէ ի նկատի ունենանք «Սայեաթի» փո-  
փոխութեան յեղեղուկ հանգամանքը: Նման եզրակացութեան յան-  
դել է և Գ. Լեոնեանը, միայն գործողութիւն կատարելով այնպիսի  
բառերի օգնութեամբ, որոնք ըստ արտասանականին գոյութիւն  
չունեն պարսկերէն լեզուում: Նեվա կամ Նյուվա (= ۛ Նովա),  
Նեվայի, Նեվ, Նեվի (= ۛ, Նով) Նեվա, Նեվասը (= ۛ, - Նովէ):

**ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԸ.**— Սայեաթ  
Նովայի երկերի ամբողջական հրատարակութիւնը դեռ չունենք,  
թուրքերէն երգերը դեռ չեն տպագրուած: Երա հայերէն, վրացե-  
րէն և թուրքերէն երգերը զտնւում են գլխաւորապէս երկու զու-  
թարներում և մասամբ զանազան ձեռագրերում:

Ա. Դաւթար.— Երևանի գիտական թանգարան, դրական-պատ-  
մական բաժին, նիւթ № 2367/64. 140 էջ. 16 1/2 22 սմ.: Այս դաւ-  
թարը նիւթ է ծառայել Ախվերդեանին նրա հրատարակութեան  
համար. դաւթարն Ախվերդեանին տուել է բժիշկ Յովն. Գոն-  
դոյեան, որ ստացել էր Սայեաթ Նովայի թոռ Զգրաշէնի եկե-  
ղեցու աւագ քահանայ Տէր Մովսէսից. դա ըբրել էր դաւթարը

Մոզգոկից, իր քրոջ մօտից:

Ախվերդեանի նկարագրից երևում է, որ դաւթարը նրա ժամանակ էլ եղել է պակասաւոր (ունեցել է 73 քառածաւ թերթ, այսինքն 146 էջ. ներկայումս ունի 70 թերթ—140 էջ), սկսուել է թուրքերէն տաղերով՝ թւով 115. առաջին խաղերը գրած են հայկական բոլորգրով, իսկ միւսներին՝ միայն առաջին տները. մնացածը—անվարժ նոտրգրով: Բայց խաղերի մեծ մասը գրած է վրացերէն բաւական վարժ նոտրգրով և ամբողջը մի մարդու ձեռք է: Խաղերի տակ կամ լուսանցքում կայ ծանօթութիւն, որ խաղն Աւրուբինի կամ Սայեաթ Նովու ասածն է և այլն: Թուրքերէնից յետոյ գալիս են հայերէն տաղերը, բոլորն էլ գրած վրացերէն տառերով:

Ոչ թուրքերէն և ոչ հայերէն խաղերը չեն դասաւորուած տարիների կարգով. դաւթարն ունի յիշատակարան. «էս խաղերն դիփ Սայեաթ Նովու ասած են. սփ ուղղահաւատք ու քրիստոսասէրք. սրա գրողն ու էս խաղերու ասողն շատ օր մթնեցրել է ու գիշեր է լուսացրել էս խաղերու ասելումն. հիմի սրա կարգողներ, էս աղաչանքն եմ անում, որ սրանց ասողին լաւութենով ու ողորմի տալով յիշատակէք ու դուք էլ Գրիստոսի բերանով օրհնուիք: Ծն Պենդելինց Եօվանէն գրեցի էս աղաչանքս մայիս 1-ին քրօնիկօնի 153ին, որ է 1765 փրկչական թիւն»:

Երբ երգերը հրատարակուած էին Ախվերդեանի ձեռքով, ժառանգները յետ վերցրին դաւթարը, մինչև որ 1913 թ. Կովկասեան Հայոց գրողների ընկերութիւնը ստացաւ դաւթարը Սայեաթ Նովայի ժառանգներից. ներկայումս դաւթարը, ինչպէս վերը յիշուեց, գտնւում է Երևանի Թանգարանում: Տեսորակն այժմ համեմատած Ախվերդեանի ձեռքի տակ ունեցածին՝ պակասաւոր է, պակսում է 7 երգ:

Դաւթարը կազմուած է բուն դաւթարից և նրան կցած տեւորակներից, որոնք գրի է առել ինքը, Սայեաթ Նովան, ինչպէս վերկայում է Պենդելինց Եօվանէն և ինչպէս երևում է ուղղութիւններից,

որ արուած են, ի հարկէ, հեղինակի ձեռքով Բուն դաւթարը արտադրութիւն է, արուած մասամբ Սայեաթ Նովայի ձեռքով, մասամբ ուրիշ մէկի՝ նրա պատուէրով:

Բ. Դաւթար. — Լենինգրադի գիտութեանց ճեմարան, Ասիական թանգարան, վրաց ձեռագրերի բաժին, նիւթ № 222. գրուած է բանաստեղծի որդի Օհանի ձեռքով Պետերբուրգում 1823 թ. վրացերէն, այսպիսի յիշատակարանով. «Այս մատենը պատկանում է Վրաստանի թագաւորի որդի Թէյմուրազին, որը զրի առաւ Սայեաթ Նովայի որդի Ծովանէն իր հայր Սայեաթ Նովայի երգերը, իրրն նրան յիշատակաւ: Այդ դաւթարի վրայ առաջին անգամ ուշագրքութիւն գտրձրեց ակադ. Մառ 1889 թ. ապա նրանով զբաղուեց Գ. Ասատուրը, 1892 թ. արտադրելով 8 հատ մինչ այդ անյայտ հայերէն ոտանաւորներ, սրոնք հետագայում տպագրութեան յանձնեց Ազգագրական հանդէսի X գրքում:

Բացի Սայեաթ Նովայի երգերից դաւթարի վերջում կան Օհանի ուսաներէն բաւական անշնորհք խաղերը՝ երգերը դասաւորուած են հետեւեալ ձևով. թուրքերէն, վրացերէն, ապա հայերէն երգերը: Գրութիւնը վրացերէն է, բաւական վարժ ձեռքով, Հայերէն երգերի թիւն է 28, որոնցից 18-ը յայտնի են Ախվերդեանի հրատարակութիւնից. վրացերէն երգերի թիւն է 15, թուրքերէնինն անյայտ է:

Գ. Մասնատր երգարաններ. — Սայեաթ Նովայի երգերը բացի դաւթարներից գտնուում են և մասնատր երգարաններում. այսպիսի դաւթարներից հանած և տպագրուած էին Սայեաթ Նովայի վրացերէն երգերը նախ քան դաւթարն օգտագործելը: Ախվերդեանը ևս ձեռքի տակ ունեցել է այդպիսի նիւթեր և յաճախ օգտուել է նրանցից:

Այսպիսով Սայեաթ Նովայի թողած ժառանգութիւնը հետեւեալն է.

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԳԵՐ Ա. դաւթարում Ախվերդեանի հրատա-  
րակած 46

Գ. Ասատուրի յայտնաբերած «Մողնու սուրբ Գէվուրք» 1 47  
(մի երգ էլ Գ. Լեոնեանի յայտնաբերած՝ թուրքերէն-  
հայերէն)

|                                                   |          |
|---------------------------------------------------|----------|
| Բ. դաւթարում Գ. Ասատուրի յայտնաբերած . . . . .    | 8        |
| «Թիֆլիսեցոց մատաւր կեանքը» զրբից . . . . .        | 2        |
| «Կովկասի լրաբեր» և «Մարտակոչ» թերթերից . . . . .  | 3        |
| «Գրական թերթից» Գ. Թարվերդեանի գրի առած . . . . . | 1        |
|                                                   | <hr/> 60 |

ՎՐԱՅԵՐԷՆ ԵՐԳԵՐ

Գրիչաշվիլու հրատարակութեան մէջ զանազան աղ-  
բիւրներէից . . . . . 28

Նոր երեան եկած . . . . . 6 34

ԹՈՒՐԹԵՐԷՆ ԵՐԳԵՐ Ա. դաւթարում . . . . . 115

(Գուցէ Բ. դաւթարում կան այլ երգեր, որոնք 209 երգ.  
այս թւի մէջ չեն մտնում)։

## ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԱՆՀԱՐԱՋԱՏ Տ Ա Ղ Ե Ր

Բանասէր պ. Ա. Երեմեանը «Կեանք և Արուեստ» ամսագրի 1938 թ. դեկտեմբ. №-ում հրատարակեց Սայեաթ Նովային վերապրուած 6 ոտանաւոր, որոնք մենք վերադառնալով ենք սոյն դրքում; բայց որոնցից 5-ը անհարազատ են, իսկ մէկը դաւթարից, որի հայերէն մասը նախօրօք հրատարակուած էր Ա. Երեմեանի կողմից «Պրոլետար» թերթում, իսկ Գ. Լեոնեանի հրատարակութեան մէջ տպագրուած է խառն թուրքերէնի հետ:

Պ. Երեմեանը հրատարակելով այդ ոտանաւորները, գտնում է («Կեանք և Արուեստ», նոյեմբ. 1938, էջ 230), որ նրանք վաւերական են: Վայժմ այստեղ առաջ է գալիս մի հիմնական հարց. իսկապէս Սայեաթ Նովայի գրչին են պատկանում այդ երգերը. երեք էական յատկանիշներ հաստատում են այդ հանգամանքը. առաջին՝ ամեն երգի վերջում յիշատակուած է աշուղի անունը— ՍԱՅԻԱԹ ՆՈՎԱ, Երկրորդ՝ երգերը շարահիւսուած են Թիֆլիզի բարբառով, Երրորդ՝ գերիշխողը Սայեաթ Նովայի աշուղական արուեստն է: Դժբաղդաբար 1) իմիտասիոն կատարողները շատ լաւ են հասկանում, որ ամեն երգի վերջում պէտք է յիշատակել հեղինակի անունը. 2) Թիֆլիզի բարբառով միայն Սայեաթ Նովան չի, որ գրել է. 3) գերիշխողը յամենայն դէպս Սայեաթ Նովայի աշուղական արուեստը չէ, որ բովանդակում է երգերի ձևերը, տաղաչափութիւնը, ոճը, պատկերները:

Արդ, ոտանաւորների ձևը բացարձակապէս Սայեաթ Նովայինը չէ. 1) Սայեաթ Նովայի երգերն ունեն որոշ աշուղական երգերի ձևեր՝ մուխամմազ, մուխամմազ-բայաթի, դիբայի կամ դիբայի ու ենգիդունիայի հանգով, եարանա, բարիթաւոր, Թասիբ,

վարսող, և այլն և բոլորը խիստ ճշտօրէն պահպանում են այդ ձեւերը, մինչդեռ պ. Երեմեանի հրատարակած ոտանաւորները միանգամայն զուրկ են այդ ձեւերից:

3) Յանդաւորումը Սայեաթ Նովայի մօտ կատարւում է կատարեալ օրինաչափութեամբ. այսպէս մութամմաղներում և այլ երկարաշունչ երգերում Ա. տան բոլոր տողերը միատեսակ են յանգաւորութեամբ, մնացած տների առաջին երեք տողերը միատեսակ են յանգաւորութեամբ, իսկ չօրրօրդ տողը կրկնութիւն է առաջին տան յանգի, իսկ կարճ ոտանաւորներում առաջին տան առաջին և երկրորդ տողերը միատեսակ են յանգաւորութեամբ (երբեմն ոչ), Բ. և Դ. նոյնպէս միատեսակ (միշտ): Մնացած տներում առաջին երեք տողերը միատեսակ են, իսկ չօրրօրդը՝ Ա. տան Դ. տողի յանգաւորութեամբ է: Եւ այդ օրէնք է առանց բացառութեան. մինչդեռ պ. Երեմեանի հրատարակած ոտանաւորներից Ա. ր ունի առաջին և երկրորդ տուն՝ բոլոր տողերը միատեսակ յանգաւորութեամբ, Գ. տուն՝ առաջին երկու տողը միատեսակ և Դ. և Դ. տողերը միատեսակ: Գ. ոտանութիւն Ա. և Բ. տունն ունեն 3 առաջին տողերը միատեսակ, վերջինը տարբեր. Դ. տունն ունի չորս տողերն էլ տարբեր (առանց յանգի), դրա փոխարէն Դ. տունն ունի բոլոր տողերն էլ միատեսակ: Գ. ոտանութիւն Ա. տան Ա. և Բ. տողերը միատեսակ են, Դ. և Դ. տողերը միատեսակ, Բ. տան բոլոր տողերն էլ միատեսակ են: Մինչդեռ Քասան է տիրում և միւս ոտանաւորներում:

3) Մինչդեռ Սայեաթ Նովայի յանգերը հիացնում են իրենց հարստութեամբ, այս ոտանաւորներում մենք գտնում ենք ողորմելի յանգեր. այսպէս՝ նազանի—սիբի. և կամ իմացի—...իմ դալի. արիւր—չինեցիւր և այլն:

4) Սայեաթ Նովան բացի այն, որ մեծ տաղանդի տէր է, այլ և խելօք մարդ է. նրա երգերը լիքն են մտքերով, իսկ ինչ միտք կայ այս տողերում. «առանց քիզ ինչ կօնիմ սաղըն, կու կտրիմ սաղիս սիմըն. օխնըվի քիզ լեբող մէրըն, աշխարհումըն դուն իս իմըն». կամ շարունակութիւնը. «մարալի պէս ման իս

գալի, կրակ իս ասի ջիգարիս. Սայեաթ Նովէն եմ Նազանի, ես էլ ուրիշ եար չիմ սիրիս: Եւ կամ՝ «Թէ վարթ ասիմ՝ բացվիլ իս կարմիր վարթի պէս, շատ սիրուն իս, բաց իս էլի դուն մեխակի պէս»: Եւ կամ՝ «էս դարդէն օչօվ չը քաշէ, աչքի լուս, էշիւմէդ չիւանդացիլ իմ, աչքի լուս, մըհլամ արա, մատաղ իմ քիդ, աչքի լուս»:

Ծ) Տաղաչափութեան վանկերի թւին վերաբերող մասը մեծ խոտորուսների ենթակայ չէ, բայց տողերուս ռիթմ չը կայ:

Ա. ռսանաւորի ա. տան ա. տողն (Ա I 1) ունի եօթն վանկ, միւսներն ութական վանկ. երկրորդ տան երկրորդ տողն ունի եօթն վանկ, մնացածներն ութական:

Բ. ռսանաւորի ա.տունը կանոնաւոր է՝ բոլոր երեք տողերը 12-ական վանկով. երկրորդ տան առաջին տողն ունի 12 վանկ, իսկ երկրորդն ու երրորդը 13-ական:

Գ. ռսանաւորը կառուցուած է 11 վանկի վրայ, բայց I 4 ունի 12 վանկ. III 2-ը՝ տասն վանկ:

Դ. և Ե. ռսանաւորները ազատ են վրիպակներից:

Ծ) Բայց այդ ոտանաւորները ամենից աւելի յիշեցնում են Սայեաթ Նովային իրենց ձանձրալի նմանութեամբ:

Ա. ռսանաւոր. «Դուն ինձ համար սուլթան խան իս, յիշեցնում է ԺԸ տաղ I տան 4 տող. «Սուլթան ու խան իս ինձ ամա».

«Առանց քիդ ինչ կօնիմ սաղըն» յիշեցնում է I 1 «Առանց քիդ ինչ կօնիմ սոյրաթն ու սաղըն». «կու կտրիմ սաղիս ռիմըն» — Դ IV 2 «կու կտրիմ քամանչի սիմըն»: «Կրակ իս տըվի ջիգարիս» — Թ II 3 «Ձիգարիս կըրակ իս տըվի»: «Ես էլ ուրիշ եար չիմ սիրի» — Դ IV 1, «Ես էլ ուրիշ եար չիմ սիրի»:

Բ. ռսանաւոր. «Թէ արէգագ ասիմ, եար, դուն իս անըման, թէ ջաւայիր ասիմ, ջան, չըկայ քիդ նըման» — ԺԶ III. «Թէ ջաւայիր ասիմ, քարէմէն կօսին, թէ որ լուսին ասիմ՝ տարէմէն կօսին. արեգագի նըման փարա իս գօղալ»:

Գ. ռսանաւոր. «Անգամ արա»՝ Ե I, 1, «անգամ արա, օվաչկի-

լուսւմ:

„Մատաղ իմ քիզ“ — Դ V 2 „մատաղ իմ քիզ“:

«Դուռն խօս էն գլխէն գօլած իս» — Դ. III, „Դուռն խօս էն գլխէն գօլած իս“:

„Էշխէմէդ ջուռուն իմ դարի, գօղալ եար, գիշեր ցերեկ ման իմ գալի եանա եանա“ — Ե II 2 „Էշխէմէդ ջուռուն իմ էլի, ման իմ գալի եանա եանա“:

„Էս դարդէն օջօլ չը քաշէ, աչկի լուս“ — Ե II 3 „Էս դարդէն օջօլ չը քաշէ, վուր մէ դանդին չի գիմանայ“:

„Գանչում իմ աման“ — Զ. IV 1 „Կանչում իմ աման“:

„Ջիգարիս կըրակ իս առի (կըկին անգամ, տ. վերը ա. ուսանաւոր) չիս խղճում, գալում, Սայեաթ Նովուն բրիան իս աւում“ — Թ II 3 „Ջիգարիս կըրակ իս առվի, էրվում իմ քիբեան իս աւում“, Եւ ալլն:

Այսպէս անհամար անտեղի նմանութիւններով կարկատուած են այդ անարուեստ ոտանաւորները և դրանով է, որ նրանք Սայեաթ Նովայի հարազատ երգերի տպաւորութիւնը կարող են թողնել ոմանց վրայ:

7) Պատկերների մասին լաւ է չը խօսել. ինչ պատկեր կարելի է փնտռել անկապ բառաշարքերի մէջ. Սայեաթ Նովայից վերցըրած արտայայտութիւններն, ի հարկէ, բովանդակում են պատկերներ, որոնք սակայն անմաջապէս աղօտանում են, երբ մենք կարգում ենք հեղինակի անշնորհք յաւելումները. համեմատել ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ „Էշխէմէդ ջուռուն իմ էլի, ման իմ գալի եանա եանա“ Գ. ռՏԱՅԱՒՈՐ „Էշխէմէդ ջուռուն իմ դարի, գօղալ եար, գիշեր ցերեկ ման իմ գալի եանա եանա“:

Այսպէս մի քանի տեսակէտներից ալնրախ է այդ ոտանաւորների կեղծ լինելը. նրանք ոչ թէ կորցրել են իրենց գեղարուեստական նրբութիւնը, այլ նրբութիւն երբէք չեն ունեցել, որովհետեւ կոպիտ իմիտացիա են:

Մի նկատողութիւն էլ «Նոր ձեռագիր տաղարանի» մասին,

որ պ. Երեմեանը «փողիների միջից փրկել է» Նոր Զուլայում. այդ ձեռագիրը ըստ պ. Երեմեանի «հայերը 1606 թւականին Հին Զուլայից գաղթելիս մի շարք ձեռագիրների հետ բերել են Նոր Զուլա»:

Զարմանալի յատկութիւն ունի այդ ձեռագիրը. նա 1606 թւականին Նոր Զուլա է շնորհ բերել՝ պարունակելով իր մէջ Սա-յեաթ Նովայի տաղերը, որոնք հեղինակուած են 1750-ական թւա-կաններին, այսինքն ուղիղ 150 տարի ձեռագրի Զուլա գալուց յե-տոյ:

## ՍՍՏԵՆԹ՝ ՆՈՎԱՅԻ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆԸ <sup>1)</sup>

Սայեաթ Նովայի լեզուն Թիֆլիզի բարբառն է, որ մի ժամանակ տարածուած էր նաև Թիֆլիզից դուրս, նրա շրջակայքում և որ ներկայումս անհետանալու վիճակի մէջ է շնորհիւ հայերէն գրական լեզուի զարգացման, նայնպէս և օտար լեզուների (վրացերէն, ռուսերէն) ճնշման:

Ըստ իր հնչաբանական դրութեան, Թիֆլիզի բարբառը (հետեաբար և Սայեաթ Նովայի լեզուն) հնարաւոր չափով հարադատութեամբ պահպանել է հնչիւնների նախնական արտասանութիւնը և այդ կողմից օժտ է Երևանի բարբառին: Այսպէս Բ. Գ. Դ. Զ. հնչոււմ են որպէս զուտ թրթռուն հնչիւններ, Պ. Կ. Տ. Մ. Ժ — զուտ խուլ հնչիւններ՝ կոկորդային ուժեղացած ձայնով՝ վրացերէնի ազդեցութեան տակ — Փ. Բ. Թ. Ծ. Զ. սովորական թաւ հնչիւններ են: Միւս բարբառների ֆ հնչիւնը փոխարինւում է այս բարբառում Փ ազմկայինով: վրացերէնի ազդեցութեան տակ բարբառն ընդունել է Ղ հնչիւնը՝ համապատասխան վրացերէն ջ, ինչպէս և պարսկերէն կամ արաբերէն ڍ հնչիւնին:

### Ա. ՀԵԶԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Սայեաթ Նովայի լեզուի կարևոր ձայնական փոփոխութիւնները հետևեալներն են.

1) Ներկայ ուսումնասիրութիւնը վերաբերում է Սայեաթ Նովայի լեզուին և ոչ թէ Թիֆլիզի բարբառին, որով նա գրուած է. օրինակները բերուած են Սայեաթ Նովայից: Սակայն գլխաւորապէս ձեռքանութեան մէջ, որտեղ կարիք կար լրիւ օրինակների, մենք օգտուեցինք Թիֆլիզի բարբառի տուեալներից, ի նկատի ունենալով Սայեաթ Նովայի լեզուի անկարողութիւնը բաւարարելու այդ պահանջին:

## Ա. Զայնաւորներ.

Է հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի Ա հնչիւնին. այսպէս՝ էրծաթ, չըկէր.

Է հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի Ծ հնչիւնին. ամէն, էդիվըն, էրկաթըդ, էրկու, էգնէն, էրանի, էրնէկ:

Է հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի ԱՅ երկրորդառիւն. էն, հէնչափ, ձէն, էրած, էրվինք, էստու, էդ, կէծակուն:

Ձայն բառի մէջ այդ երկրորդառը երբեմն մնում է. ձայնըդ Ա V Ձ Ժ IV Ձ, ձայնիդ ԺԱ V 1:

Ի հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի Ե հնչիւնին. իս, քիզ, քիզանից, էդիվըն, հասնիս, հիդ, վից, մատնիրըդ, տիւրն, դօստիրըս, անիմ, աչկիբըս, քիզիդ, միզի, միզիդ, խիլբըդ, դիդ, լիզուդ, տէսնիմ, ըլիս, լըցվիլ է, երիք, տիդ, հիռացի, խիլք, տիդի, քաղաքտիդըն, խիլքի, բիռըս, բիռըն, ակնիք, արեվիլք, արիվմուտ, կաթնակիրի, լիզի, պաքքիվէ, ավիտարանի, առչիվըն, կինաց, տիդէմէդ, սիվ, ջիռանում է, հիռանում է, միռանում է, տիսըդ, արիվ, խիվանայ, սիվանայ. — ԻՐ յոգնակի վերջաւորութիւնը — ԵՐ վերջաւորութիւնից և — ԻՆ անցեալ ընդունելութեան վերջաւորութիւնը — ԵՆ վերջաւորութիւնից, օր. մազիրըդ և այլն, զըրիլ է, էլիլ է ևն:

Ի հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի Է հնչիւնին. չի կանայ, պիտի:

Ի հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի ԻԻ երկրորդառիւն. արին, գիդ, գիդումն, գիդգիդի պէս:

Օ հնչիւնը որոշ դէպքերում (նախընթաց ՈՒ հնչիւնով) համապատասխանում է գրական լեզուի Ո հնչիւնին. կօնիս, լիւնչ կօնիմ, կօծիմ, կօսիս, կօնիլ տայ, կօնէ:

Օ հնչիւնը թէ բառի միջում և թէ սկզբում համապատասխանում է գրական լեզուի Ո հնչիւնին. զօված, օսկէ, օսկու, օջօվ, վունց օր:

ՈՒ հնչիւնը համապատասխանում է գրական լեզուի Ո հնչիւնին.

չիւնին. — փուր, ճիպուտ, գուղըն, ճուրաբն, ժուցիդ, շուրս, հուտ, լուրի պէս, փութըր, թաքավուր, թութըս, փութումըս, սրքուր, շութէղէն, հուտըդ, խուղըն, խուցի, կու խուցվի, հօքուց (հօգւոց), թուղ, առավուտվան:

Բառի սկզբում Ո՞ առաասանում է ՎՈՒ փուր, վուտիդ, վունց, վուրսնութին:

ՈՒ հնչիւնը համապատասխանում է զրական լեզուի ԻԻ երկբարբառին. հուտած, հարուր, արունն, արուն, , արունուտ, հուր (հիւր):

ՈՒ հնչիւնը համապատասխանում է զրական լեզուի ՈՅ երկբարբառին. պտուտ էկայ:

«Յրեսուն» բառի մէջ առաջին Յչ-ը Ծա-ի է փոխուել. եարսուն:

Ինչպէս տեսնում ենք, ձայնաւորների ամենակարևոր փոփոխութիւնը վերաբերում է երկու հնչիւններին՝ Ի < Ե և ՈՒ < Ո. միւսները սպորադիկ են և հազազիւտ:

Բ. Սօնօր հնչիւններից Բ-ը համապատասխանում է զրական լեզուի Ռ-ին. ծար—ծառ, ծարա—ծառայ, կուրն—կուռն, մէրած—մեռած:

Գ. Աղվկայից հնչիւններ.

ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐ. Բ. Գ. Գ. Թրթռունները հարադատօրէն պահպանել են իրենց նախկին արտասանութիւնը. բացի զրանից համապատասխան խուղ հնչիւնները Թրթռուն արտասանութիւն են ստացել երբեք (և հակառակն):

Բ համապատասխանում զրական լեզուի Գ-ին. Ամբի նման. հանդիբիս, հանդիբիմ, դիբչի:

Գ = Կ. Գուղիս, տընգիբըն, գուքամ, թէգուղ, արէգագու մըն, գուղիմ, արէգադըն, նընգած, նընգար. ...իմ նընգի, նընգնինք:

Դ = Տ. Գիդիմ, գէգինըն, մօղըդ, հիդ:

Պ = Բ. Ախպուր, ախպէր:

Կ = Գ. Ասկըդ ասկէրումըն գօված:

Կ համապատասխանում է և Ք-ին. աղկատ, խօսկ, աչկի-  
լուս, միակըս, աչկէմէս, մէշկըդ, վե՛, կու կորցընողին ըլի. միչ-  
կիդ, միակըդ, աչըկ, շուղկը, մըտկի, ուշկ ու միտկըն, կանցօր:

Թաւ հնչիւնները դէպի իրենց են զրաւել թրթռուն արտա-  
սանութիւնը. այսպէս՝

Փ = Բ. Շափաթ, շափաթով, շափթէնը, եփ, խափով, ճան-  
փէմէն:

Թ = Դ. Մարթ, վարթ, զարթարվեցաւ, վուրսնուրթին, Ա-  
թամի զաթ:

Ք = Գ. Մարքրիտ, կարքումն է. հոքուդ, գուքամ, թաքա-  
վուր, հաքիլ իս, հաքնիս, հօքուց:

(Ք = Կ քու քաշին):

Օտար Ֆ հնչիւնները միացել են Փ արտասանութեան տակ.  
շափադ, փալըդ, փանդ, փէլ ու փանդով, փոանդի, փահրադ, փիա-  
լա, փնջան, փարսէվար, շափոանդ, զանջափիլ, զարանփիլ, զափով,  
զափին, փիլ, բափա:

Ալլիւրանց հնչիւններից Հ = Ս. տէհայ (տեսայ) և = Թ. մի  
էհա (մի երթա), կէհա, կէհաա:

Ս = Զ. ասկըդ ասկէրումըն դօված:

Խ = Զ. խուղ (հող), օխնըվի (օրհնուի):

Խ = Դ. ախպուր, ախպէր, ճուխկա, թուխտ, թըխտիրըդ:

Վերջապէս աճէրեկասներից

Զ = Մ. մէձըրվիս:

Զ = Զ. մէշըն, մէշկըդ, մէշ, մէշէմէն, միշէն:

Ճ = Զ. անգան:

Ազմկայինների մասում կարևոր փոփոխութիւն է Կ < Ք և Ֆ  
հնչիւնի համակերպուելը: Ինչ վերաբերում է հնչիւնների տնկման  
և վերահանդնումին՝

Ա սովորաբար ընկնում է շեշտից առաջ և այս օրէնքի հան-  
դամանք է ստանում. մարքրիտ, ալտալու, ուհնով, թանքի նման,  
խօսառօնահէրըս, խօսառօնիս, հասնիք (հարսանիք):

Սակայն նոյն մարգարիտ բառը Ան պահում է մի քանի դէպ-  
քերում, անշուշտ տաղաչափական նկատումներով. մարգարիտով  
ԻԱ IV 2 ԽԳ II 3, մարգարիտըս ԻԶ IV 4, մարգարիտէ ԼԲ III 3:

Ե ընկնում է շեշտից առաջ ժանեղ՝ բառի մէջ՝ անդիլարըն:

Որ ընկնում է շեշտից առաջ. Թըլացաւ, իմաստնէրու:

Պատահական անկումներ նկատելի է աղմկայինների մէջ:

Կ մէ(կ) հալում. Վ դըժար է. Հ աւելի հետեզդական է. ամա,  
ամար (համար), աշխարքըն, ճանապարհն, աշխարուժըս, աշխարիս.

Զ քի(ղ). Բ—ամա (համար, բայց և ամար), հասնիք:

Հպարտութիւն բառի մէջ. Պ-ից առաջ երեան է դալիս Ն՝  
հընպարտութիւն:

Ճնկնել՝ բառի մէջ բառի սկզբում յայտնւում է Ն: նըն-  
գած, նընգար, ... իմ նընգի, նընգնիք:

Սպանել բառը արտասանւում է սըպանել.— սըպանից, սըպա-  
նէլու, սըպանէցիր, սըպանիս, սըպանին, սըպանի:

Շեշտը Սայեաթ Նովայի լեզուում, ինչպէս և Թիֆլիզի բար-  
բառում, ընկնում է վերջընթեր վանկի վրայ:

### Բ. ՁԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

#### ԱՆՈՒՆ. հոլովներ.

Թիֆլիզի բարբառը պահպանել է զրահան լեզուի հոլովների  
ձևերը և այդ հոլովից շատ մօտ է նաև Երեանի բարբառին, բայց  
ունի մի քանի առանձնայատկութիւններ.

Ուղ. բառ . . . . . բառիք

Սեռ. բառի . . . . . բառէրու

Տը. բառիին . . . . . բառէրու(ն)

Հայց. բառ. . . . . բառիք

Բաց.—է(ն) էմէ(ն). [բառից, աղղեց. Երեանի բարբառի].

բառէրէ(ն) [բառէրից].

Գործ.— օվ . . . . . բառէրօվ

Ներգ.— ում . . . . . բառէրում

Հայցական հոլովը շնչաւոր բառերում սեռական հոլովն է՝ վրան աւելացրած ն յօղը (այլ և ս. դ)։

Հայցական հոլովը շատ անգամ տեղ է ցոյց տալիս (*Accusativus loci*), չուրս տարի է քաղաքն քարվան չի մըտի.— Մէջնունի պէս սարն իմ նընդի.— Մուտ բաղչէն նազով։

| Ա ն ժ ն ա կ ա ն | Դերանուն                                        | Եզակի | Թ ո գ ն ա կ ի                               |
|-----------------|-------------------------------------------------|-------|---------------------------------------------|
|                 | Ուղ. ես . . . գու . . . նա . . . ինքը .         |       | մինք. դուք. նրանց. իրանց                    |
|                 | Սեռ. իմ . . . քու . . . նրա . . . իր(ա).        |       | միւր. միւր. նրանց. իրանց.                   |
|                 | Տր. հայց. ինձ, ինձի. քիզ, քի. նրան. իրան        |       | միզ. միզ. նրանց. իրանց.                     |
|                 | Բաց. ինձմէն [ինձ(ա)նից] քիզմէն. նրամէն. իրմէն.  |       | միզմէն. միզմէն. նրանցմէն. իրանցմէն.         |
|                 | Գործ. ինձմով քիզմով. նրանով. իրմով.             |       | միզմով. միզմով. նրանցմով. իրանցմով.         |
|                 | Ներգ. ինձ(ա)նում. քիզ(ա)նում. նրանում. իրանում. |       | միզ(ա)նում. միզ(ա)նում. նրանցում. իրանցում. |

| Թ ո գ ն ա կ ա ն | Ե զ ա կ ի                            | Թ ո գ ն ա կ ի                           |
|-----------------|--------------------------------------|-----------------------------------------|
|                 | Ուղ. հայց. էա. էա. . . էն            | Ուղ. հայց. էստունք. էստունք. էնդունք    |
|                 | Սեռ. տր. էստուն. էստուն. էնդուն      | Սեռ. տր. էստունց. էստունց. էնդունց      |
|                 | Բաց. էստումէն. էսումէն. էնդումէն     | Բաց. էստունցմէն. էսունցմէն. էնդունցմէն  |
|                 | Գործ. էստումով. էսումով. էնդումով    | Գործ. էստունցմով. էսունցմով. էնդունցմով |
|                 | Ներգ. էստումում. էսումում. էնդումում | Ներգ. էստունցում. էսունցում. էնդունցում |

## Բ Ա Յ

Թիֆլիզի բարբառը պատկանում է հայկական բարբառների արեւելեան ճիւղին և բայերի ներկայ ժամանակում ունենում է ում ածանցը. տէսնում իմ. բայց բացի այս սովորական ներկայից նա հաւատար կերպով օգտւում է և կու մասնիկի օգնութեամբ կազմուող ձևերից, ինչպէս. բալիս դուզիս, գուքաս, կու խնդացնիս, կու կտրիս, վեր կօնիս։ Խոնարհումը յիշեցնում է Նրեանի բարբառին՝ համապատասխան ձայնական փոփոխութիւններով։

Լծորդութիւնները երկու են.— ալ (նալ) և իլ (նիլ)։

Հակոն իմ բայք, որի օգնութեամբ կազմոււմ է Թիֆլիզի բարբառի բայերի խոնարհումը, փոփոխոււմ է հետեւեալ ձեով. ներկայ՝ իմ (=եմ), իս, է, իմք, իք, ին. անկատար՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին.

Ըլիլ բայի խոնարհումը. ներկայ՝ քուս իմ, քումքս, քումք է. բացասական ձևն է չիմ քումք. անցեալ անկատար՝ քումք էի, չէի քումք.

Անցեալ կատարեալ՝ էլայ, էլաք, ելաւ, էլամք, էլաք, էլանք. չէլայ, չէլաք.

Ապառնի կամ ներկայ՝ կուլիմ, կուլիս, կուլի, կուլինք, կուլիք, կուլինք. չիմ քի, չիս քի, չի քի, չինք քի, չիք քի, չինք քի.

Ապառնի անցեալ՝ կուլէի, կուլէիր, կուլէր. կուլէինք, կուլէիք, կուլէինք. չէի քի, չէիր քի, չէր քի, չէինք քի, չէիք քի, չէինք քի.

Ստորագասական ներկայ՝ քիմ, քիս, քի, քինք, քիք, քինք. չքիմ, չքիս, կն.

Ստորագասական անցեալ՝ քիէի, քիէիր, քիէր, քիէինք, քիէիք, քիէինք. չքիէի չքիէիր կն.

Հրամայական քի՛(ր) կամ լի(ր), մի՛քի(ր), էլէք, մի՛քիէք.

Անորոշ դերբայ՝ քիլ, ներկայ դերբայ քիօղ, անցեալ դերբայ քիլ, էլած, ապառնի դերբայ քիլաւ.

### ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ. Այս ժամանակը կազմոււմ է ալ և իլ լծորդի տեղում ածանցը դնելով և իմ Հակոնի խոնարհումով. օր. կէնալ — կէնում իմ, կէնում իս, կէնում է, կէնում ինք, կէնում իք, կէնում ինք. բացասական ձևը կազմոււմ է չ մասնիկի օգնութեամբ, որ դրոււմ է անցեալ դերբայի վրայ առանց լ-ի. չիմ տա. չիմ հեռացնի, չիմ քաշվի. չիմ սիրի, չիմ տէսնի, չիմ ասիւ Ունիմ բայի մէջ չ դերոււմ է խոնարհուող մասի վրայ՝ չունիմ, չունիս, չունի.

1) Բացասական առման ժամանակ չ մասնիկը առաջադասմիանում է Հակոն բայի հետ, որի վրայ աւելանում է բացասուող բայը՝ ում ածանցով. այսպէս՝ չիմ կէնում, չիս կէնում, չի կէնում, կն.

2) Գալ, տալ, լալ բայերը ներկան կազմոււմ են իս ածան-

ցի սղնութեամբ. դալիս իմ, տալիս իս, լալիս է. դալ, տալ, լալ բայերի նկատմամբ չիմ, չին ևն մասնիկները նախորդում են դալիս ձևին. այսպէս՝ չիմ գալիս, չիս տալիս, չէ լալիս ևն:

3) Բայերի բարդուելու դէպքում բարդուող բառին յաջորդում է էական բայը (բացասական դէպքում չ մասնիկով և բայի ում կամ իս վերջացած ձևը. այսպէս՝ խիլ իմ անում, անց է կէնում, վայ ին ասում, ինչ իս կամում, ատիլ է ուզում, ժամ իս գալիս), ման չիս գալիս):

Ունէնալ և գիտէնալ բայերը արմատի վրայ (ուն—գիդ—) աւելացնում են էական բայը. այսպէս՝ ունիմ, գիդիմ, ունիս, գիդիս, ունէ, գիդէ:

Մի քանի բայեր պահպանել են ալ լծորդի խոնարհում. կամ, կաս, կայ. չի կանայ. ով կարայ:

Անցեալ անկասար. Այս ժամանակը Սայեաթ Նովայի տաղերում հազագիւտ է. գործածական են հետեւեալ արտայայտութիւնները. էրէգ լաւ էր. շահն էր քաշի չէր դիմնա.—չը կէր.—չէի ծընի.—Թիֆլիզի բարբառում անցեալ անկատարի խոնարհումը հետեւեալն է. գնում էի, գալիս էի, գնում էիր, գալիս էիր, գնում էր, գալիս էր և այլն:

### ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

1. Անորոգ դերք. — ալ և—նալ (ն—ն ծանցի մաս չէ) անցեալ կատ. —ացի. գնալ՝ գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գընացիք, գնացին —մընալ՝ մընացի, մընացիր, ևն. կարդալ՝ կարդացի, կարդացիր, ևն:

2. Անորոգ դերք. անալ, նալ,—էնալ, անց կատար.—ացայ, ցայ, էցայ. կըշտանալ՝ կըշտացայ կըշտացար, կըշտացաւ, կըշտացանք, կըշտացաք, կըշտացան. վախէնալ՝ վախէցայ, վախէցար, ևն:

3. Անորոգ դերք. իլ անց կատար.—էցի. խօրվէցի, խօրվէցիր, խօրվից, խօրվէցինք, խօրվէցիք, խօրվէցին:

4. Անորոգ դերք.—վիլ (կրաւորական), անց. կատ. վէցայ, էրվիլ՝ էրվէցայ, էրվէցար, էրվէցաւ, էրվէցանք, էրվէցաք, էրվէ-

ցան.—հալվիլ՝ հալվէցայ, հալվէցար, ևն.

Ծ. Անորոց դերք.— ցիլ—չիլ, անց. կտաար.— այ, Մէանիլ՝ մէռայ, մէռար, մէռաւ. մէռանք, մէռաք, մէռան. հանգչիլ՝ հանգայ, հանգար, ևն.

Ծ. Անորոց դերքայ—անիլ, զնիլ, քալ. այս բայերը անց. կա-  
sար. ունենում են—իլ-ի խոնարհում. արի, արար, արաւ. արինք,  
արիք, արին, դրի, դրիւ, դրինք, դրիք, դրին. — արվի, արվիր, էրիտ,  
արվինք, արվիք, արվին.

Գոյականներ և այլ մասնաւորներ միանալով որոշ բայերի  
հետ՝ մի միտք են արտայայտում. սօվ մընաց, մտտտ արաւ, պտտաւ  
էկայ, ևն.

Ըստ անցեալ կատարեալի կազմութեան բայերը կարելի է  
բաժանել ցոյական (Յ ստացող) և արմատական (առանց Յ-ի) խում-  
բերի. առաջինի մէջ կը մանեն անորոշ գերբայում ալ-նալ—անալ-  
նալ—էնալ-իլ—վիլ ունեցողները. երկրորդ խմբին կը պատկանեն—  
նիլ—չիլ ունեցողները և անիլ, զնիլ, տալ, բայերը.

Անցեալ դերքայը երկու ձև ունի—իլ և ան վերջաւորու-  
թիւններով. կազմում է հետևեալ ձևով.

—ացայ ցոյակատարեալի Յ-ի վրայ աւելանում է իլ. զնացիլ, կըշ-  
տացիլ. էցայ կատարեալի Յ-ի տեղ և արմատական անցեալ կա-  
տարեալում աւելանում է իլ. խօրվիլ, էրվիլ, մէռնիլ, արիլ, ևն.

Իլ-ի փոխարէն երբեմն ունենում է ան վերջաւորութիւն.  
զնացած, կշտացած—զօլած, քընած, նստած, բաշած և այլն.

Անցեալ գերբայի օգնութեամբ կազմում են յարակատար և  
գերակատար անցեալները.

Յարակատարն ունի երկու ձև. Յարակատար տ-ը կազմւում  
է իլ վերջաւորուող անցեալ գերբային կցելով իմ էականի ներկան.  
լացիլ իմ, լացիլ իս, լացիլ է, լացիլ ինք, լացիլ իք, լացիլ ին, Հի-  
ւանդացիլ իմ, հիւանդացիլ իս, ևն.

Զ բացասական մասնիկն աւելանում է իմ էականի վրայ և  
անցեալ գերբայի ի վերջաւորութիւնն ընկնում է. չէ մէռի, չէ էլի,



Ապառնի իմաստ ունի ապառնի դերբայի և իմ էականի (երբեմն ունիմ բայի) միացումից կազմուած ձևը (*Conjugatio periphrastica*). դիպ տալու է, ցաւ տալու չէ, ես իմ լալու, աշխարհս միդ մընալու չէ, դուլըն աղին դալ տալու չէ. մանուկն էնդուր ունի լալու:

Ապարնի անցեալը, որ կազմուած է կու մասնիկի և բայի անցեալ տնկատարի միջոցով և ունի հետեւեալ ձևերը՝ կու գրէի, կու գրէիք, կու գրէք. կու գրէիմ, կու գրէիք, կու գրէիմ. կու տայի, կու տայիք, կու տաք են, անգործածական է Սայեաթ Նովայի տաղերում:

Ստորագասական եղանակ. այս եղանակն իր կազմութեամբ ապառնի ժամանակն է, միայն կու մասնիկը փոխարինուած վուր մասնիկով, որ յաճախ կըճատուում է: Ձարըդ Ռաշի կուդէն պիտի, վուր դուն խօսիս քաղցըր հանգօվի Ղաստ արա (վուր) էլ լաւ օրէրու էդիվըն հասնիս Ճիպուտըդ վարադնած պիտի, (վուր) թահր ունէնայ հաղար ռանգօվի Աշխարհս ումն է մընացի, վուր ինձ ու քիդ մընայ, գօզալ:

Բացասական չ մասնիկը դրոււմ է անմիջապէս բայի վրայ. չիմանաս. դաստ արա՝ շուշէդ չը կոտրին:

Ստորագասականը գործ է ածուած ապառնի հրամայականի նշանակութեամբ. բացասական դէպքում չ(ը), վուչ, վունց մասնիկով: Օվ գուգէ բէգամաղ ըլի. ավալ քու տէսնօղըն մէնի. վունց արէգազն շուղկը տայ, վունց լուսինը լուս անէ: Էս դարդէմէն օվ չէ քաշի, վուչ քաշէ:

Ստորագասական եղանակի տեղ զբաղական լեզուում մենք գտնում ենք յաճախ անորոշ դերբայ. չի կանայ ճանդի (չի կարող ճանկել). ամէն մարթ չի կանայ խըմի իմ ջուրըն (չի կարող խըմել). ամէն մարթ չի կանայ կարթայ (չի կարող կարդալ), չի կանայ տէսնի. դաստ արա էլ լաւ օրէրուն էդիվըն հասնիս (աշխատիր...հասնել). քիդ ինձնից օ՞վ կանայ խըլի:

Ստորագասական եղանակը դառնում է պայմանական եղա-

նակ, երբ որ առաջից աւելանում է քէ (= եթէ), որ յաճախ կըր-  
ճատուում է. թէ էսանց էլ սուշ ունենամ. թէ կու պակսիմ, քիզ  
կու պակսիմ, թէ մանուշակ ասիմ. թէ ջափայիր ասիմ. թէ վուր  
լուսին ասիմ... (թէ) դումաշ ասիմ... սալքի ասիմ. ջէյրան ասիմ.  
թէ խիլք ունիս. թէ էս տնիս են:

Ստորագասական եղանակի վրայ թէգուզ աւելանալու դէպ-  
քում ստացւում է զիջովական եղանակը. թէգուզ քու քաշըն մար-  
բրբիս տան բրօյի բրօյի. թէգուզ քու քաշըն ալմաս տան են. թէ-  
գուզ թաքալուքըն կանչէ. թէգուզ հազար դարդ ունենամ. թէգուզ  
ըլիմ թէգուզ չըլիմ. թէգուզ սիրիս. թէգուզ ասիս, թէգուզ համ-  
բուրիս: թէգուզ մըտօք ճարտար ըլի, թէգուզ մարքրիտօվ լիքն...  
ըլի, թէգուզ արէգագ լուսնիակ ըլի:

Պիսիմ բայը աւելանալով վանկատած (apocope-ի ենթարկ-  
ուած) անորոշ դերբայի վրայ, ձևացնում է conjugatio periphrastica  
պարտաւորական իմաստով: Աշխարհքս քունն ըլի ի՞նչ պիտիս տա-  
նի. — Ես պիտիմ քէզից բէգամադ. — Կութըդ շիրմայիմէն պիտի. —  
գործ է անում նաև զանազան հոլովների հետ. Դօշիդ պիտի լալ  
ու ալմաս. Զարդ Թաշի կուդէն պիտի. այլև բայի ստորագասա-  
կանի հետ, պիտի տանիմ, պիտի տանիս, պիտի տանէ:

Ստորագասական Բ. տպառնի անցեալն է առանց կու մասնի-  
կի. գրէի, գրէիր, գրէր են:

Հրամայական եղանակ. ընդհանուր կանոն կարելի է սահ-  
մանել միայն հրամայական յոգնակիի համար, որ հետևեալն է. ցո-  
յական կատարեալի ց-ի վրայ և արմատականների արմատի վրայ  
պէտք է աւելացնել էի վերջաւորութիւնը: Սիրեցէք, դիմացէք, ու-  
րախացէք, իմացէք, հիռացէք, կացէք, կարթացէք, ածէցէք, խըմէ-  
ցէք, սպանէցէք, նըստէցէք, ասացէք, բըռնէցէք, պըտռէցէք, խօսէ-  
ցէք—արէք, դըրէք, աըվէք, ածէք, տարէք, կօրէք, հաքէք:

Եզակին ունենում է՝ է, ի, ացի, էցի, ցի, ի, ա. առանց վեր-  
ջաւորութեան:

է. խըմէ, բըռնէ, պըտռէ, խափէ, կանչէ, սպանէ. ծալէ (ան-

ցեալ կատար. էցի). ացի—դիմացի, ուրախացի, իմացի, հիւսացի.  
(անցեալ կատար. ացայ)—էցի վախէցի (անց. կատ. էցայ).

Ի. սիրի, ածի, նըստի, կօրի, հաքի, էրվի, հալվի, մաշվի, ապ-  
րի, արի, խօսի, կացի, լացի (անց. կատ. էցի, այ, վէցի).

Ա. կարթա, ասա, ածա, զնա, մնա, արա—ացի, էցի:

Առանց վերջաւորութեան՝ կաց, դի, տուր, տար, անգաճ  
կալ—գանազան:

Արգելական ճրամայականի եղակին ստացւում է՝ առանց  
լ վերջաւորութեան անորոշ դերբայի առաջ մի բացասական մաս-  
նիկը զնելով:

Իլ մի խօսի, մի լացցնի, բար մի անի, (հէսաբ մի անի,  
քաբաբ մի անի), մի ջգրէցնի, մի քաղի, մի դէն գցի, մի վիթի,  
մի ածի, մի սըպանի, մի տանի:

Ալ մի կէնա, մի էհա, մի շանց տայ, անց մի կէնա:

Յոգնակիւում անորոշի իլ լծորդի տեղ դրւում է էֆ, ալ  
լծորդի տեղ՝ աֆ. մի անէք, մի քաշէք, մի կէնաք, մի տաք:

Անոռօ գերայն ունի երկու վերջաւորութիւն կամ լծորդ՝  
իլ և ալ. սըպանիլ, տալ:

Անորոշ դերբայը հոլովւում է և հոլովման ժամանակ լծոր-  
դի ի-ն է-ի է փոխւում:

Ուղ. հայց. սըպանիլ—տալ

Սեռ. տր. սըպանէլու—տալու

Բացառ. սըպանէլէն, սըպանէլէմէն, սըպանէլից կամ սըպա-  
նէլուց. տալէն, տալէմէն, տալից կամ տալուց

Գործ. սըպանէլօվ—տալօվ

Ներգ. սըպանէլում—տալում:

Ներկայ դերբայը իլ լծորդում կազմւում է անորոշ դերբայից՝  
իլ վերջաւորութիւնը փոխարինելով օղ-ով. սիրօղ, աէսնօղ, ասօղ  
են. ալ լծորդում կազմւում է՝ անցեալ կատարեալի վերջաւորու-  
թիւնը (ց-ից և արմատից յետոյ) օղ-ի փոխելով. դիմացօղ, ուրա-  
խացօղ, իմացօղ, հիւսացօղ.—տուօղ, էկօղ:

Անցեալ դերայ — տես վերը:

Ապառնի դերայ — կազմուած է անորոշ դերբայի իլ և ալ անանցների վրայ ու աւելացնելով. այդ դէպքում իլ վերջաւորութեան ի հնչիւնը է-ի է փոխուում: Նըստելու, մաշվելու, ապրելու, խօսելու, կարթալու, գնալու, մնալու: Այս դերբայը մտնում է conjugatio periphrastica-ի մէջ, որ ունի ապառնի իմաստ:

Պատճառական քայեր (verba causativa)

Կան բայեր, որոնք ունեն ցնիլ վերջաւորութիւնը և պատճառական, այսինքն մի բան պատճառելու, հարկադրելու իմաստ: Այս բայերը կազմուած են չէզոք բայերից և ստանում են ներգործականի իմաստ, բայց երբեմն և ներգործական և կրաւորական բայերից: Այսպէս՝ հիւանալ — հիւացնիլ, վախէնալ — վախէցնիլ, փախչիլ — փախցնիլ, թռչիլ — թռցնիլ, խմիլ — խմէցնիլ, կարթալ — կարթացնիլ, հալվիլ — հալվէցնիլ, մաշվիլ — մաշվէցնիլ:

Այս բայերն ունեն խոնարհման երկու ձև.

1) Անցեալ կատարեալ կօրցըցի, կօրցըցիր, կօրցուց, կօրցըցինք, կօրցըցիք, կօրցըցին:

Անցեալ դերբայ կօրցըցիլ, կօրցըցած:

Յարակատար կօրցըցիլ իմ, չիմ կօրցըցի:

Գերակատար կօրցըցիլ էի, չէի կօրցըցիլ:

Հրամայական կօրցու, կօրցըցէ:

Սայեաթ Նովան ունի շեռ ինձի կօրցըցէք. «Քու դարդըն ինձ պառվէցուց» .. «Կօրցըցած խօնթկարի պէս». «Շատ մի լացցնի Սայեաթ Նովին»:

2) Անցեալ կատարեալ՝ կօրցրի, կօրցրիր, կօրցրուց, կօրցրինք, կօրցրիք, կօրցրին:

Անցեալ դերբայ կօրցրիլ, կօրցրած:

Յարակատար կօրցրիլ իմ, չիմ կօրցրի:

Գերակատար կօրցրիլ էի, չէի կօրցրիլ:

Հրամայական կօրցրու, կօրցրէ:

# ԿԱՐԹԱԼ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Սահմանակամ եղանակ

ՆԵՐԿԱՅ

ԱՆԿԱՏԱՐ

ԱՆՑ. ԿԱՏԱՐ.

| Կարթում իմ | չեմ կարթում | Կարթում էի | չէի կարթում | Կարթացի | չէ կարթացի |
|------------|-------------|------------|-------------|---------|------------|
| » իս       | չիս         | »          | » էի        | »       | » կարթացի  |
| » է        | չէ          | »          | » էր        | »       | » կարթաց   |
| » ինք      | չինք        | »          | » էինք      | »       | » կարթացին |
| » իք       | չիք         | »          | » էիք       | »       | » կարթացիք |
| » ին       | չին         | »          | » էին       | »       | » կարթացին |

ՅԱՐԱԿԱՏ. I

ՅԱՐԱԿԱՏ. II

ԳԵՐԱԿԱՏ.

| Կարթացի իմ | չեմ կարթացի | Կարթացած իմ | չեմ կարթացած | Կարթացի էի | չէի կարթացի |
|------------|-------------|-------------|--------------|------------|-------------|
| » իս       | չիս         | »           | » իս         | »          | » էի        |
| » է        | չէ          | »           | » է          | »          | » էր        |
| » ինք      | չինք        | »           | » ինք        | »          | » էինք      |
| » իք       | չիք         | »           | » իք         | »          | » էիք       |
| » ին       | չին         | »           | » ին         | »          | » էին       |

ԱՊԱՌՆԻ

Conj. periphr.

ԱՊԱՌՆԻ ԱՆՑԱԼ

| Կու. կարթում | չեմ կարթում | Կարթումու իմ | չեմ կարթումու | Կու. կարթումի | չէի կարթում |
|--------------|-------------|--------------|---------------|---------------|-------------|
| » »          | » իս        | »            | » իս          | »             | » կարթումի  |
| » »          | » չի        | »            | » է           | »             | » կարթումի  |
| » »          | » նք        | »            | » ինք         | »             | » կարթումին |
| » »          | » ք         | »            | » իք          | »             | » կարթումիք |
| » »          | » ն         | »            | » ին          | »             | » կարթումին |

Ստորադասակ. եղ.

Պարտադրակ. եղ.

Ստորադ. ք.

| Կարթում | չէ կարթում | Կարթում | չէ կարթում | Կարթում | չէ կարթում |
|---------|------------|---------|------------|---------|------------|
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |

Հրամայկ. եղ.

Անորոշ դերք.

Ներկայ դերք.

| Կարթում | չէ կարթում | Կարթում | չէ կարթում | Կարթում | չէ կարթում |
|---------|------------|---------|------------|---------|------------|
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |
| »       | »          | »       | »          | »       | »          |

ԱՆԿԱՆՈՆ - ՊԱԿԱՍՍԱՒՈՐ ԲԱՅԵՐ

| Դիդիմ ՆԵՐԿԱՅ   | ԱՆՑ. ԱՆԿԱՏ.    | Ունիմ ՆԵՐԿԱՅ     | ԱՆԿԱՏԱՐ        |
|----------------|----------------|------------------|----------------|
| Գիդիմ չիմ գիդի | գիդէի չէի գիդի | ունիմ չունիմ     | ունէի չունէի   |
| Գիդիս չիս »    | գիդէիս չէիս »  | ունիս չունիս     | ունէիս չունէիս |
| Գիդէ չի »      | գիդէի չէի »    | ունէ(ի) չունէ(ի) | ունէք չունէք   |
| Գիդիք չիք »    | գիդէիք չէիք »  | ունիք չունիք     | ունէիք նն.     |
| Գիդիք չիք »    | գիդէիք չէիք »  | ունիք չունիք     | ունէիք         |
| Գիդին չին »    | գիդէին չէին »  | ունին չունին     | ունէին         |

| Կամ ՆԵՐԿԱՅ  | ԱՆԿԱՏԱՐ     | ԿԱՏԱՐ.        | ՀՐԱՄԱՅԱԿ.                 | ԴԵՐԲԱՅ       |
|-------------|-------------|---------------|---------------------------|--------------|
| Կամ չըկամ   | կէի չըկէի   | կացայ չըկացայ | կաց, կացի(ր)              | նեղկայ—կացոյ |
| Կամ չըկամ   | կէիք չըկէիք | կացար չըկացար | կացէք անցեալ—կացիլ, կացած |              |
| Կայ չըկայ   | կէր չըկէր   | կացաւ չըկացաւ |                           |              |
| Կանք չըկանք | կէինք       | կացանք        |                           |              |
| Կաք չըկաք   | կէիք        | կացաք         |                           |              |
| Կան չըկան   | կէին        | կացան         |                           |              |

Կամ-ին զուգընթաց է կլնալ բայը. կէնում իմ, կէնում էի, կու կէնամ, կու կէնայի, մի կէնա, մի կէնաք, կէնալ, կէնօղ, կէնալու, Անցեալ կատարեալ և նրանից կազմուող ձևերը փոխարինում են կամ բայով—կացայ, (անց) կացնիլ նն:

ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅ՝ պիտիմ, պիտիս, պիտի, պիտինք, պիտիք, պիտին. (անկասաւ՝ պիտէի, պիտէիր, պիտէր, պիտէինք, պիտէիք, պիտէին):

Աւելի գործածական է պիտի անորոշ ձևի կապակցութիւնը ստորագոսական եղանակի հետ. պիտի կարթամ, պիտի կարթաս, պիտի կարթայ և այլն:

ՆԱԽԴԻՐՆԵՐ ԵՒ ՅԵՏԱԴԻՐՆԵՐ

ՆԱԽԴԻՐՆԵՐ 1) Առանց. Սէլաւի պէս առանց ցամքիլ դուն չուտօլ խարաք մի անի.— Դաստամազըդ նամ չի ուզի: Առանց հուսիլ կու օլըրդի.— Մութըն տիղը լուս իս տալի առանց կըրակ վառ բաց արած:

2) Լիդ. Մըհլամըս հիդ եարին մընաց.— քիդ գարթարած տէսնիմ հիդ ծաղկադարթին:

### ՅԵՏԱԴԻՐՆԵՐ

Ամա. Լալ բաղէշխան իս ինձ ամա:

Ավէլ. Աստուած վըկայ աշխարհումն իս քիզ ազէլ հար  
չունիս:

Ավէլի. Բօյէմէդ չուրս մասն ավէլի:

Էգիվըն. Ղաստ արա՝ էլ լավ օրէրուն էդիվըն հասնիս, քա-  
մանչա:

Էգնէն. Միւր էդնէն թամամ աշխարհս սօլ քաշէ:

Խաթրի. Հօքուդ խաթրի մարմնուդ ումբրը կէս անիս:

Խաթրու. Գիշէր ցէրէկ հարի խաթրու ջիգարու երած գիդէ-  
նաք. — դ'արուկ ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին:

Հիդ (յետադիր). Ձիմ կըշտանում գօղալի հիդ խօսալօլ. —  
կարմիր վարթի հիդ բաց կուլի. — բաց կուլի հիդըդ խօսողըն. —  
դուն ուրիշի հիդ մի խօսի. — դուն քու մըտկի հիդ մի էհա:

Համա. Մէռնէլու համա չիմ հօքում, գիդի համա իմ լալի. —  
եդի համա իմ լալի. — գիդի համա իմ լալի. — տիդի համա իմ լա-  
լի. — ծիդի համա իմ լալի. — թիդի համա իմ լալի. — գիդի համա  
իմ լալի:

Միգիդ. Մէ խօսէ միգիդ:

Մէչըն. Նար, մըտիլ իս բաղչի մէչըն. — սըրտիս մէչըն ա-  
րին մընաց. — ես քիզ գօլիմ խաղի մէչըն. — ման իս դալի բաղի  
մէչըն. — սիրոյ սիրմըդ սըրտիս մէչը ցանէցիր. — բաղչի մէչըն  
ման դալօլ. — պըտուտ գու քաս բաղչի վըրայ. — մըտիլ իս բաղ-  
չի մէչը:

Մօղըդ. Էրնէգ մօղըդ նըստօղ հարին. — մօղըդ նըստօղըն  
կու հարի:

Նըման. Ես մի փուքըր նալի նըման. — դուն օսկէ դափա-  
դի նըման. — շուդկըդ արէգագի նման է. — Աստուած վըկայ  
սիրաւն էրից ջէյըանի նըման մալըդ. — վարթի նըման բաց իս  
էլի. — բուլբուլի նըման լացիլ իմ. — կու հալիս մուլի նըման. —  
անց կաց փիանդադի նըման. — ծօվըն նընգած ամբի նըման. — չըկայ

քիզի նըման:

Պէս. Սիրարս լուրի պէս խօրվեցիր. — ես մէ դարիր քու-  
րուլի պէս. — չուռ իս գալի բուլբուլի պէս. — հուարդ գուքայ սըն-  
բուլի պէս. — սուփրի մէշըն թայգուլի պէս. — բաց իս էլի դուն  
գուլի պէս:

Վըրայ (նշանակում է չվրայ). Պըտուտ գուքայ բաղչի վըրայ:

» (նշանակում է շքան). Քիզանից հիւանալըս մէռնէ-  
լուս վըրայ դըժարա:

Վըրէս. Հէնչափ ըլի դուն վըրէս լաւ:

Քիզիդ. Մաշվեցայ քիզիդ. — շատ մարթ քիզիդ կու եաշվի:  
**ՄԱԿԲԱՅՆԵՐ.**

Անցադ. Անջադ դըցիս էշիդ մէշըն:

Առաջ. Առաջ չայի դափա գուղիս:

Արիվիլ, արիվիլ. Արիվիլ, արիվիլ, հարավ ու հիւսիս:

Ավայ. Ավայ քու տէնօղըն մէռնի:

Արնափամլի. Հաշվեցայ արնաքամլի:

Ափով. Ածիս խուղըն վըրէս ափով:

Բարաթ բարաթ. Հաքածըդ բարաթ բարաթ է:

Բաղուսըն. Բաղուսըն վարթ ու մանիշակ:

Բըլփամ. Բըլքամ մէ մարթ ռաստ գայ. — բըլքամ դարդիս

անէ չարա:

Բօլօրդ. Բօլօրքըդ գօղալնիր շարած:

Գիղուսըն. Գիղուսըն՝ մէլիք, տանուտէր:

Դարէրով. Օրըս էսպէս անցի կացի դարէրով:

Դըժար հալի. Պառկած իմ դըժար հալի:

Եանա եանա. Ման իմ գալի եանա եանա. — գիշիք ցէրէկ

ման իմ գալի էշիէդ եանա եանա, գօղալ:

Եարէրով. Ման իս գալի բաղի մէշըն եարէրով:

Էն գըլիւն. Դուն էն գըլիւն իմաստուն իս. — ես խօս էն

գըլիւն էրած իմ. — դուն խօս էն գըլիւն գօլած իս:

Լնէնց. Էնէնց կուլայ քու սիրօղըն:

Էթսով. Խըմիլ իս էշիւով շարքաթըն:

էս հարօլ. Լէյլի Մէջլուսն էլ չի էլի էս հալօլ. էս դ'աղար.  
ես էս դ'աղար դարդ ունէնամ:

Լսպէս. Օրըս էսպէս անց է կացի. էսօր. էսօր իմ եարին  
տնայ:

Յաճաք. Ուրիշ թահար իս, գօլէլի. քարիփի պէս. գօլքըդ  
ասիմ թարիփի պէս:

Իժուս. Եփ մէռայ, իժուս տիս էկաւ. իսսակ. դու քու  
սիրտըն իստակ պահէ:

Լամգօլ. Լամգօլ կու խօսիս. խան-խան. խան հիդ կէհամ,  
խան գուքամ.— Խարէրօլ. վարթի նըման բաց իս էլի խարէրօլ:

Խափօլ. Ինձ գալթէցիր խափօլ, նազանի. խիս. գուգու-  
նըս էլ խիսս բաց է անում.— Աստուած վըկայ խիսս դըժար է:

Կամաց. Մի քիչ կամաց դընս, գօղալ. ճալալ. հալալ մըտիկ  
արա հաց ու աղի. ճամամ. էշթէմէդ համան իմ լացի:

Համասա. Մարթ պիտի համաշա բէրանըդ տընդդէ.— համա-  
շա քիդ պիտինք տէանի՝ աշքըդ արին.— գուզիմ թէ համաշա դը-  
րանըդ դամ ուխտ.— համաշա իմ եարի ճամբին կանգնած իմ.—  
համաշա, եար, քիզիդ խօսիլ իմ ուզում.— մարթ համաշա մէկ չի ըլի:

Համօլ. Արի համօլ դ'ուլուդ արա. ճարալ, ճիսսիս. Արի-  
վիթ, արիվուս, հարալ ու հիսսիս:

Լէյրան. Տարար խիլքըս, հէյրան արիւր. ճէնչափ(ք). հէնչափ  
ըլի՝ դուն վըրէս լաս: Հէնչաք ըլի կէնաս բարօլ, նազանի:

Լէռու սիղացէն. Հէռու տիղացէն գալիս իմ:

Լէսսի. էշխըն հէստի կըրակ ունի.— մէ հէստի քարզահ իմ  
բէրի.— հէստի տիղ դուքան բաց անիմ:

Ձէռումըն. Աստուծու ձէռումըն հիշտ է. նկնկալօլ. պըտուս  
գուքայ բաղչի վըրայ ճկճկալօլ:

Մազամ. Մազամ մէռաւ Սայեսթ Նօվէն.— մազամ էլ օջօլ  
եար չի՝ սիրի — մազամ սիրտըս ունիմ քարած:

Մէկ մէկ. Ձէռնէմէս վէր կօծիմ չանգիրըն մէկ մէկ.— մէ  
ճալում. ես ու դու էրվինք մէ հալում:

Նահալս սիդ. Նահալ տիղ դ'աղար մի անի.— Օլ տասլ թէ

նահախ տիղ եարիդ մէջըն եար՝ անին, — դուն իս ասի նահախ տիղ եարի սիրտըն դայ անին:

Նուր. Աշխարումըս նուր դուս էկած Թագա նուգըար իս. — նուր մէկանց. նուր մէկանց քաբար մի անի:

Մէ ցափար. Թէ մէ շափաթ քիզ չիմ տէսնի. — ցարէրով. դօշիդ պիտի լալ ու ալմաս շարէրով:

Շուսով. Դուն շուսով խարար մի անի — Ուսի. ուստի գուքաս դարիբ բուլբուլ:

Ուրիւ սիդ. Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ. — չարէրով. գուշմանի լիզուն մընջանայ շարէրով:

Չափով. Չը կայ քիզի նըման չափով, նաղանի. — չը խէրած. ծառըս չը խէրած գիղէնաբ:

Չօլըն. Եկ նընգնինք չօլըն վուր հասնինք գօլըն. — Ունգէ ունգ. Թահրըդ ռանգէ ռանգ իս անուս:

Սարէմէն. Սարէմէն կօսին. — սարումըն. սարումըն սըմբուլ սուսան իս:

Սիլա սիլա. Հակիրբս է սիլա սիլա. — սիւրով. ես քիզիդ սիւրով դամ անիմ:

Վաղ. Օվ վաղ գընաց վարթըն քաղից:

Վուց. Քըմօղըն վունց կըշտանայ՝ դուն կաթնէ ախպուր իս. — աշտը, վունց դիմանամ ես էսչափ դարին. — Սայեաթ Նօվէն վունց գընջանայ. — բաս վունց Թարիփ անիմ. — վունց Մաջլուս եմը իմ ասում:

Վուրսիդ. Վուրտիդ հասնիք, վուրտիդըն սուք, վուրտիդ սօյրաթ խաղ է ըլում. — վուրտիդ ժամ, վուրտիդ պատարաք, վուրտիդ սիրով տաղ է ըլում:

Տարէմէն. Տարրէմէն կօսին. — փանգարա. էրկաթըդ փանջարա արած. մէ փուրբ. մէ փուքըր էտէնց դիմացի:

Քաղաֆսիդըն. Քաղաքաիդըն սուլթան խան իս. — քարէմէն. քարէմէն կօսին:

### Շ Ա Ղ Կ Ա Պ

Աբա. Աբա Բնչ անիմ. — արա խաթըրդ ջամ իս անում. —

ախր. տիրր մին օր կու տաշվի:

Բաս. Բաս ինչի՞ ձէնն չի գալիս. ես... ես. ես ինձի կոր-  
ցըցէք ես մէ բան արէք:

Եփ. Եփ մէռայ իժու՞մ տիս էկա՞վ. — եփ բըլբուլըն միտկըն  
պծա՞վ. — եփ կու հաքնիս ալ ու ասլաս, եփ նըստում իս, թութի  
դուշ իս. եփ կանգնում իս, ուշ, նազանի. — եփ մէռանիս, վըրէս  
լացի:

Էյ. Էյ ապրէլու ումիկ չունիմ:

Թէ (=եթէ). Էրնէկ քիզ, թէ էս անիս. — Թէ դուզիս, վուր  
դատատան չը տէսանիս. — Թէ էսանց էլ սուչ ունէնամ. — Թէ  
մանուշակ ասիմ. — Թէ ջափայիր ասիմ. — Թէ դուն էշիի հիդ ման-  
գալըն հարցընիս. — Թէ բէմուրվաթ հարի հալըն հարցընիս:

Թէ (=որ). Զիս ասում, թէ լաց իս էլի. — հէնց գիգիմ, թէ  
չուրս տարի է քաղաքըն քարվան չէ մըտի:

Թէգուզ. Թէգուզ դուս գայ խաթու խալըդ. — Թէգուզ սի-  
րիս, Թէգուզ ատիս, Թէգուզ համբուրիս. — Թէգուզ մըտօք ճարտար  
ըլի. Թէգուզ մարքարիտով լիքըն. Թէգուզ սաղափ սաղա ըլի. —  
Թէգուզ արէգազ լուսնիակ, Թէգուզ հուրիգաղա ըլի. — Թէգուզ քու  
քաշըն մարքըրիտ տան բրօյի բրօյի. — Թէգուզ քու քաշըն ալմաս  
տան բրօյի բրօյի. — Թէգուզ Թաքալուրըն կանչէ, Թէգուզ Լօղը-  
ման հէքիմըն. — Թէգուզ ըլիմ, Թէգուզ չըլիմ:

Թէ վուր. Թէ վուր սարէրուն հանդիբիս. — Թէ վուր լուսին  
ասիմ. — Թէ վուր քաղաք տիդ հանդիբիս:

Թուդ լի. Թուդ լի ահ ու դար ունէնամ:

Խօմ. Դուն խօմ էն գըլխէն գօված իս. ես խօմ էն գըլխէն  
էրած իմ:

Կանց. Կանց եօթըն իմաստասիրացըն շատ է. — էրէգ լու-  
էր կանց վուր էսօր. — կանց քիզ լու հուս չի ունէնայ. — ումիս օր  
կանց միգի շատ սիրիս:

Համ. Համ դուն իս գօզալ Թաքալուր:

Ու. Կէրթամ ու ման գուքամ վանքիւրըն մէկ մէկ:

ԶուՅ. Զուն աշխարհ է անցողական. — ԶուՅԻ. Հունքի ինձ  
զավթէցիր խօսքով. — Հունքի իլթիմազ իմ անուս:

ՎուՅ... ՎուՅ. Վունց մէնում իմ, վունց թէ սաղ իմ —  
վունց դօքա ունէ վունց չսփար. — վունց արեգադը շուղկը տայ,  
վունց լուսինը լուս անէ. — վունց գըրանքում կայ, վունց դավ-  
թարումըն:

ՎուՅ օր վուր. Վունց օր վուր դարիք բըլբուլըն մէ տա-  
քով բաղին կարօտ է:

Վուր. Զարդդ ռաշի կուղէն պիտի, վուր դուն խօսիս քաղ-  
ցըր հանգով. — էն բանն ասա, վուր Աստուծու շարքումն է — թէ  
դուզիս, վուր դատաստան չը տէսանիս:

### ԶԱՅԱՐԿՈՒԹԻԻՆՆԵՐ

Ա՛խ. Աշխարհումըս ան չիմ քաշի. — ան չի քաշի. — օվ չէ  
տէսի մէկ ան կօնէ:

Ա՛ն. Ես սըրտումըս ան չիմ ասի:

Ամա՛ն. Կանչում իմ մամն. — եմր, մամն. — ահ ու զար իմ  
քաշում մամն. — ապրի՛. ապրի քու ածօղըն:

Ափսոս. Ափսոսալու հազար ափսոս:

Եա՛ր. Վունց Մաջլում եմր իմ ասում. — եմր ուշկըս գը-  
նաց. — եմր, մամն:

Էրամի. Էրանի ձիդ, ծաղկած վարիք. — Էրնէկ. Սայեսթ Նօվա,  
Էրնէկ քիդ. — Էրնէկ քու առնօղին ըլի. — Էրնէկ ըլի քու տիրու-  
չըն. — Էրնէկ մօղըդ նըստօղ եարին. — Թաք գիդէնամ տարիդ, Էր-  
նէկ. — մօղըդ նըստօղ եարին Էրնէկ — փաթութ սուսանբարիդ Էր-  
նէկ. — խարիդ Էրնէկ — ունքիդ սամանդարիդ Էրնէկ. — նըման  
բարէ բարիդ Էրնէկ — Թահարիդ Էրնէկ. — սուսիի սազանդարիդ Էրնէկ:

Ղուրբան. Ղուրբան ըլիմ մուրվաթումըն:

Մասա՛դ իմ. Անգաճ արա, մատաղ իմ քիդ:

Նալա՛թ. Նալաթ քու էյթիբարին:

Վա՛յ. Վայ քու դարին, Սայեսթ Նօվա — վայ կու կօրցը-  
նօղին ըլի:

Քաւկա. Քաշկա մարթ վունց դայ, վունց խօսի:

## ՊԱՐՍԿԵՐԷՆ ՏԱՐՐԸ ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԵՐԿԵՐԻ ՄԷՋ

Սայեաթ Նովայի ուսումնասիրութեան կարևոր հարցերից մէկը, որ պատշաճ ուշադրութեան չէ արժանացել մինչև օրս, այն է թէ արդեօք Սայեաթ Նովան, որ անվարժ էր հայերէն ուղղագրութեան մէջ և վրացերէն (ինչպէս և հայերէն) գործ է ածել ժողովրդական և ոչ գրական լեզուն, ինչ սատիճանի համութիւն կարող էր ունենալ պարսկերէնում, որ աւելի հեռաւոր և դժուար լեզու էր:

Այս հարցի պատասխանը որոշ չափով մենք կը գտնենք բանաստեղծի ԻԳ. տաղի առթիւ գրած նկատողութեան մէջ: Են մղղսու վուրթի Արութին պատուց ինչօրի եարսուն տարին զլուխ դրի ամէնան խաղին, ամա սուրբ Կարապիտի կարօղութէնօվ սօվ-րէցայ քամանչէն ու չօնգուրն ու ամբուրէն: Նա ուրեմն պատուց (փոքր հասակից) ինչօրի եարսուն տարին (մինչև 30 տարեկան հասակը, այսինքն առնուադն քսան տարի) զլուխ է դրել ամէնան խաղին (բնական է, և խաղերի յօրինելու արուեստին, որի աղբիւրը պարսկական էր) և սովորել է նուագել երեք գործիք: Այն փայլուն ընդունակութիւններով, որոնցով օժտուած էր Սայեաթ Նովան, դժուար չէ նախատեսել, թէ ինչ հետեւանքների հասած կը լինէր նա իր ձեռնարկի մէջ այդ երկար ժամանակամիջոցում:

Եւ իրաւ, մեր աչքի առաջ ծաւալուում է Սայեաթ Նովայի պատկերների բոցեղէն լեզուն, որի ստուար մասը պարսկական է. մենք տեսնում ենք ազատօրէն գործածուած պարսկերէն և արաբերէն ընտիր բառեր, երբեմն բառերի կապակցութիւններ, գործածուած քերականական օրէնքներով, տեղեկութիւններ իրանական գրականութիւնից և Իրանի անցեալից:

Այս բոլորի վրայ աւելանում է այն, որ բանաստեղծն աւսում է. «էրէսըդ՝ փարսէվար ասիմ, նըման է շամսու դ՛ամարին» (ԻԵ VI 1). Նա ոչ միայն գիտէ, որ շամս և դամար պարսկերէն (արաբերէն) արեւ ու լուսին կը նշանակէ, այլ և որ Իրանի բանաստեղծները գեղեցիկ դէմքերը միշտ նմանեցրել են շամս և դամարի, Հարցի միւս կարեւոր կողմն այն է, որ նա գիտէ «փարսէվար ասել»:

Սայեաթ Նովան ընտրել է որպէս բանաստեղծական լեզու իր մայրենի (Քիֆլիզի) բարբառը, որ (ինչպէս և միւս բարբառները) վխտում է պարսկերէն բառերով. բայց այդ բառերը չեն, որ ներկայում հետաքրքրում են մեզ, այլ այն պարսկերէն-արաբերէն բառերը, որոնք մուտք են գործել Սայեաթ Նովայի քերթուածներէ մէջ որպէս հետեանք լեզուի ուսումնասիրութեան:

Այսպիսի բառեր, որոնք ելնում են բարբառային գործածութեան սահմանից, առաջին հինգ տաղերի մէջ կոպիտ դիազնոզով հասնում է 21-ի. այդ բառերի մի մասը գուտ պարսկերէն է (պ.), իսկ միւս մասը արաբերէն (ա.), որոնք գործածական են պարսկերէնում: Այդ բառերը հետեւեալներն են ըստ գործածութեան ընթացքի:

1 Նաբազ (نابى նադէս) ա(րաբերէն) թերի, անկատար.

2 Ղաստ (قامت դ՛տսդ) ա. դիտաւորութիւն, նպատակ.

3 Լալ (لاى լուլ) սուտակ րանջ. բառարաններում այս բառը ցոյց է տրւում որպէս արաբերէն բառ, բայց նա արաբերէն չէ, այլ պարսկերէն է և արտասանուել է հայերէնի պէս—լալ. համեմ. «Ն (լալէ) կակաչ, որ, ի միջի այլոց, նոյնպէս գործ է ածւում սիրուհու կարմիր շրթունքի տեղ, ինչպէս և (յա լուլ) բառը:

4 Հանգ (كانت ահանգ) պ(արսկերէն)՝ հնչիւն, ներդաշնակութիւն, տոն.

5 Բանգ (كان բանգ) պ. թմրեցնող դեղ, պատրաստած կանեփի տերևներից.

6 Բափա (بى բոֆ) պ. տան դրան առաջի նստարան. ԸՕԴ-

nicbe պատի վրայ ներոխց.

7 Զօղ (زاد) օ. ճաշակ, հանոյք, հրճուանք.

8 Սափա (سافا սոփա) օ. մաքրութիւն, հանոյք, զուարճութիւն.

9 Իլթիմազ (التماس էլթէմաս) օ. խնդրանք, թախանձանք, պաղատանք.

10 Բաղ'իփ (رب) օ. ակոյսեան.

11 Բաղ'ամ (رآء բաղ'ամ) օ. հրովարտակ, հրամանադիր.

12 Ազաբ (آب) օ. քաղաքավարութիւն, բարեկրթութիւն.

13 Աբ (آب) օ. ամօթ.

14 Զարնիշ (زرشان զարնշան?) օ. ոսկեհում.

15 Մուշկ (مشك մոշկ) օ. մուշկ, մուսկուս.

16 Անբար (عبر) օ. յամպար.

17 Ղարար (قرار զ'արար) օ. հանգստութիւն, յարմարեցում, համաձայնութիւն.

18 Բըրօլէ (برو բուր) օ. բիւրեղ.

19 Ինթիզար (انتظار էնթէզար) օ. ակնկալութիւն, սպասում մէկի.

20 Զուկուն (زنجون ջոնուն) օ. խելագարութիւն, խելայեղութիւն, դիւահարութիւն.

21 Շահիփ — Ախլերդեանն ընդունում է որպէս համապատասխան բառ պարսկերէնում շահրիֆ, որ և թարգմանում է «մեծ, բարձրագոյն, շահապաշտ, այս բացատրութիւնն անբաւարար է. «շահրիֆ» նշանակում է «ազնիւ, նշանաւոր» և տիտղոս է Մահմէդի ժառանգներէ. շահիփ հաւանականաբար արաբական صاحب (սահէբ-սահիբ) բառն է, որ նշանակում է տէր, պարոն, ընկեր:

22 23 Հուքմի հէքիմ. երկու բառ է, միացած էզաֆէով (հուքմ-ի-հէքիմ) հինգերորդ տաղ, հինգերորդ տուն, երկրորդ տող (b V 2). 1) հուքմ (حكم հոքմ) օ. սովորական նշանակութիւնն է «հրաման», բայց և նշանակում է իշխանութիւն (Exercising autho-

city, judicial authority). այստեղ գործածուած է իշխանաւորի իմաստով՝ իմ իմաստուն իշխանաւորս. սակայն կարող է հրամանս իմաստով գործածուած լինել. այդ դէպքում հէքիմն այժմուայ առաջանութեամբ պէտք է հաքէմն (հէ) կարգալ, որ նշանակում է դատաւոր, իշխանաւոր (ներկայումս՝ նահանգապետ). հմ. ԺԴ V 3 և այդ դէպքում կը թարգմանուի իշխանաւորի վճիռը, հրամանը:

2) Հէքիմ (هكيم հոքիմ) ա. նշանակում է իմաստուն, բժշկիչ, բայց ինչպէս յիշուեց, կարող է համապատասխանել հէ (հաքէմ) բառին, որ նշանակում է դատաւոր, իշխանաւոր (նահանգապետ):

24 Զալում (زالم զալէմ) ա. բռնակալ, դեսպոտ.

Այս, ինչպէս և հետագայում բերուած բառերից մի. մասն անշուշտ գործածական է բարբառներում, բայց, իհարկէ, ոչ միակերպ և ոչ ցայտուն նշանակութեամբ:

Այսքանը բաւական համարելով ցոյց տալու համար, թէ որքան առատ է Սայեաթ Նովայի մօտ պարսկերէն-աւարերէն զրական բառերի գործածութիւնը, կանգ առնենք նրա հետագայ տաղերում գործածած ընտիր և հազւագիւտ բառերի վրայ, որոնք Սայեաթ Նովայի գործածած զրական բառերի մի որոշ տոկոսն են կազմում միայն:

1 Փիանդազ (پانداز փայոնդազ) պ. նշանակում է «տաքի զցած», այսինքն այն գորգերը, որոնցով զարդարում էր ճանապարհը թագաւորի և այլ մեծամեծների մուտքի ժամանակ:

2 Բունիաթ (بنیاد բոնիադ) պ. հիմք, ֆունդամենտ:

3 Զուքամ (زکام շոքամ) պ. վտանգ:

4 Ութ ու խալ (اوٹ خال օտ օտալ ա. այտ. خال օտալ ա. «խալ» այտի խալ. բայց պարսկերէնում գործածական է خال و خان (խաթ օ խալ) «գիծ և խալ» — շէնք ու շնորհ իմաստով:

5 Իդրար (ادرا) էդ'րար) ա. խոստովանութիւն, հաստատումն համաձայնութիւն:

6 Ադալաթ (ادلالت էդալտթ) ա. արդարութիւն, արդարադա-

տութիւն:

7 Լամպ (للم لամպ) ա. շրթունքները լիղկելով:

8 Միրա (میرا միրէ) ա. ներդաշնակութիւն, համաձայնու-

թիւն:

9 Փարա (فرا ֆորա) ա. փայլուն, հոյակապ, շքեղ:

10 Քիշխանդ (خشخاش քիշխանդ) ա. ծաղր:

11 Բէհուազար (بها به' + բազար) ա. և ա. վաճառ ու բազար:

12 Գարդիշ (گاردش գարդէշ) ա. դրօսանք, գարդիշ տալով—

դրօսեցնելով, ման դալով:

13 Սաջար (سجرجا շոջոր) ա. ծառ:

14 Նըվախտ (نواخت նէվախտ) ա. փաղաքշանք.— ներդաշնակ

երգելը.— փորձելը:

15 Փաք (طبخ բաք) ա. ահ, երկիւղ:

16 Մաթահ (مطامع մոթաւ) ա. ապրանք:

17 Պափ (طاف գափ) ա. boasting, պարծենալը:

18 Բափա (بافا վոֆա) ա. հաւատարմութիւն:

19 Դիար (دیار դիյար) ա. գաւառ, երկիր:

20 Հէյրաթ (حيت هէյրաթ) ա. երկիւղ և պատկառանք ազդող,

իմպոզանս:

21 Հադիդ (دحد հոդիդ) երկաթ, երկաթէ գործիք:

22 Խնքար (خنك էնքար) ա. ուրացում, ժխտում:

23 Խաթարանդի (خاندان խաթէմ բոնդի) ա. ա. մոզայիկ:

24 Զարուր (زارر գորուր) ա. անհրաժեշտ, անյետաձգելի:

25 Հանդամ (داند هանդամ) ա. պարսկերէն բանդամ (անդամ, իրան, կերպարանք)—հասակ, բարձրութիւն, համաչափութիւն:

26 Զուրիաթ (زادز գորրիյէ) ա. սերունդ և այլն:

Ախլերդեանն, անշուշտ, շատ է աքնել Սայեսթ Նովայի գործածած պարսկերէն բառերի իմաստի վրայ, որ իրօք շատ բարդ է: Զուրկ լինելով այդ մարզում պահանջուած կատարեալ միջոցներից, նա նշանակութիւնները դնում է մեծ մասամբ ըստ կամա-

յականին. այս դէպքում նա սովորաբար թուրքերէնին է վերադրում շատ բաներ, որոնք արաբական կամ պարսկական են, այսպէս աւալ (جاء ավալ) ա. առաջին. — խայէն (چای խայէն) ա. — թաք լն (թաք) պ միայն թէ, միակ և այլն և մեծապէս շփոթում է օտարազգի բաների ծագումը<sup>1)</sup>. այդ է պատճառը, որ Ախվերդեանի բազմաթիւ բացատրութիւնները չեն արդարանում և կասկածելի են, Որոշ դէպքերում նա շանմէկներէն է համարում բաներ, որոնց ծագումը և իմաստը պարզ է:

Ստորեւ բերուած են մի երկու բացառութեամբ այն բաների նշանակութիւնները, որ Ախվերդեանն անլուծելի է համարում:

Է IV 2 Քալազըն (کالا زرين) պ. անախորժութիւն, սրտնեղութիւն:

Է IV 3 Զալըն (جاء زالى) ա. (բարձր) խօսակցութիւն, սկանդալ. նոյնը և Ք IV 5:

ԺԶ IV 4 Վրացերէն նօսրգիր զ և խ տառերը շատ նման են իրար և հաւանական է, որ դաւթարում լսալու է եղել և Ախվերդեանը զալու է կարդացել. այդ դէպքում կուենանք արա (խարա), որ միևնոյնն է արա և (ստեգէ խարա) պ. որձաքար, գրանիտ, կամ խարա—ալեծուի մետաքս: Զարա նշանակութիւն չունի:

ԺԷ IV 2 Սաղչում (ساجد—ساجد սող, սողչէ) պ. կամար, կամարակապ տանիք:

ԻԶ III 2 Փառաղաթ (فراغ فرات) ա. հանգիստ (աշխատանքից յետոյ):

ԻԹ I 1 Դիվաց—դներին:

ԼԴ II 1 Շըբար (چرا زبارة) պ. որս:

ԼԵ II 4 Շանգ (چرا زبارة) պ. գեղեցիկ, շնորհալի, էլէգանտ:

» Շուխի (چرا زبارة) պ. կատակ, դուրճութիւն:

» Շափանգ պ. հաւանականաբար շա(դ) բանգ — ուրախ ձայն, ինչպէս շաբաշ = շաղբաշ՝ ուրախ եղիր:

1) Այդ ուղղութեամբ արուած է մօտ 180 շփոթութիւն:

ԼԹ II 4 Սամանդարիդ (جام سامانداری) պ. սալամանդրա (մո-  
ղէս), որ գիցարանութեան մէջ մի հրեղէն էակ է ներկայանում),

ԽԱ II 3 Սալիդ (سلي سامليد) ա. տերև:

Ճ Սաղադ (جامه ساهاد) թուրք. կապարն (Ախվերդ-  
եանն ինքն էլ է ուղիղ բացատրել 106 էջում:

ԽԲ V 1,2 Սալբադալ բովուն — քովուն ?

ԽԴ XXIV 1 Թաբաղըն, հաւանականօրէն خاب (Թորբախ) ա.

խոհարար:

ԽԵ II 4 Նովար (ناب نووار) ա. նարոբ, հնդկական պա-  
յազատ:

Ճ Նաջար (ناب نهجزار) ա. հիւան, եթէ բառն աղա-  
ւադուած չէ:

Օտարազգի բառերի այս տարափը, որ Սայեաթ Նովայի գոր-  
ծածած բառերի մի մասն է կազմում միայն և կիրառուած է ոչ  
թէ արձակ, այլ չափական երկերում, կասկած չի թողնում, որ հե-  
ղինակը մեծ հմտութիւն ունի պարսկերէնի մէջ:

Կան այլ հանգամանքներ ևս, որոնք դրդում են այդպէս մը-  
տածել: Սրանցից են քերականական ձևերի ուղիղ գործածութիւնը.  
ինչպէս օր. «չը կայ քիզ պէս հուքմ ի հէքիմ» չը կայ քեզ պէս ի-  
մաստուն իշխանաւոր. «Դուն Բոստամի Զալ թաքավուքս դու Զալի  
ուղի («Զալեան») Ռոստոմ թագաւոր, որ ոչ միայն անհասկանալի  
է եղել Հայ Դրողների Կովկաս. Ընկերութեան հրատարակութեան  
բառարանը խմբագրողին, որ թարգմանել է «Բուստէմի որդի Զալ»,  
այլ և շփոթութեան մէջ է ձգել Սայեաթ Նովայի տաղանդաւոր ու-  
սումնասիրող Յովհաննէս Զաւրեանին, որ «Վէմձի Ե. գրքի (1934  
թ. մայիս—յունիս) 18 էջում գրում է. «Երակլիին համեմատում  
է Բոստամի ուղի Զալի հետ— Դուն Բոստամի Զալ թաքավուքս,  
մինչդեռ Ախվերդեանն ուղիղ է հասկացել այս արտայայտութիւնը  
և գրում է «Սայեաթ Նովա» էջ 67. «Զալի ուղի Բիւսէմ՝ որոյ  
քաջութիւններն գովաբանում է Ֆիրդոյսին իր Շահնամէում: Նոյն  
արտայայտութիւնը Բոստամի Զալ գտնում ենք և ԽԸ տաղի մէջ

14, նոյնը Ծ II 1 «Բօստօմի Զօլին», փոփոխակի մէջ՝ «Բօստօմի Զալուն», Այնուհետեւ Զ I 3 մենք տեսնում ենք տեղեցաւ խունի շիգարս, բառացի—այրուեց սրտիս արիւնը, այսինքն արիւնոտ սիրտըս։ Ախպերդեանը խուն-ի-շիգար (սրտի արիւն) թարգմանել է թոք։

Սայեաթ Նովան գիտէ և էզաֆէի չարտայայտուած տեսակը. այսպէս՝ Բօստօմ Զօլըն ԼԱ IV 2, Խօսքով Փաշայէմէն ԻԱ II 4, Սկանդար Զուլդար ԻԱ III 1 ևն։

Սայեաթ Նովան ուզում է ասել (քամանչային) գլուխդ գոհարներով զարդարուած (պիտի լինի) և սրա համար ընդունում է ջաւանիր բառը (چاچو ջաւանէր), որ ջովհոր (چاچو = գոհար) բառի յոգնակին է և արտայայտում է հետեւեալ ձևով. «գլուխդ ջաւանիր քարած»։ ԺԱ III 2 նա ասում է «խօսկերդ անգին ջաւանիր», այսինքն գոհարներ. ԽԸ III 3 «բոլորքդ ջաւանիր» (= գոհարներ) շարած։

Սայեաթ Նովան չի գործածում ընդունուած գոհար ձևը, այլ գործ է ածում (ԼԼ 4) գովհար, որ զուտ պարսկական է (گوجو — գովհոր)։

Նա չէ ասում նուբար (երախայրիք), ինչպէս սովորաբար ընդունուած է մեզնում, այլ գործ է ածում նուգրաւ Լ II 4, որ ոչ միայն զրական է, այլ և արիայիկ է։

Սայեաթ Նովան չէ գործածում ընդունուած ուստա ձևը (վարպետ, ուսուցիչ), այլ գրում է ուստադ. հմ. ԼԷ II 1 ուստադէմէն, որ զրական է։

Նա ծանօթ է Շահնամէի սիւժետներին, ինչպէս Սպիտակ դևի միջնադէպին (տ. Ծ. վարիանտ), որին նա չի անուանում Սիպտակ դև, այլ Սիպտա դև, երևի չը կամենալով հայացնել աստիդ = սպիտակ) բառը, եթէ միայն դա Թիֆլիզի բարբառի ազդեցութիւնը չէ։

Սայեաթ Նովան ծանօթ է Շիրին—Ֆարհադի, ինչպէս և Լէյլի ու Մաջնունի վէպերին, որոնց նա անդրադառնում է մի քանի անգամ։ Նրան ծանօթ են Սկանդար Զուլդար, Լօղման Հէքիմ, Խոսրով Փաշայէմէն թողած Թովուզի թախար, Աշուղ Ղարիբ և այլն։

Աշխարհագրական վայրերից նա յիշում է Հընդստան, Արարատան, Հաբաշ, Ուրումէլ, Փառնգատան, Ղրիմ, Դադստան, Ջինուժաշին, Իրանի քաղաքներից ու վայրերից Շիրազ, Խորասանու Քալաթ, Բադշիան, Աստղաբաշխութիւնից Զոհրա առաղ (زهره) - Արուսեակ մոլորակը:

Սայեաթ Նովայի տաղերի մէջ ակնարկներ կան, որ նա հեռու աշխարհներ է գնացել. եթէ այդ ճիշտ է, այդ հանգամանքը չէր կարող առանց ազդեցութեան մնալ նրա զարգացման վրայ ընդհանրապէս և նրա լեզուագիտական առաջադիմութեան վրայ մասնաւորապէս: Այդ ակնարկները հետեւեալներն են.

ԺԺ III 3 Սայեաթ Նովային ուղղած հետեւեալ խօսքերը. «Մի փութքը էդէնց դիմացի, շուտով Հընդըստան մի էհա՝.— ԻՅ I 1 «Քամամ աշխար պըտուտ էկայ՝ չը թողի Հաբաշ, նազանի»։ ԻԶ II «Էիռու տիղացէն գալիս իմ»... «Էինդու մէջէմէն դուս եկած դիմէթով մաթահ իմ բէրի»:

Սայեաթ Նովային յայտնի են բառերի նշանակութիւնների նիւաններ, նա բանգ (աւանգ) բառը գործ է ածում իր սեպական «գոյն» իմաստով Ա. III 1, ԼԵ II 1, ԼԷ II 2, Խ I 3, ԽԱ III 2, ԽԲ III 2, ԽԴ X 1, ՄԱ II 4. բայց նա այդ բառը գործ է ածում և «խարդախութիւն» իմաստով. հմ. է III 2:

Այդ բոլոր տուեալները արամադրում են մեզ ընդունել, որ Սայեաթ Նովան դիտէր պարսկերէնը գործնականապէս և տեսականապէս. նա մեծապէս խորացել էր լեզուի մէջ, որ ապացուցւում է նրա գործածած բազմաթիւ հազազիւտ բառերով:

Միւս կողմից մենք տեսնում ենք Սայեաթ Նովայի երգերում բառերի ձևեր և արտայայտութիւններ, որոնք մատնում են նրա եթէ ոչ անգրագիտութիւնը, գոնէ լեզուն կատարելապէս իւրացրած չը լինելը. այսպէս՝

1) ԼԷ VI 1 նա գործ է ածում չարխուփալազըն, որ հայկական ռամկաբանութիւն կարող է համարուել և որ պէտք է որ լինէր չարխի փալազըն (چرخه), այսինքն ներկայ արտասանու-

թեամբ չարխէ ֆալագն, որ նշանակում է բախտի (երկնքի) անիւ

2) Բրքօլէ բառը հայկական բարբառի մէջ հնարաւոր է, որ տեղ նա՝ այսպէս կոչուած մետաթեղիսի (փոխանակութեան) է ենթարկուել բօլուր (چال) բառից, բայց զրազէտ մարդը պէտք է խուսափէր այդ ձևի գործածութիւնից:

3) Թիրմէ (متر) չալը երևի հայկական բարբառներում ժողովրդական ստուգաբանութեամբ Թիրման է դարձել Գերման-ի ազգեցութեան տակ. նոյն ձևը գործ է ածում և Սայեաթ Նովան:

4) Ումիդ (ներկայումս օմիդ աս). հին պահլաւական ձևն է օմէտ) հազագիւտ բառ չէ և թէպէտ ուրիշ հայ հեղինակներ էլ գործ են ածում ումիկ ձևը, պարսկերէն իմացող անձը պէտք է կանգ առնէր ումիդ ձևի վրայ:

5) Ղէպի հոչակաւոր հերոս Մաջնունի անունը շարունակ գործ է ածում Սէջում ձևով:

6) Խայիմ ԻԴ XVI 1, Ծ III 2 կամ խայէմ ԼԸ V 2 (դաւաճան, մատնիչ) բառին զուգընթաց գործ է ածուած խայեան ժԱ IV 3, ԽԶ III 2 տարօրինակ ձևը:

7) Գրական օւնիդ (چاد — շահդ, մեղր) գործածուած է Սայեաթ Նովայի մօտ բարբրն (ԺԲ II 1) արտասովոր ձևով:

8) Թովուզի թախտը համարում է Քօղած Խօսքով Փաշայէմէն:

9) چادچو (բահրէթովիլ) բառը, որ քնարական բանաստեղծութեան մէջ ձևն է, դարձել է, երևի ժողովրդական ստուգաբանութեամբ և աշուղական արտասանութեամբ բարիքավուր տ. ԽԳ:

10) Ռախսար ԻԸ II 1 ռահար (մաքսառու) բառն է:

11) Զուլդար (փոխանակ զուլդարնայն, երկեղջիւրանի, մատնում է Սայեաթ Նովայի այս բառը չը հասկանալը. զուլդարնայն նշանակում է տէր, զոյգ եղջիւրներին. զու նշանակում է տէր, ունեցող. քալ յօղը. դարն — եղջիւր. դարնայն — զոյգ. եղջիւր. զուլդարն (առանց այն-ի) նշանակում է եղջիւր ունեցող. զուլդար (=զուլդոր) ոչինչ չի նշանակում:

Այս բոլորից յետոյ ընդհանուր եզրակացութիւն այն կարող է լինել, որ Սայեաթ Նովան հաւանականաբար գիտէր պարսկերէնը գործնականապէս և տեսականապէս, սակայն տեսականապէս նահի՞նաւոր կերպով չգիտէր լեզուն. ինչ վերաբերում է նրա բազմազան և հազազկիւտ բառեր գործածելուն, այդ պէտք է բացատրուի նրա բացառիկ ընդունակութեամբ և տաղանդով:

Նրբ սոյն հատածը առանձին յօդուածով լոյս տեսաւ թեհրանի «Նաւասարդ» հանդէսում, տեղիս բանիմաց անձնաւորութիւններից մէկը թերահաւատեց, որ Սայեաթ Նովան կարող էր պարսկերէնում գրագէտ լինել: Նրա զլխաւոր արգումենտն այն էր, որ պարսկահայկական բարբառներում Սայեաթ Նովայի գործածած համարեա բոլոր բառերը կան, նոյնը եղել է և թիֆլիզի բարբառում և Սայեաթ Նովային բառերի ընտրութեան հարցում ստեղծագործական աշխատանք չի մնացել կատարելու:

Յիշեալ յարգելի անձնաւորութեան և առհասարակ այլ սկեպտիկներին նախ յիշեցնենք Ախվերդեանի խօսքերը. «Պարբերում տեսնելով անհամար օտարազգի բառեր, որոնք գործ է դնում խօսելիս թիֆլիզեցին, բայց ոչ էլ էնչափ առատութէնով, ինչպէս Սայեաթ Նովէն է բանեցնում, պարտք համարեցի և այլն<sup>1)</sup>» և ապա մատնացոյց անենք ի՞նչ տաղի ծանօթութիւնը, որի մէջ Սայեաթ Նովան գրում է. «էսպէս, զիմանի լաւ տիղ ասած. որն գրոց Հայերէն տառէր, որն Վրաց, թուրքերէն էլ ուզում էի հետն խառնել, բայց չը խառնէցի: Թուրքերէն ասելով Սայեաթ Նովան նկատի է ունեցել պարսկերէնը, իսկ եթէ այդպէս էլ չէ, որոնք էին թուրքերէն տառեր, եթէ ոչ պարսկական տառերը: Սայեաթ Նովան գիտէր ուրեմն պարսկերէն առնուազն այնքան, որ կարող էր այդ լեզուի տառերով փոխարինել հայերէնը. իսկ այդ պահանջում է տառադարձական որոշ տեղեկութիւններ և տառերի մանիպուլիացիայի հմտութիւն, որ լեզուի տեսութիւնը իմացողի գործ է: Անշուշտ,

1) Գ. Ախվերդեան «Սայեաթ Նովա», Յառաջարան ԺԶ.

Սայեաթ Նովան գիտէր պարսկերէնը տեսականապէս, բայց ոչ հիմնաւոր: Վերոյիշեալ տաղի համար Ախվերդեանն ունի հետեւեալ ծանօթութիւնը. «էս տաղն գրած էր Հայոց բոլորգիր և վրաց տառերով խառն՝»<sup>1)</sup>:

1) Սայեաթ Նովայի քերթուածների ուսումնասիրութեան մի գլուխը պէտք է կազմէր փոխազգեսցութիւնների հարցը, այսինքն հայ աշուղների և պարսիկ բանաստեղծների ազգեսցութիւնը Սայեաթ Նովայի վրայ և վերջինիս ազգեսցութիւնը հետագայ հայ աշուղների վրայ: Դրա համար պէտք եղած նիւթերը ձեռքի տակ չունենալով, առայժմ ստիպուած եղածք հրաժարուել այդ կարգի ուսումնասիրութիւնից:

## ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԻ ԳԼԽԱԻՈՐ

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Բոլորը փորձից գիտեն, որ կան գեղարուեստական երկեր, որոնց ընթերցումը հաճելի կամ շատ հաճելի է և ընդհակառակն, կան երկեր, որոնք զժողարութեամբ են կարդացւում և որոնց ընթերցումը հաճելի չէ:

Ինչից է առաջանում այդ:

Այդ հարցը հիմնական հարց է և գեղարուեստական քննադատութեան առարկայ: Առանց նրան պատասխանելու՝ չի կարելի լուծել այլ գեղագիտական հարցեր:

Եթէ գեղարուեստական գրուածքը իր կառուցուածքով, իր մասերի համաշարփութեամբ, իր տաղանթափական կազմով և բովանդակած պատկերներով զժողարութիւններ է յարուցանում իւրացման ժամանակ, նա հաճելի չէ կարող լինել: Իսկ եթէ երկը իր վերայիշեալ որպիսութիւններով մեզնից աւելորդ լարում չի պահանջում և, ընդհակառակը, ամեն մանրամասնութիւն իր պատշաճ տեղն է գտնում մեր հոգեկան կազմակերպութեան մէջ և մանաւանդ պատկերները նորանոր այլ պատկերներ են զարթեցնում մեր մէջ, այդպիսի երկը մեծապէս հաճելի է:

Ուրիշ խօսքով՝ եթէ մի գրուածք իր կառուցուածքով և այլն մեզնից պահանջում է գեղարուեստական եռանդի առաւելագոյն սպառում, նա չի կարող տալ բաւականաչափ հաճոյք և նա գեղարուեստօրէն թոյլ է: Իսկ ընդհակառակը, եթէ նա մեզնից խլում է նուազագոյն գեղարուեստական եռանդ և իւրացւում է կրկնապատիկ յաջողութեամբ, նա գեղարուեստօրէն ուժեղ և յաջող գործ է:

Այս չափանիշով է, որ պէտք է չափենք սոյն գլխում

Սայեաթ Նովայի տաղերը:

Վերցնենք թէ խօսի ունիմ իլլիմսագովս-ը: Սրա կառուց-  
ուածքը պարզ և մեկին է և իւրացման համար դիւրին:

Մի խօսք սենեմ տաշու. քեզ ինչո՞ւ ես խռով մնում, այդ  
լինչ արիր. սիրտս խորովեցիր, բարեկամներս թշնամի դարձրիր, իսկ  
ես — հաւատարիմ եմ քեզ Ղարիբի պէս. բացի քեզնից ինձ ոչ ոք  
պէտք չէ. ես մահս մահ չեմ համարի, միայն թէ դու վրաս լաց  
լինես մազերդ շաղ տալով:

Ընթերցողի հոգեկան աշխարհում այդ ոտանաւորը հեշտու-  
թեամբ համառօտագրւում է և ընդունում է երկու նախադասու-  
թեան ձև. դու ինձ չարիք արիր, իսկ փոխարէնը ես պատրաստ եմ  
քեզ հաւատարիմ մնալու մինչև գերեզման:

Եւ այդ ոտանաւորը պարունակում է հինգ տուն չորսական  
սողից, ընդամենը 20 տող 16-ական վանկով:

Այսպէս հասարակ է ոտանաւորի կազմուածքը, իսկ մասն-  
րի համաչափութիւնը՝ դիւրին նշմարելի:

Աւաջին տուն. Մի խօսք ունիմ իլթիմասով և ինթիգարով.  
ինչո՞ւ ես խռով, աչքի լուս. ես քեզնից միշտ կարօտ եմ:

Երկրորդ տուն. Միթէ էլ դարիշ ոչ ով չի սիրում. այդ ինչ  
արիր, ինձ ցունուն ես դարձրել, սիրտս խորովել ես. ոչ ոք այդ  
ցաւին չի դիմանալ:

Երրորդ տուն. Բարեկամներիս թշնամի ես դարձրել. անցեալն  
էլ չը կայ. դժուար է ինձ մի փոքր նաւի նման մաքառել քո ծով  
սիրոյ դէմ:

Չորրորդ տուն. Ես շարունակ քո գովքդ եմ անում. տաս տա-  
րի է հետևում եմ քեզ եօթ տարի էլ Ղարիբի պէս ման կը գամ  
քեզ, որ իմ բութա Շահ Սանամն ես:

Էինգերորդ տուն. Հազար դարդն ինձ համար ոչինչ է. իմ  
միակ իշխանաւորը դուն ես և մահն ինձ համար ոչինչ է, եթէ  
միայն դու վրաս լաց, մազերդ շաղ տալով:

Մենք տեսնում ենք, որ բացի երկրորդ և երրորդ տներից,

ամեն մի տան մէջ մի միտք է զարգացրած. երկրորդ և երրորդ տան միտքն ընդհանուր է: Մտքերը համաչափ են և ըմբռնելու համար ոչ մի լարում չի պահանջում մեղմից:

Սրա վրայ տւելանում են տաղաչափական կատարելութիւնը և աննման պատկերները, որոնցով Սոյեաթ Նովան իշխում է ընթերցողի գեղագիտական ճաշակին:

Այժմ անցնենք տաղաչափական մանրամասնութիւններին, քննութեան առարկայ առնելով Ախվերդեանի հրատարակութեան առաջին ոտանաւորը՝ «Բամանկան»:

Տաղաչափութիւնը նպատակ ունի մեզ տալ ռիթմական հատուածներ՝ ներգաշնակօրէն հիւսուած: Սակայն այդ ներգաշնակութիւնը չի կարող իրականացուել, եթէ տեղի ունեն հնչիւնների ազմրկային կուտակումներ: Այս տեսակէտից մեր լեզուն, պարունակելով ազմկային հնչիւնների մեծ քանակ ի հաշիւ ձայնաւորների, դժբաղդաբար ներգաշնակ չի կարող համարուել և ուրեմն աւելի կարեւոր է դառնում հնչիւնային ընտրութիւնը: Այդ ընտրութիւնը վերաբերում է զխաւորապէս վանկերի կառուցմանը: Անհրաժեշտ է խուսափել փակ վանկերից, այսինքն՝ այն վանկերից, որոնք վերջանում են բաղաձայնով՝ բաղաձայնից առաջ: Ընդհակառակն, փակ վանկերը կարող են հաճելի լինել ցեղութայից և յանգաւորութից անմիջապէս առաջ՝ ընդգծելով հատուածի և յանգի ուժգնութիւնը:

Մի ուրիշ անհրաժեշտութիւն է հարուստ յանգաւորումը, որ խթան է հանդիսանում ընթերցողին ռիթմի շարքերը ամբողջացնելու:

Ներքին յանգաւորումը, աստիճանները և այլն հաճելի շրջալսութիւն են, որովհետեւ նրանք մեծ լարում են պահանջում պօէտից և իրագործւում են ի հաշիւ պատկերների, որ ամենակարեւոր մասն է կազմում պօէզիայի:

Այս տեսակէտով մօտենալով Սոյեաթ Նովային, մենք տեսնում ենք, որ նա արել է լեզուի բարեբաաստիկ ընտրութիւն, կանգ

տանելով Թիֆլիզի բարբառի վրայ, որ իր պատմական հուշվոյթի ընթացքում մեծապէս պարզել է բառերի վերջաւորութիւնները. օր. «չի կանա տեսնի»՝ փոխանակ «չի կարող տեսնել», «էրծաթէն պիտի»՝ «արծաթից պէտք է (լինի)» և այլն, և բանաստեղծից պահանջում է միայն զգուշաւոր վերաբերմունք այդ ուղղութեամբ: Այնուհետև պէտք է ի նկատի ունենալ, որ փակ վանկերից նրանք, որ վերջանում են սոսու, ալիսնքն մ, ն, լ, ը(ւ) հնչիւններով և սալիքանք, ալիսնքն զ, փ, խ, հ, դ, յ, շ, ս, վ, ֆ հնչիւններով, հանդուրժելի են բաց վանկերի փոխարէն՝ շնորհիւ հնչիւնի թեթեւութեան:

Այսպէս քննելով Քամսիկայի առաջին տողի մէջ կը գրտնենք միայն մէկ փակ վանկ՝ (զ)ված. հինգ վանկ սոսուր, 2 վանկ սալիքանք հնչիւններով և 8 բաց վանկ: Սալիքանք հնչիւնները երկուսն էլ յանդի մէջ են ընկնում և հաճելի են:

| փակ                        | սոսուր՝ | սալիքանք՝        | բաց վանկեր |          |
|----------------------------|---------|------------------|------------|----------|
| 2. ԲԴ ՏՈՂ 1                | 1       | 5 (2ը յանդի մէջ) | 9          |          |
| 3. ԲԴ ՏՈՂ 0                | 3       | 3 »              | 10         |          |
| 4. ԲԴ ՏՈՂ 1                | 1       | 3 »              | 11         |          |
| 5. ԲԴ ՏՈՂ 2 (1ը յանդի մէջ) | 4       | 0 —              | 10         |          |
| 6. ԲԴ ՏՈՂ 3 ( » » )        | 2       | 2 —              | 9          |          |
| 7. ԲԴ ՏՈՂ 3 ( » » )        | 3       | 1 —              | 9          |          |
| 8. ԲԴ ՏՈՂ 1                | 2       | 3 (2ը յանդի մէջ) | 10         |          |
| 12                         | 21      | 19               | 76— 128    |          |
| 9%                         | +       | 17% + 15%        | +          | 59%=100% |

Ուրեմն փակ վանկեր կազմում են ընդամենը 9%, որոնցից աւելի քան 2% յանդի մէջ, 32%-ը յատկացւում է սոսուր և սալիքանք հնչիւն ունեցող վանկերին, որոնցից 6%-ը յանդի մէջ:

Այժմ առաջ բերենք Յովհ. Թումանեանի «Անուշախի նախերգանքի առաջին հինգ տան վանկերի կառուցուածքը, որ ըստ երեւոյթին մեր բանաստեղծական գրականութեան ամենաներգաշնակ կատորներէ մէկն է:

Փակ վանկեր՝ 29, սոնոր՝ 27, սպիրանտ՝ 17. Բաց վանկեր 77. Ընդամենը  $150. 19\% + 18\% + 11\% + 51\% = 100\%$  :

Արժէ համեմատել այս երկու վիճակագրութիւնները, պարզ տեսնելու համար Սայեաթ Նովայի առաւելութիւնը Յովհ. Թումանեանից (ինչպէս և միւս բոլոր բանաստեղծներից)։ Բացարձակապէս փակ վանկերը կազմում են Յովհ. Թումանեանի մօտ  $19\%$ , մինչդեռ Սայեաթ Նովան ունի միայն  $5\%$ , որից 2-ը յանգերի մէջ։ Մինչդեռ բացարձակապէս բաց վանկերը Թումանեանի մօտ կազմում են  $51\%$ , նրանք Սայեաթ Նովայի մօտ  $39\%$  են ներկայացնում։

Չենք կարծում, որ սխալուած լինենք, եթէ պնդենք, որ Սայեաթ Նովան մեր գրականութեան մէջ առաջինն է ոչ միայն պատկերներով, այլ և երգերի երաժշտականութեամբ, ուրիշ խօսքով՝ մեր առաջին բանաստեղծն է։

---

Յանգաւորումը Սայեաթ Նովայի մօտ հիմնուած է հոգեբանական ամուր պատուանդանի վրայ և գլուխ է բերած մեծ նարտարութեամբ։

Մութամմալ և նման երգերում առաջին տան բոլոր տողերն էլ յանգաւորուած են միատեսակ. միւս տներում, որոնք ճշնշող մեծամասնութեամբ կազմուած են չորս տողից, միատեսակ յանգաւորուած են առաջին երեք տողերը, իսկ չորրորդ տողը յանգաւորուելով առաջին տան բոլոր տողերի հետ, հոգեբանական կապ է պահպանում առաջին տան և միւս տների մէջ։

Նոյն երևոյթը մենք նկատում ենք և սակաւաթիւ վանկեր պարունակող երգերում, միայն առաջին տան մէջ յանգաւորում են ոչ թէ բոլոր՝ տողերը, այլ առաջինը երրորդի հետ (երբեմն ոչ) և երկրորդը չորրորդի հետ։ Վերջինս կրկնուած է միւս տների չորրորդ տողերում։

Յանգաւորման հարստութիւնը խոշոր չափերի է հասնում Սայեաթ Նովայի քերթուածների մէջ. այսպէս՝ Բամանչայի Ա. տը-

նույն մենք տեսնում ենք հետեւեալ յանգերը. դասն իս — պասն իս — հասնիս — բասնիս. Գ. տնում — ռանգով — հանգով — բանգով. Դ. տնում — դափա գուգիս — բափա գուգիս — սափա գուգիս են:

Մնացած տներէ չորրորդ տողերը երկրորդում են առաջին տան յանգաւորումը՝ ալմասն իս — օսկէ թասն իս — մէջլիսի կէսն իս շատ բան կու տէսնիս:

Պատկերների համար վերցնենք ԺԸ. տաղը՝ «Աշխարումըս ան չիմ քաշի», որ պատկերաւորութեան գլուխ գործոց է:

Ա. տուն. Սայեաթ Նովան գործ չէ ածում տխրել, տրտմել բառերը. նա ասում է «ան չիմ քաշի», որ պատկերացնում է տրիստութիւնը. «Չան իս ինձ ամաս» — անորոշ պատկեր, որ անցնում է մեր ներքին աշխարհը միանալու ազգակից պատկերներին և նրանց սգեկոչելու, ինչպէս են հոգեակ, սիրեցեալ, ազիզ են: «Անմահական ջրի» նուրբ պատկերից յետոյ գալիս է «օսկէ փնջան» ուժեղ պատկերը՝ լնատիմ վրէս շրվաք անիս» թանձրացեալ և հիւթալի պատկեր է, որին հետեւում է դարբաք վրանի հաստահիմն պատկերը: Այնուհետև գալիս են Սուլթանի ու Խանի դաժան պատկերները, որոնք սուշ են փնտռում սպաննելու համար:

Բ. տուն սկսւում է «սալբու չինարի» հոյակապ պատկերով, որին միանում է «Փռանգի տալասի» քնքոյշ պատկերը. Երկրորդ տողը որքան բառ, այնքան պատկեր. «լիզուդ շաքար, պօշլը դանդ, ալոէքդ մարքրիտ ալմասէ». այս հրաշալի պատկերներին հետեւում է ակնակապ (ակներով զարդարուած) թասի չքեղ պատկերը, որ օսկու մէջը մինա է արած. պատկերաշարքը վերջանում է Զափահիթի և Բագէշխանի լալի գոռոզ պատկերներով:

Այս յախուռն պատկերահանդէսից յետոյ պատկերները մեղմանում են. Գ. տուն առաջին տողում ունենք մի սիրուն պատկեր. «Սիրտըս ունիմ քարած», իսկ երկրորդում՝ արտասուները որ արուն է դարձել: Գ. տողում մենք գտնում ենք «վարթով չափարած» բաղի պատկերը, վերջապէս չորրորդում մի կայտառ պատկեր՝

«վրէյ շուռ գամ բուլբուլի պէս» և սէյրանի հանգստեան պատկերը:

Գ. ՏՈՒՆԻՐ սկսւում է էշխից մաստ լինելու պատկերով, որին հետեւում է քնած սրտի պատկերը երկրորդ տողը պատկերաւորւում է կշտանալու և սով մնալու, երրորդ տողն սննի «թարխի անիմ» պատկերաւոր արտայայտութիւնը, իսկ չորրորդ տողում ծովից ելնում են ռաշի և ջէյրանի խրոխտ պատկերները:

Ն. ՏԱՄԻ պատկերներն սկսւում են երկրորդ տողից. «Շուխկըդ աշխարըս բըռնիլ է, արէգադի դէմըն փարիս»։ Երրորդ տողը ծաղիկների պատկերների ծով է, որ եզերւում է չորրորդ՝ վերջին աննման տողով, որտեղ բոլոր մոլեգնող պատկերները իրենց գոյարիկ լուծուճի են ստանում «կարմրագուն գաշտի ծաղիկ, հովտաց շուշան» պատկերների մէջ:

Փոքր ինչ աւելի մանրամասն ծանօթանանք Ը. տաղի հետ՝ «Դուն էն գլխէն իմաստուն իս»։ Սա մի հոյակապ հրաշակերտ է, գրուած 1753 թ, նուիրուած Վրաստանի վեհապետ Իրակլի Բ.ին, երբ վերջինս զայրացած աշուղի վրայ նրա մի յանդուգն վարմունքի համար, ուզում էր դուրս վռնանել նրան արքունիքից:

Ոտանաւորն ունի չորս էական կողմեր. մէկը յորդորական է (*bertative*), միւսը պաղատական կամ աղերսական, երրորդը՝ ներքող և չորրորդը—ինքնազոհութիւն: Որպէս թախանձանք, ուղղուած թագաւորին, որ ներէ արած յանցանքի համար, ոտանաւորի հիմնական տունը ոչ թէ աղերսական է, այլ յորդորական:

Դուն էն գլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բար մի անի, էրադումըն տէսածի հիդ միդի մէ հէտար մի անի.

Ես խօ՛մ էն գլխէն էրած իմ, նուրմէկանց քաբար մի անի, Թէ վուր, գիդիմ, բէգարիլ իս, ուրիշին սարար մի անի:

Գ. տունն իր խոշոր մասով շարունակութիւն է յորդորի.

Շարալուն հէքիմն էնդուր գուգէ, դիդ տալու է, ցալ տալու չէ.

Քանի դուդէ արբար ըլի՝ դուլըն աղին դավ տալու չէ.

Դու քու սիրտըն իստակ պահէ, եադի խօսկըն ավտալու չէ:

Դ. տան մի տողը ևս յորդոր է՝ Սէլավի պէս առանց ցամբիլ դուն շուտով խարար մի անի:

Այնուհետև վերջին տունն ամբողջովին յորդոր է.

Քանի գուդէ քամին տանէ, ծովէմէն ավազ չի պակսի.

Թէգուդ ըլիմ, Թէգուդ չըլիմ, մէջլիսնէրուն սազ չի պակսի.

Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ, աշխարիս մէ մազ չի պակսի.

Սայեաթ Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի:

Մերթ ընդ մերթ լսուամ են պաղատանքի ձայներ.

Թէ էսանց էլ սուշ ունէնամ, գրլուխս արա տալ, Թաքավուր.

Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նահախ տիղ դազաբ մի անի (Չրդ տուն)

Եւ կամ՝ Աստծու սէրը կանչողի պէս զըռնէմէդ ջուդար մի անի:

Սակայն այդ յորդորը, որ քերթուածի մեծագոյն մասն է կազմում և աղերսը չէին կարող հնչուել առանց ներբողի. Հարկաւոր էր շոյել վեհապետի ինքնասիրութիւնը, եւ ահա Սայեաթ Նովան իր կարճ, բայց աննման ներբողն է հիւսում:

Ջըկայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Ռօստօմի Զալ Թաքավուր.

Ասկըդ ասկէրումըն գօլած, համ դուն իս գօզալ Թաքավուր:

Սայեաթ Նովան անշուշտ ծանօթ էր պարսկական ներբողական գրականութեան և գիտէր, թէ որպիսի չափադանցութիւններն մէջ են ընկնում Իրանի բանաստեղծները, սկսած ներբողասացների արքայ Անվարիից, դրուատելով մեծամեծների շատ անգամ գոյութիւն չունեցող առաքինութիւնները:

Որպէս մի նմոյշ տիպիկ իրանեան ներբողի՝ առաջ բերենք Ֆառուխի Սիստանի պանեգիրիկներից մէկը մեր Թարգմանութեամբ:

Ներբող Ամիր Իւսոֆէքնէ Նասէրօղլինին—Ֆառուխի Սիստանի.

Ո՛վ գեղադէմ, դէմքդ ինձ արւս, նստիր իմ կողքին,

Զգոյշ, ինձնից մի հեռացնիր շուրթըդ կաթոգին.

Այսօր հաճոյքով կը ճաշեմ հետըդ, վաղն արդէն  
Ամիրն ինձ անպայման կրկին տանում է Ղազնին<sup>1)</sup>։  
Աստուածդ իմ, դահը քեզ նըման երբէք չի տեսել,  
Ո՛վ բազմայաղթ, աշխարհ չի տեսել քո նըմանին։  
Տապալում ես ժանտ առիւծին, փղին կատաղի,  
Նետով առիւծներին, տէգով փղերին։  
Զարկի նշանը քո Բոստից<sup>2)</sup> մինչև Սանջար<sup>3)</sup> է։  
Զարկդ անցնում է Բալխից<sup>4)</sup> մինչև Պաղեստին։  
Երբ խաղ սկսես չովգանի<sup>5)</sup>, քո կուռ գնդակից  
Տաս հարուած լուսինն է առնում, հարիւրը Փարվին<sup>6)</sup>։  
Որքան վատեր սուրդ է ջարդել, Ֆարհադն<sup>7)</sup> իր դուրով  
Երբէք այնքան չէ հարուածել սարի լանջերին։  
Ռազմի տենչից անկողինըդ ոսկուց ես ուզում,  
Նոյն տենչից վահանն է հանգչում քո զլխատակին։  
Ճակատամարտում թէ տեսնեն քեզ սոսիսիդ հետ,  
Կը կարծեն թէ դու Սոսրովն ես, ոսոխդ՝ Շիրին<sup>8)</sup>։

Համեմատելով Սայեաթ Նովայի երկտոյն այս ներբողի հետ, մենք հեշտութեամբ կը տեսնենք, որ Սայեաթ Նովան, նմանեցնելով վրաց թագաւորին Զալեան Ռոստամի՝ Իրանի ջհան փահլևանի հետ, չափազանցութեան մէջ է ընկնում. բայց այդ չափազանցութիւնը թոյլատրելի է և հաճելի. ո՛վ գիտէ, դուցէ արքան որոշ զրծերով Ռոստամին յիշեցնում է. իսկ ներբողի երկրորդ մասը՝ բացկըդ ասկէրումըն գոված և այլն միանգամայն համեստ է։

Այլ բան է Պառուխին. ներբողի ենթական Աստուած է. աշխարհ չի տեսել նրա նմանին։ Նա նետով ժանտ առիւծներին է

1) Ղազնայի թագաւորութեան մայրաքաղաքը (Աֆղանիստանում)։ 2) Ղանգահարի յրջանում, Աֆղանիստանում։ 3) Մի գաւառ Պարսկաստանում։ 4) Պարսսանի մայրաքաղաքներից մէկը, Օքսուս կամ Զինուս գետից 10 ֆարսան հեռու։ 5) Պոլս կոչուած խաղը, որի ժամանակ մասնակցողները կորագրելու փայտով խփում են մարգագետնի վրայ գնդակին։ 6) Բոլլը, եօթնաստեղծութիւն։ 7) Տես քառաբանը։ 8) Տես քառաբանը։

տապալուամ, տէգով կատաղի փղերին. դարկի նշանը Բոստից մինչև Սանջար է, դարկն անցնում է Բալխից մինչև Պաղեստին. չովդան խփելիս նա առաջ հարուած լուսնին է տալիս, հարիւրը Փարվինին. մի բան, որ Բոստամն, ի հարկէ, իր կեանքում չէր արել և չէր կարող անել:

Սայեաթ Նովան զգալով իր ստորացումն շնորհիւ իր թէպէտ և շատ փոքրիկ աղերսանքի, սթափւում է և չորրորդ տան մէջ յիշեցնում է, որ ինքն էլ հասարակ մարդ չէ:

Ամէն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջրէն է,

Ամէն մարթ չի կանա կարթա իմ գիրըն՝ ուրիշ գրէն է.

Բուհիաթըս ավաղ չիմանա՝ քարափէ քարուկըրէն է:

Սայեաթ Նովան իր այս ինքնագոհութեամբ յիշեցնում է Իրանի մեծ բանաստեղծներից Բարա Քահէրին. և ընդհանրապէս, եթէ կարիք կայ Սայեաթ Նովային համեմատելու Իրանի որեւէ բանաստեղծի հետ, դա կը լինի ոչ թէ Հաֆէզը. այլ սիրոյ երգիչ Բարա Քահէրը — Տարբերութիւնը բացի ոտանաւորների ձևերից ներանումն է, որ Բարա Քահէրի քառեակները զրուած են, ինչպէս ընդունուած է կարծել, սուֆիական ոգով և ուրեմն սիրուհին գործ է ածուած Աստուածութեան փոխարէն, մինչդեռ Սայեաթ Նովան ուշալ սէր է երգում:

Բարա Քահէրը նոյնպէս սիրուհուն անսահման գովում և ստորանում է նրա առաջ. այսպէս՝ մի քառեակում (թիւ 51) նա ասում է.

Եշխիցդ կրծքիս մէջ կրակ է ընկած.

Կըրակի մէջ սիրտս ու հոգիս է էրուած.

Թէ շունըդ ոտ դնի աչքիս, սիրուհիս,

Կոխած հողը թարթիչներով կառնեմ ցած<sup>1)</sup>:

---

1) Թարգմանութիւնը մերն է. տես Բարա Քահէի Օրիան Համադանի, Քառեակներ և զազալներ. Թարգմանեց պարսկերէն բնագրից Բ. Արաւհամեան, Քեհերան, 1930 թ.

Ընդհանրապէս Բարա թահէրը սիրում է նուառտանալ. այդ  
ևս սուֆիական ոգի է. մի քառեակում (թիւ 6) նա ասում է

Ես մի փշով սնուող ուղտի տիպար եմ.

Կերբն տատառկ, մի խարվար<sup>1)</sup> բեռնատար եմ.

Ու էս ծանրը բեռից ու շնչին ծախսից

Տիրոջն առաջ էլ միշտ ամօթահար եմ:

Մի այլ քառեակում (թիւ 8).

Ես էն անբաղդ անձն եմ անտէր ու անտուն,

Որի թշուառ կեանքը միշտ դառն է անհուն.

Ես էն մոլոր տատառկն եմ անապատում,

Որ ամեն մի քամու առաջն է ընկնում:

Սայեաթ Նովայի նսեմանալը «Դուն էն գլխէն իմաստուն  
խառ տաղում արաւայատուած է հետեհալ տողում. — Ասածու սէրըն  
կանչողի պէս զըռնէմէդ շուղար մի անի:

Բարա թահէրը ևս սթափուում է երբեմն և հիւսում ինքնա-  
զոհ քառեակներ, որոնց որպէս նմոյշ կը բերենք հետեհալները.  
(թիւ 1).

Ես էն սիպտակ բաղէն եմ Համադանի,

Որ բոյնըս թաղուած է մէջ լեռնաստանի.

Թեւատարած սաւառնում եմ սարէ սար

Չանկերըս յօշոտում որսը ետրանի<sup>2)</sup>:

Եւ կամ թիւ 3.

Ես ծով եմ մի սրուակի մէջ ամփոփուած

Ես կէտ եմ տառերն ինձնից ձևաւորուած.

Հազար տարին մի հանճար հանդէս կը գայ,

Ես հանճար եմ հազար տարում յայտնուած:

Թէ բնաբաններով, և թէ արաւայատութեան ոգով նման է  
Սայեաթ Նովան իրանի այս նշանաւոր բանաստեղծին, որ ծաղկում

1) Բառացի՝ մի իշարեռ = 100 լիգր (18 փ. 30 ֆունտ).

2) Անպատի.

էր 11-րդ դարի կիսում և որ նոյնպէս իր սիրահարական ոտանաւորները (քառեակներ և դադախներ) զրեւ է բարբառով (Համադանի՝ 1) Երուն էն զլիւէն իմաստուն իսն տաղի կառուցուածքը պարզ է և համաչափ. հինգ տներն ըստ զլիւսաւոր մտքերի հետեւեալներն են.

1. Դուն իմաստունն ես, ուրեմն զգոյշ եղիր վարմունքիդ մէջ.

2. Լաւագոյն դատաւորը դուն ես, զուր տեղը կրքերի մի մատնիր քեզ.

3. Ղուլը աղի դէմ յանգնութիւն չը պէտք է բանեցնէ. բայց օտարի խօսքին էլ չը պէտք է հաւատալ:

Այստեղ մի ակնարկ կայ վիրաւորի բժշկից ունեցած սպասելիքի մասին. կարելի է ենթադրել, որ Սայեսթ Նովան կարիք է ունեցել և դիմել է մի փոքր յանդուգն ձևով արքային, որից օգտուել են նրա թշնամիները և զանազան բաներ յերկրելը:

4. Ես սովորական մարդկանցից չեմ.

5. Ծիշտ է, աշխարհում մեծ բան չեմ, բայց քեզ համար արժէքաւոր եմ:

Եւ ամեն տան վերջը հնչում է թախանձագին մի անի՝

Վանկերի կառուցման և երգի երաժշտականութեան տեսակետից եթէ վերցնենք Ա. տունը, կը տեսնենք որ փակ վանկերի թիւն է 7, սոնոր վանկերի՝ 12, սպիրանտ՝ 3, բաց վանկերի՝ 42.

11%

18%

5%

66%

Եթէ ի նկատի ունենանք, որ փակ վանկերի մի խոշոր տողոս ( $36\%$ ) ընկնում է հատածից և յանգաւորութից առաջ, պէտք է ընդունել, որ այստեղ վանկերի կառուցումը աւելի բարեյաջող պոյամանների մէջ է, քան Քրամանշառ ոտանաւորի առաջին երկու տնում:

Յանգաւորման հարստութիւնը այստեղ էլ դարձեալ գերիվեր աստիճանի է հասնում:

Ա. տուն Բար մի անի—(հէ)սար մի անի—(քա)բար մի անի—(սա)բար մի անի:

Բ. տուն Զալ թաքավուր—(գօ)զալ թաքավուր—տալ թա-

քաղաքի

Վ. ՏՈՒՆ Ցալ տալու չէ— դալ տալու չէ— ավտալու չէ:

Դ. ՏՈՒՆ Զըրէն է— գըրէն է— (քարու) կըրէն է:

Ե. ՏՈՒՆ (Ա՛վազ չի պակսի— սազ չի պակսի— մազ չի պակսի.  
Թուենք գլխաւոր պատկերները.

Ա. ՏՈՒՆ Քաբար մի անի:

Բ. ՏՈՒՆ Բօստօմի Զալ— զօզալ— արան տալ:

Գ. ՏՈՒՆ Աստծու սէրըն կանչողի պէս:

Դ. ՏՈՒՆ Իմ Զուրըն— Իմ գիրըն— քարափէ քարուկըրէն

է— սէլալի պէս:

Ե. ՏՈՒՆ Սայեաթ Նօվու գերեզմանըն Հինդ... մի անի

Սայեաթ Նովայի տաղերի գեղարուեստական վերլուծութիւնը, որ մեզ թւում է լաւագոյն միջոցը, ակնյայտի կերպով ցոյց է տալիս հանճարեղ աշուղի անհասանելի բարձրութիւնը, որի վերայ կանգնած է նա որդէս բանաստեղծ:



Ն .

Ամէն սագի մէջնն դօժած դձւն թամամ դասն իս, քամանչա.  
Նաքադ մարթ քիզ չ'ի կանա տէսնի դուն նըրա պասն իս, քամանչա.  
Ղասա արան՝ էլ լալ օրէրուն էգիվըն հասնիս, քամանչա.  
Քիզ ինձնից օ՞վ կանայ խըլի՝ աշուղի բասն իս, քամանչա:

Անդանըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջափանիր քարած,  
Կութըդ շիրմայեմէն պիտի, փուրըդ սադափօվ նախշ արած,  
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած  
Օչ օվ զիմէթըդ չ'ի գիդի՝ լալ ու ալմասն իս, քամանչա:

Ճիւղուտըդ վարադ'նած պիտի՝ թահր ունէնայ հազար ռանգօվ.  
Ձարըդ ռաշի կուդէն պիտի՝ վուր դուն խօսիս քաղցըր հանգօվ.  
Շատին զարթուն կու լուսացցնիս, շատին կու քընէցնիս բանգօվ  
Անուշահամ զինօվ լիթըն դձւն օսկէ թասն իս, քամանչա:

Ածօղիդ էրկու կու շինիս, առաչ չայի դ'ափա գ'ուզիս.  
Կու մէձըրվիս այիմնումըն, պարապ վախտի բափա գ'ուզիս.  
Եփ վէր դու քաս մէջլիսումըն քաղցըր զօղ ու սափա գ'ուզիս.  
Բօլօրքըդ դօզալնիր շարած մէջլիսի կէսն իս, քամանչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտըիս հիվընդի դուղըն.  
Եփ քաղցըր ձայնըդ վիր կօնիս՝ բաց կու՝լի հիդըդ խաղօղըն.  
Խալիսին էս իլթիմազն արան՝ ասին. «Ապրի քու ածօղըն».  
Բանի սաղ է Սայեսթ Նօվէն, շատ բան կու տէսնիս, քամանչա:

Էսպէս Աբութինի ասած քօնիկօնի 447 ին:

(1759)

Բ.

Թէզուդ քու քաշըն մարքրիտ տան բրօյի բրօյի,  
Թէզուդ քու քաշըն ալմաս տան բրօյի բրօյի,  
Եւր, չ'իմ տա, չ'իմ հիռացնի քիզ քու հարէմէն,  
Բարէբարէմէն:

Չ'իմ քաշվի էկած մահէմէն,  
Բաղ'իփի տըված ահէմէն.  
Թէզուդ ընդամ գայ Շահէմէն՝  
Եւր, չ'իմ տա, չ'իմ հիռացնի քիզ քու հարէմէն,  
Բարէբարէմէն.

Թէզուդ քու քաշըն ալմաս տան բրօյի բրօյի,  
Թէզուդ քու քաշըն մարքրիտ տան բրօյի բրօյի,  
Եւր, չ'իմ տա, չ'իմ հիռացնի քիզ քու հարէմէն,  
Բարէբարէմէն:

Գուլասնգինդանի հանգով: Ռադիանի:

Գ.

Աբի ինձ անգաճ կալ, այ դիվանա սիրտ,  
Հայա սիրէ, աղար սիրէ, եար սիրէ.  
Աշխարհքս քունն ըլի, ինչ պիտիս տանի՝  
Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:

Էն բանն արա՝ վուր Աստուծու շարքումն է,  
Խըրատներն՝ զըրած Հարանց վարքումն է,  
Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է՝  
Գիր սիրէ, դալամ սիրէ, դավթար սիրէ:

Եկ արի, սիրտ, մի կէնա դուն մէ դամադի,  
Հալալ մըտիկ արա հացի ու աղի,  
Հէնց բան արա՝ մարթ վըրէդ չը ծիծաղի՝  
Խըրատ սիրէ, սարըր սիրէ, շար սիրէ:

Հընպարտութին չանիս՝ դուր գու քաս Տէրիդ,  
Խօնարութին արա կանց քիզ դէվէրիդ,  
Աստուած դիվունանցըն մին հօքի էրիտ՝  
Աղկատ սիրէ, դօնադ սիրէ, տար սիրէ:

Սայեսթ Նօվա, էրնէկ քիզ, թէ էս անիս՝  
Հօքուդ խաթրի մարմնուդ ունըրը կէս անիս.  
Թէ գուզիս վուր դադաստան չը տէսանիս՝  
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

1753 Մայիսի 1:

Ուշագետ Արութինի տաած Մայիսի 1 ին քրօնիկօնի 441-ին:

դ.

Վունց օր վուր դ'արիւր բուլբուլն մէ տարօլ բաղին կարօտ է,  
Էնէնց կու լայ քու սիրօղըն՝ ձէռիդ արաղին կարօտ է.  
Դուն ուրիշի հիդ մի խօսի, քու ճուրան աղին կարօտ է.  
Հասիլ է ծուցիդ շամամըն՝ օսկէ Թարաղին կարօտ է:

Մէ գադ չը կայ՝ գուման ածիմ՝ ասիմ՝ էս նըման է գունքըդ.  
Անդ՝ ալամ անդարնիշ քաշած օսկու պէս է փայլում ունքըդ.  
Բօյէմէդ չուրս մատն ալէլի լըցվիլ է դօշդ ու Թիկունքըդ.  
Զարօլ արբէշումօլ հուսած մաղիւրդ՝ շաղին կարօտ է:

Դուն խօ՛մ էն գլխէն գօված իս, ես քիդ նուրմէկ գօվիմ արի.  
Ծուցըդ վարադ'նած հուջրա է, հուս ունէ մուշկ ու անբարի.  
Երիք հարուր ու վաթսուս ու վից ամէն անգամդ դ'արարի.  
Կուռըդ շիմշատ, մատնիրըդ մում՝ բըրօլէ ճաղին կարօտ է:

Ես էլ ուրիշ եար չիմ սիրի, աշխարումըս դուն իս իմըն.  
Թէ մէ շափաթ քիդ չիմ տէսնի, կու կըարիմ քամանչի սիմըն.  
Թէգուդ Թաքավուրըն կանչէ, Թէգուդ Լօղըման հէքիմըն՝  
Վսւր մէ դարդս կու հասկանայ նա, գուգունըս դաղին կարօտ է:

Գիշիւր ցէրէկ ման իմ գալի էշխէդ եանա եանա, գօզալ.  
Անգան արա՛, մատաղ իմ քիդ, մէ քիշ կամաց գընա՛, գօզալ.  
Աշխարըս սւմն է մընացի՝ վուր ինձ ու քիդ մընայ, գօզալ.  
Մանգամ մէռաւ Սայաթ Նօվէն՝ անգանըդ խաղին կարօտ է:

1758

Էսպէս դիբա ու Էնզի դունիայի Կանգօվ մուսադասի Արութիւնի առած  
քրօնիկօնի 446-ին.

Ե.

Մէ խօսիլ ունիմ իլթիմազօվ, անգաճ արած, օ՛վ աչկիլուս.  
Սըրտումըս ինթիլզար ունիմ, քու տիսըն բարօվ, աչկիլուս.  
Աջմը քիդ ինչ գէթ իմ արի՝ կէնում իս խըռօվ, աչկիլուս.  
Աշխարս աշխարօվ կըշտացաւ, իս քիզանից սօվ, աչկիլուս:

Մագանմ էլ օչ օվ եար չէ սիրի, էս ինչ արիր, էս ինչ բան ա.  
էշլետէդ ջունուն իմ էլի, ման իմ գալի եանա եանա.  
էս դարգէն օչ օվ չը քաշէ, վուր մէ դանգին չի դիմանա՝  
Սիրաըս լուրի պէս խօրվէցիր էշլիդ կըրակօվ, աչկիլուս:

Դօստիրըս դուշման շինէցիր, եադէրուն ինչպէս դօստ անիմ.  
Անցկացած օրըն չիմ տէսնում քանի գուգէ վուր դ'աստ անիմ.  
Աստուած վըկայ, խիստ դըժար է, գըլուլըս ինչպէս դուս տանիմ՝  
Ես մէ վուքըր նալի նըման, քու էշխըն է՝ ծօվ՝ աչկիլուս.

Գուլիմ բէրանըս բաց անիմ, գօվքըդ ասիմ Թարիփի պէս.  
Տաս տարի է ման իմ գալի Փադիշահի շահիփի պէս.  
Օխտըն տարի էլ ման դու քամ սաղըն ձէպիս Ղարիբի պէս՝  
Բութա Շահստանամըս դուն իս, էլ չունիմ օչ օվ, աչկիլուս:

Թէգուդ հազար դարդ ունէնամ, ես սըրտումըս ան չիմ ասի.  
Իմ հուքմի հէքիմըն դուն իս, ես էլ ուրիշ Շահ չիմ ասի.  
Սայեաթ Նօվէն ասաց. Զալում, ես էն մահին մահ չիմ ասի՝  
Հէնչափ ըլի՝ դուն վըրէս լաս մազըդ շաղ տալօվ, աչկիլուս:

էս էլ էն (այսինքն դիքա ու ենզի դունիայի) հանգօվ Արութինի (ա-  
սած) քրօնիկօնի 446-ին:

Է.

Առանց քիզ լինչ կօնիմ սօյրաթն ու սաղըն,  
Ձէնէմէս վէր կօծիմ չանգիրըն մէմէկ.  
Ջունքի ուշկ ու միտկըս իրար շաղէցիւր,  
Փահմէս կու հիւացնիմ հանգիրըն մէմէկ:

Մէ դուգունըն էրկու դաղին լինչ անէ,  
Մէ նօքարըն էրկու աղին լինչ անէ,  
Մէ բաղմանչին էրկու բաղին լինչ անէ,  
Փէյվանդ գուզէ թաղա տընգիրըն մէմէկ:

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դաղիրըն.  
«Բաղ շինէցի, վարթն քաղէցին վաղիրըն».  
Ջափէն ես քաշէցի, սափէն եաղիրըն.  
Բաղիփէն էկաւ միզ էս բանգիրըն մէմէկ:

Առանց քիզ լինչ կօնիմ աշխարիս մալըն.  
Ջիմանայ քալազըն, չիմանայ դ'ալըն,  
Կու հաքնիմ մաղէղէն, կու հաքնիմ շալըն,  
Կէրթամ ու ման գու քամ վանքիրըն մէմէկ:

Բըլքամ մէ մարթ ռաստ գայ՝ վուր ինձ խըրատէ.  
Դօ՛ղալ, քու էշխէմէն սիրտըս աղատէ.  
Կանց եօթըն իմաստնասիրացըն շատ է՝  
Էս քու, Սայաթ Նօվա, բանքիրըն մէմէկ:

Ղափիս եարանա:

Ը.

Դուն էն գըլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բար մի անի  
էրազումըն տէսածի հիդ միգի մէ հէսար մի անի,  
Ես խօսմ էն գըլխէն էրած իմ, նուրմէկանց քարաբ մի անի,  
Թէ վուր, գիդիմ բէգարիւ իս, ուրիշին սարաբ մի անի:

Ձը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Բօստօմի Զալ, Թնքավուր.  
Ասկըդ ասկէրուժըն գօված, հա՛մ դուն իս գօզալ Թաքավուր.  
Թէ էսանց էլ սուչ ունէնամ՝ գըլուխս արա՛ տալ, Թնքավուր.  
Մըտիկ արա՛ քու Ստիղծօղին՝ նահախ տիղ զ՝աղաբ մի անի:

Ետրալուն հէքիմէնդուր գուղէ՝ դիդ տալու է ցավ տալու չէ.  
Քանի գուղէ արքաբ ըլի՝ զ՝ուլըն աղին դավ տալու չէ.  
Դու քու սիրտըն խտակ պահէ, ետդի խօսիլըն ավտալու չէ.  
Աստուծու սէրն կանչօղի պէս դըռնէմէդ ջուղաբ մի անի:

Ամէն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջըրէն է.  
Ամէն մարթ չի կանա կարթա իմ գիւրըն՝ ուրիշ գըրէն է.  
Բունիաթս ավազ չիմանաս՝ քարափէ քարուկըրէն է՝  
Սէլավի պէս՝ առանց ցամքիւ, դուն շուտօվ խարաբ մի անի:

Քանի գուղէ քամին տանէ՝ ծօվէմէն ավազ չի պակսի.  
Թէգուզ ըլիմ, Թէգուզ չըլիմ՝ մէջիսնէրուն սազ չի պակսի.  
Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մէ մազ չի պակսի՝.  
Սայաթ Նօվու գէրէգմտնըն Հինդ, Հաբաշ, Աբար մի անի:



Ես մէ դ'արերը բուլբուլի պէս, դուն օսկէ դ'ափազի նըման.  
Էրէսըս դի վուտիդ տակըն՝ անց կանց, փիանդազի նըման.  
Եսր, քիզիդ խօսիլ իմ ուզում՝ Շահի իլթիմազի նըման.  
Աջայիբ սուրաթի տէր իս՝ ռանգըդ է գուլգազի նըման:

Եսր, մըտիլ իս բաղչի մէշըն, աջայիբ սէյրան իս անում.  
Շուղկըդ արէգազի նման է՝ տէսնօղին հէյրան իս անում.  
Ջիգարիս կըրակ իս տըվի, էրվում իմ բիրեսան իս անում.  
Վհնց մէ գօզալ չէ ունէցի՝ էտ քու արած նազի նըման:

Հէնց իմացի, եսր, քու զուլ իմ, Թանգ հախօվ գընած չըրադ իմ.  
Դըրանըդ նընգած ըլիմ, օ՛վ տէսնէ, ասէ՝ տուտադ իմ.  
Էլիէմէդ հիվանդացիլ իմ, վհնց մէռնում իմ, վհնց Թէ սադ իմ.  
Ծօվի պէս ուրաղան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման:

Օվ կու տէսնէ՝ ջունուռն կուլի՝ բարդ էրէսիդ խալ իս անում.  
Էլ ջուքամըն դհն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.  
Եսր, ես քիզ բարօվ իմ տալիս,—շուռ իս գալի՝ դ'ալ իս անում՝  
Ջունքի խօսկըդ անց է կէնում բէլլու օանանդազի նըման:

Սայաթ Նօվէն ասաց՝ կու լամ. չիմ լաց ըլի՝ Թէ ճար ունէնամ.  
Էլ ես կու քաշիմ էս զուսէն՝ Թհուլ լի ահ ու զար ունէնամ.  
Եսր, քիզ վըրէն արք ունէնամ, մէ լավ իխտիար ունէնամ՝  
Առնում, տանիմ մէջլիսնիրըն՝ օսկէջըրած սազի նըման:

Էս խաղն ով որ սովբի Դօստիի խաղի ձէնով ասէ, Թէ որ չիմանաս  
հարցրու Թէ՝ զօզալար իղնաղինա ըսող դաստա բէդաստա թարփանուր:

Մէջուսի պէս կօրաւ եարբա,  
Լէյ-լի-շան, ման իմ գալի ետնա ետնա.  
Էրվէցաւ խուսի ջիգարբա,  
Արնի պէս աչկս է լալի ետնա ետնա, ետնա ետնա.

Բըլբուլի նման լացիլ իմ,  
Աչկերբն արնով թացիլ իմ,  
Էշխէմէդ հիվանդացիլ իմ,  
Պառկած իմ դըժար հալի ետնա ետնա, ետնա ետնա.

Էշխէմէդ դարիլ իմ Եզիդ,  
Հալվէցա, մաշվէցա քիզիդ,  
Ռահմ արս, մէ խօսի միզիդ՝  
Բէմուրվաթ, ձէն իմ տալի ետնա ետնա, ետնա ետնա.

Էրվում իմ, կանչում իմ նման.  
Մուցըդ բադ, ունքերըդ քաման.  
Աշխարիս միշըն քիզ նրման  
Ձիմ տէսած, ման իմ գալի ետնա ետնա, ետնա ետնա.

Մանուշակ բաց արած հովին,  
Կարմիր վարթ, ծաղիկ հուտօվին,  
Շատ մի լացցնի Սայաթ Նօվին՝  
Աչկիլում, կըսկըծալի՝ ետնա ետնա, ետնա ետնա.

1767 Ապրիլ 5.

Էս խաղը էն ձէնով՝ բլրուլն հասած է վարթին լաւ կանչէր նա վար-  
թի համա: Արուսթինի տաած ապրիլի 5-ին քրօնիկօնի 445-ին.

Է .

Առանց քիզ ինչ կօնիմ սօյրաթն ու սաղըն,  
Ձեննէմէս վեր կօծիմ շանգիրըն մէմէկ.  
Ձունքի ուշկ ու միտկըս իրար շաղէցիր,  
Փահմէս կու հիռացնիմ հանգիրըն մէմէկ:

Մէ դուգունըն էրկու դաղին ինչ անէ,  
Մէ նօքարըն էրկու աղին ինչ անէ,  
Մէ բաղմանչին էրկու բաղին ինչ անէ,  
Փէյվանդ գուգէ թաղա տընգիրըն մէմէկ:

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դաղիրըն.  
«Բաղ շինէցի, վարթն քաղէցին վաղիրըն».  
Ջափէն ես քաշէցի, սափէն ետաղիրըն.  
Բաղիփէն էկաւ միզ էս բանգիրըն մէմէկ:

Առանց քիզ ինչ կօնիմ աշխարիս մալըն.  
Չիմանայ քալագըն, չիմանայ դ'ալըն,  
Կու հաքնիմ մաղէղէն, կու հաքնիմ շալըն,  
Կէրթամ ու ման գու քամ վանքիրըն մէմէկ:

Բըլքամ մէ մարթ ռաստ դայ՝ վուր ինձ խըրատէ.  
Գօ՛ղալ, քու էշխէմէն սիրտըս ազատէ.  
Կոնց եօթըն իմաստնասիրացըն շատ է՝  
Էս քու, Սայմթ Նօվա, բանքիրըն մէմէկ:

Ղափիս ետրանա:

Ը.

Դուն էն գըլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բար մի անի  
էրագումըն տէսածի հիդ միզի մէ հէսար մի անի,  
Ես խօմ էն գըլխէն էրած իմ, նուրմէկանց քարաբ մի անի,  
Թէ վուր, գիդիմ բէգարիլ իս, ուրիշին սաբար մի անի:

Չը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Բոստօմի Զալ, Թնքավուր.  
Ասկըդ ասկէրուժըն դօված, հա՛մ դուն իս դօզալ Թաքավուր.  
Թէ էսանց էլ սուշ ունէնամ՝ գըլուխս արան տալ, Թնքավուր.  
Մըտիկ արան քու Ստիղծօղին՝ նահախ տիղ դ՛ազար մի անի:

Եարալուն հէքի՞ն էնդուր գուզէ՛ դիդ տալու է ցալ տալու չէ.  
Քանի գուզէ արբար ըլի՛՝ դ՛ուլըն աղին դալ տալու չէ.  
Դու քու սիրտըն իստակ պահէ, եագի խօսկըն ավտալու չէ.  
Աստուծու սէրն կանչօղի պէս դըռնէմէդ ջուղար մի անի:

Ամէն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջըրէն է.  
Ամէն մարթ չի կանա կարթա իմ գիւրըն՝ ուրիշ գըրէն է.  
Բունիաթս ավազ չիմանաս՝ քարափէ քարուկըրէն է՝  
Սէլավի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտօվ խարաբ մի անի:

Քանի գուզէ քամին տանէ՛ ծօվէմէն ավազ չի պակսի.  
Թէգուզ ըլիմ, Թէգուզ չըլիմ՝ մէջլիսնէրուն սազ չի պակսի.  
Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մէ մազ չի պակսի՝.  
Սայաթ Նօվու գէրէզմանըն Հինդ, Հաբաշ, Արար մի անի:



Ես մէ դ'արիւր բուլբուլի պէս, դուն օսկէ դ'ափաղի նըման.  
Էրէսըս դի վուտիդ տակըն՝ անց կանց, փիանդազի նըման.  
Ենար, քիզիդ խօսիլ իմ ուզում՝ Շահի իլթիմազի նըման.  
Աջայիւր սուրաթի տէր իս՝ ռանգըդ է գուլգազի նըման:

Ենար, մըաիլ իս բաղչի մէչըն, աջայիւր սէյրան իս անում.  
Շուղկըդ արէգազի նման է՝ տէսնօղին հէյրան իս անում.  
Ջիդարիս կըրակ իս արվի, էրվում իմ բիրեան իս անում.  
Վննց մէ գօզալ չէ ունէցի՝ էս քու արած նազի նըման:

Հէնց իմացի, ենար, քու դուլ իմ, Թանգ հախօվ գընած չըրադ իմ.  
Դըրանըդ նընգած ըլիմ, օ՛վ տէսնէ, ասէ՝ տուտադ իմ.  
Էշիւէմէդ հիվանդացիլ իմ, վննց մէռնում իմ, վննց թէ սադ իմ.  
Ծօվի պէս ուրաղան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման:

Օվ կու տէսնէ՝ ջունուն կուլի՝ բարգ էրէսիդ խալ իս անում.  
Էլ ջուքամըն դուն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.  
Ենար, ես քիզ բարօվ իմ տալիս,—շուռ իս գալի՝ դ'ալ իս անում՝  
Ջունքի խօսկըդ անց է կէնում բէլլու օանանդազի նըման:

Սայաթ Նօվէն ասաց՝ կու լամ. չիմ լաց ըլի՝ թէ ճար ունէնամ.  
Էլ ես կու քաշիմ էս զուէն՝ Թնուդ լի ահ ու զար ունէնամ.  
Ենար, քիզ վըրէն արք ունէնամ, մէ լավ իխտիար ունէնամ՝  
Անում, տանիմ մէջլիսնիրըն՝ օսկէջըրած սազի նըման:

Էս խաղն ով որ սովբի Դօստիի խաղի ձէնով ասէ, թէ որ չիմանաս  
հարցրու թէ՝ գօզալար իղնաղինա ըսող դաստա բէղստա թաղիանուր:



Ուստի՛ գու թաս, դ'աբիբ բըլբուլ,  
Դու մի լաց'լի, ես իմ լալու.  
Դու վարթ պըտոէ, ես դօզալին, —  
Դու մի լաց'լի, ես իմ լալու:

Աբի, բըլբուլ, խօսի բառն,  
Օխնըվի թու էկած սարն.  
Քի վարթն էրից, ինձ իմ հարըն, —  
Դու մի լաց'լի, ես իմ լալու:

Ման իմ գալի դիզարի հիդ,  
Վաճնց դ'աբիբ բըլբուլ խարի հիդ.  
Դու վարթի հիդ, ես հարի հիդ, —  
Դու մի լաց'լի, ես իմ լալու:

Սալբուլի նըման կանանչ իմ,  
Ե՛կ, խօսի, ձայնդ ճանանչիմ,  
Դու վարթ կանչէ, ես հար կանչիմ, —  
Դու մի լաց'լի, ես իմ լալու:

Դ'աբիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,  
Ես ու դու էրվինք մէ հալում.  
Սայաթ Նօվէն, ասաց՝ դալում, —  
Դու մի լաց'լի, ես իմ լալու:

Աբութինի ասած թաղիբ:

ԺԱ.

Խօսկիրըդ մայում իմ արի՝ անարատ մաքուր իս, ախպէր.  
Օսկէ փարչումըն լըցուցած անմահական ջուր իս, ախպէր.  
Խըմօղըն վհւնց կու կըշտանայ՝ դուն կաթնէ ախպուր իս, ախպէր,  
Աշխարքըն ծօլ՝ դուն մէշըն նալ ման գու քառ՝ փըրփուր իս, ախպէր.  
Վախում իմ թէ՛ ինձ էլ էրիս՝ անհանգչէլի հուր իս, ախպէր:

Հուր իս՝ էշխօլ կըրակած,  
Խօսկ իմ ասում առակած,  
Իմ սիրմա էրծաթ ախպէր՝  
Օսկէ ջըրօլ վաւաղնած:

Աջմը միգիդ ինչ իս կամում, ինչ է ասում էտ քու փալըդ.  
Իսկի չիս դալի, չիս ասում. «Աջմը ինչ է բանդա հալըդ.  
Աստուած վըկայ, սիրտըս էրից՝ ջէյրանի նըման մանգալըդ.  
Ես քիդանից չիմ հիւանա, թէգուդ դուս դայ խաթու խալըդ.  
Թէգուդ սիրիս, թէգուդ ատիս, թէգուդ համըուրիս, ախպէր:

Համըուրիմ սիրօլ համըուր,  
Վունց օր խէշին է դաստուր.  
Օվ քիդ խայնան մըտիկ տայ՝  
Դառնայ էրկու աչկօլ կուր:

Քիզիդ բառ օ՛վ կարայ բըռնի՝ հազար բաբաթ բառ իս էլի.  
Խօսկիրըդ անգին ջալահիր՝ Ասմաուրու ճառ իս էլի.  
Հուտըդ աշխարըս է դալթի՝ բալասանի ծառ իս էլի.  
Զը կայ, քիզ պէս էշիի ջոռուն՝ կըրակ նընդած վառ իս էլի.  
Շատ մարթիք քիզիդ կու էրիս, էտ լիզվի տէր վուր իս, ախպէր:

Չուր ես ասիմ՝ իմացի,  
 Էշխի մէջըն հիմնացի  
 Ինձ հուրեան բիրեան արիւր,  
 Ասում իս, թէ՛ դիմացի:

Խիւթըս գըլխէմէս տարիլ իս, լիւթ ու թուքս զարդ իս արի,  
 Սիրտըս փուրումըս սպանէցիր, էշխըդ քիզի նարդ իս արի,  
 Ինձ հուրեան բիրեան շինէցիր. աջմբ դուն էլ զարդ իս արի.  
 Եփ քի սիրով մէյման անիմ, վիկացի. թէ՛ մարդ իս՝ արի,  
 Ուրախացի, ուրախացու՛ չունքի միզ մօդ հուր իս, ախպէր,  
 Հուր սիրով սիրէկան,  
 Քիզի դ՛ուլուդ պատվական,  
 Հազար թուրլու կէրակուր,  
 Սուրփ գինի անապական:

Համաշա իմ եարի ճամփին կանգնած իմ՝ տալիս իմ դօվա.  
 Աշխարքն աշխարով կըշտացաւ, իմ սիրալն քիզանից սօվ ա.  
 Սըրէ, շաղտու վուտիդ տակըն, էշխէդ դարայ՝ հավաջօվա.  
 Իսկի չիս գալի, չիս ասում. ճիստ իս լալիս Սայաթ Նօվա.  
 Զը՛լի՝ միտկըդ մօլօբվիլ է՝ սըրտումըդ պըխտուր իս, ախպէր,  
 Գըլտուր սիրտըդ պարզ արան,  
 Բըլբուլի պէս փառզ արան,  
 Աստուծուն փանօք, Քաղկուսն իս՝  
 Դարդըդ Խանին արզ արան:

Այս տաղի մի մասը, որ Ախվերդեանի հրատարակութիւնից  
 դուրս է մնացել, Գ. Սաստուրը բերում է էջմիածնի Վանքերձի մէջ:

|                        |                                  |
|------------------------|----------------------------------|
| Արդ իմ անում հազարին   | Եիս մի էշխի շունուն իմ,          |
| Հազար խաբին բազարին:   | Ինձ մի գանգրու (?) եար պիտի:     |
| Սիրտըս եարալու արիւր   | Եարի լիզուն բըլբուլ է            |
| Աչկըս կուլըս հազ արին. | Դաստամաղըն սըմբուլ է.            |
| Հազ (?) հազար պիտի     | Սայաթ Նօվէն լալիս է              |
| Էրած սրտին ճար պիտի    | Մակար (մագամ) դ՛արիւր բըլբուլ է: |

Էսպէս մուխամազ-բայեթի Արութիւնի ասած:

ԺԲ.

Շատ մարթ կ'օսէ՝ ես ետրէմէն հասրաթ իմ՝  
Լէյլի Մէշլուսն էլ չէ ելի էս հալօվ.  
Մարթ պիտի համաշա բէրանըդ տընդդէ՝  
Խօսկ իս ասում առակավուր մասալօվ:

Լիզուդ քաղցր ունիս՝ շաքար ու շաքթըն.  
Մաղիրըդ ուէհան է փաթըթած վարթին.  
Քի դարթարած տէսնիմ հիդ Մաղկազարթին՝  
Հաքիլ ըլիս դարդարբարըն խաս ալօվ:

Ես ինձի կօրցըցէք, ես մէ բան արէք,  
Խըփէցէք մէ տիղըս, մէ նշան արէք,  
Թէգուդ էստու համա քարասպան արէք՝  
Զիմ կըշտանում գօզալի հիդ խօսալօվ:

Աջաք վնւնց դիմանամ ես էս չափ դարին,  
Աչկէմէս արտասունք, դուս գու քայ՝ արին,  
Օրըն իր շափաթօվ կարօտ իմ եարին,  
Վնւնց օր դ'արիբ բըլբուլ՝ վարթին սքալօվ:

Խիթըս տարաւ՝ ջադուքարին չիմ տէսի.  
Բէմուրվաթին, բէիդրարին չիմ տէսի.  
Մայաթ նօվէն ասաց՝ եարին չիմ տէսի,  
Ման իմ գալի արտասունքըս հուսալօվ:

Էսպէս վարսադ Աբութինի ասած մէ սիրունի վրայ:

ԹԳ.

Ինձ ու իմ սիրեկան հարին՝ մէ տարի բերած գիղէնաք.  
Ախ քաշելէն՝ սրտիս մէջըն արունն մէրած գիղէնաք.  
Գիշիր ցերեկ՝ հարի խաթրու՝ ջիգարըս էրած գիղէնաք.  
Աչկըս թաց, բերանս ցամաք, լիզուս հիդքէրած գիղէնաք:

Սիրտըս փութումըս թուլացաւ անգալնէրու զախ անէլէն,  
Ուշկ ու միտկըս խառնըվէցաւ խուռըն խուռըն խաղ հանէլէն.  
Աչկէմէս ջուհարըն զընաց՝ հարէն կարօտ՝ ան անէլէն,  
Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կէրած գիղէնաք:

Էրած խօրված ման իմ գալի, մէ տիղ չը կայ մաք ունէնամ.  
Լիզվով չիմ կանացի ասի, թէգուզ խօսկըս փարդ ունէնամ.  
Ափսուսալու հազար ափսուս՝ ես էս դ'ադա դարդ ունէնամ.  
Էշխէն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիղէնաք:

Սիրտըս փութումըս սըքուր է, ալ աչկիրըս լաց է անում.  
Ծովըն նընգած ամբի նըման դօշս ու հախէս թաց է անում.  
Քանի վուր մըհլամ իմ զընում, դուզունս էլ խիստ բաց է անում.  
Հալվէցայ արնաքամէլի՝ հարէս հիդարած գիղէնաք:

Օվ տէսնում է, էս է ասում. «Վայ քու դարին, Սայեաթ Նօվա,  
«Համաշա քիզ պիտինք տէսնի՝ աչկըդ արին, Սայեաթ Նօվա,  
«Ինչօ՞վ չէլաւ, չը ռաստ էկմը մէ լավ հարին, Սայեաթ Նօվա».  
Ունրըս էրադի պէս զընաց՝ ծառըս չը խէրած գիղէնաք:

1759

Էս էլ դիւս ու Ենգի դունիայի ձէնօվ, հանգն դ'ադալի. Արուսթիսի ա-  
սած քրօնիկօնի 447-ին:

ԺԳ.

Էնդուր աչկըս չէ ցամաքում սրբտիս մէջըն արին մընաց .  
Վունչիչ դարօվ չը լափացաւ՝ մըհլամըս հիդ եարին մընաց .  
Էշխէմէն հիվանդ պառկեցայ, աչկըս ճանապարհին մընաց .  
Եփ մէռայ՝ իժոււմ տիս էկաւ՝ նազըն բէիդրարին մընաց :

Գարունքփան վախտըն լըցվիլ է, — Էրանի ձիդ, Փաղկած վարիւր,  
Թէ բլբուլին բազն զըրգէցիք, մանիշակօվ լիքըն սարիւր .  
Բաս ինչի՞ ձէնն չէ գալիս, սալբու չինար, կտ ինչ արիւր,  
Ճուխկըդ բըլբուլին սըպանից՝ կարմիր վարթըն խարին մընաց :

Ալ պուճպուճէն ասաց՝ խափէ սարումըն դարիւր բըլբուլին,  
Եփ բըլբուլըն միտըն ածաւ ուհնօվ կապած Թայիգուլին .  
Օվ վաղ գընաց՝ վարթըն քաղից, չասին՝ Թէ պէտկ է բըլբուլին,  
Վայ քու դարին, դարիւր բըլբուլ, վուր լէշըդ չափարին մընաց :

Խօսկիրըդ քաղցըր քաղցըր է, լիզուդ շաքար ու նաբաթ է,  
Խըմօղին վընաս չի անի՝ ձէռիդ բըռնածըն շաքարաթ է .  
Շափաթըն օխտն օրին, ապի, հաքածըդ քաբաթ քաբաթ է .  
Հաքիլ իս բէհէդ ծիրանին՝ ծալած դալամբարըն մընաց :

Աշուղի լիզուն բըլբուլ է, օրհնանք ունէ, նալաթ չը կայ .  
Շահի մօդ խօսկն անց կու կէնայ, սըպանէլու ջալլաթ չը կայ .  
Հէքիմ ու դադաստան չը կայ, մէ դըրուստ ադալաթ չը կայ .  
Մէ մարթ չը կէր՝ ազատիլ էր, Սայեսաթ նօվէն դարին մընաց :

1758 յունիս .

Է• էլ դիքա ու Ենգի դունիւյի ձէնոււ Արուսթինի ոստած, յունիս,  
քրօնիկանի 446-ին .

ԺԵ.

Ձիս ասու՛մ, թէ լմց իս էլի.  
Բարով տէսայ, իմ սիրէկան.  
Վարթի նըման բաց իս էլի  
    Քարէրով,  
    Քարէրով.

Բարով տէսայ, իմ սիրէկան,

Եփ կու հաքնիս ալ ու ասլաս,  
Տէսնողին կու շինիս մաս մաս.  
Դոշիդ պիտի լալ ու ավմաս  
    Շարէրով,  
    Շարէրով.

Բարով տէսայ, իմ սիրէկան,

Արի մէ դարդըս իմացի,  
էշխէմէդ համան իմ լացի.  
Օրըս էսպէս անց է կացի  
    Դարէրով,  
    Դարէրով.

Բարով տէսայ, իմ սիրէկան,

Ես քիզ գովիմ խաղի մէշըն,  
Շամամնիբըդ թաղի մէշըն.  
Ման իս գալի բաղի մէշըն  
    Եարէրով,  
    Եարէրով.

Բարով տէսայ, իմ սիրէկան,

Սայեաթ Նովէն մի՛նց զընջանայ՝

Աչկիբըդ օսկէ փընջան ա.

Դուշմանի լիզուն մընջանայ

    Չարէրով,

    Չարէրով.

Բարով տէսայ, իմ սիրէկան,

Էսպէս Թալիբ.

ԺԶ.

Ձենըդ քաղցրը ունիս՝ լամզով կու խօսիս.  
Նա պահէ քիզ, ումն օր ծառայիս, գօզալ.  
Մէշկըդ ջէյրանի է, ունզըդ շաքարի,  
Փռանգըստանէն էկած խարա իս, գօզալ:

Ղումաշ ասիմ՝ շուրէղէն է կու մաշվի,  
Սալբի ասիմ՝ ախրը մին օր կու տաշվի.  
Ջէյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու եաշվի,  
Բաս վճնց թարիփ անիմ՝ միրա իս, գօզալ:

Թէ մանուշակ ասիմ՝ սարէմէն կ'օսին,  
Թէ ջաւայիր ասիմ՝ քարէմէն կ'օսին,  
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրէմէն կ'օսին,—  
Արէգագի նըման՝ փարա իս՝ գօզալ:

Գուզիմ թէ համաշա դըրանըդ գամ ուխտ՝  
Աշկիբըդ կարմիր վարթ, նուր բացարած տուխտ,  
Լիզուդ՝ դըրիշ ունիս, ձէռըդ գուլգազ թուխտ.  
Մօվէմէն դուս էկած՝ զարա իս, գօզալ:

Սիրոյ սիրմըդ սըրտիս մէշըն ցանէցիր,  
Նազ ու դ'ամզով, եւր, իմ հօքին հանէցիր.  
Էս քու Սայեաթ Նօվուս դճն սըպանէցիր.  
Գըլթիդ էկած դ'ադէն առայ ես, գօզալ:

Ղափիա էսպէս լաւ եարի վրայ Արուսթինի տասած:

ԺԵ՛,

էս օր իմ ետրին տէսայ բաղլի մէշըն ման գալով,  
Գէգինըն դարթարվէցաւ իմ ետրի օսկէ նալով:  
Բըլբուլի պէս պըտուտ էկայ՝ վարթի վրայ, ձէն տալով:  
Ջունուն էլաւ խիլքս՝ գըլխէս՝ սիրտս տխուք, աչկս լալով:  
Յոյս ունիմ իմ Սաիդծօղիմէն՝ միը դռնմանն ըլի էս հալով:

Ենք, էդ քու նազ ու դ'ամգով ջանըս փուլ ու փանդ իս արի,  
Խմիլ իս էշխով շարքաթն, պոօշնիրդ դ'անդ իս արի:  
Խաթու խալով, քաղցր լիզվով՝ շատ ինձ պէսին բանդ իս արի:  
Տնւր դանակն, ինձի սպաննէ, մի տսի՝ բիշխանդ իս արի:  
Չունքի մահս ետրիմէն է, թնւղ՝ լի մէսնիմ լաւ գողալով:

Տարին տասերկու ամիս մազիրդ հուսած կու լի:  
Գոջմէդ միդը է կաթում, թօղնիս՝ ետիէդ թաց կու լի:  
Գարնան շնչի նման՝ կարմիր վարթի հիդ, բաց կու լի:  
Ինչ օգուտ է քու բաղմնչուն, դ'արիբ բլբուլն լաց կու լի:  
Մուրվաթ չունիս, պտուտ գու քայ բաղլի վրայ ճըկճըկալով:

Եփ քու սուրաթն կու քաշին՝ նաղ՝ շունմ շնուք կու տաս:  
Կու վառվռաս ճըաքի պէս՝ սաղչումն շնուք կու տաս:  
Մըշկով լիքն բըրօլի պէս՝ թաղչունմ շնուք կու տաս:  
Բաց կու լիս կարմիր վարթի պէս՝ բաղչունմ շնուք կու տաս:  
Բամին դիբչի փօթլիդ մէշն՝ հուտդ դու քայ վալալով:

Ես Էլ ուրիշ ետր չունիմ, էս գլխէն վաղ իմացի:  
Անդաճ արս, մատաղ իմ քիդ, էս խօսկս սաղ իմացի:  
Մտիկ արս քու Սաիդծօղին, տուդ, նամադ՝ աղ իմացի:  
Սայեաթ Նօվին մի ջգըէցնի, էշխէմէդ՝ տուսաղ իմացի:  
Խիլքս գլխէմէս տարիլ իս քու բէմուրվաթ գարգիշ տալով:  
Էսպէս լաւ մուխամադ Աբութինի ասած:

ԺԸ .

Աշխարհումս ան չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա.  
Անմահական ջրբով լիթըն օսկէ փընջան իս ինձ ամա.  
Նըստիմ, վըրէս շըվաք անիս՝ դարբար վըրան իս ինձ ամա.  
Սուչս իմացի, էնէնց սպանէ՝ Սուլթան ու Խան իս ինձ ամա:

Մէշկըդ սալբու չինարի պէս, ռանգըդ Փըռանգի ատլաս է,  
Լիզուդ շաքար, պըռօշըդ դ'անդ, ակոէքըդ մարքըրիտ արմաս է.  
Օսկու մէշըն մինա արած աշկիրըդ ակնակապ Թաս է.  
Պատվական անգին ջավայիր, լալ Բադէշխան իս ինձ ամա:

Ես էս դարդին վնձնց դիմանամ՝ մագամ սիրտըս ունիմ քարած.  
Արտասոււնքս արուն շինէցիր, խիթըս գըլխէս ունիմ տարած.  
Նուր բադ իս, նուր բադչի մէշըն բօլօքքըդ վարթօվ չափարած.  
Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրօվ սէյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արաւ. ես դարթուն իմ, սիրտս է քընած.  
Աշխարս աշխարօվ կըշտացաւ, իմ սիրտըս քիզնից սօվ մընաց.  
Եար, քիզ ինչօ՞վ Թարիփ անիմ՝ աշխարհումս բան չը մընաց.  
Կրակէ ծօվէմէն դուս էկած՝ ռաշ, ջէյիրան իս ինձ ամա:

Ինչ կուլի մէկ հիզըս խօսիս՝ թէ վուր Սայեսթ Նօվու եար իս.  
Շուխկըդ աշխարըս բըռնիլ է՝ արէգագի դէմըն փար իս.  
Հուսօվ՝ հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանուշակ, սուսունբար իս.  
Կարմըրագուն դաշաի ծաղիկ, հօվտաց շուշան իս ինձ ամա:

Էսպէս Արութինի ասած. ով որ սովորի, Թողութիւն շնորհէ, էսպէս  
դ'ազալի դաստոս քէ դաստոս Թարփանուրի ձէնուս Արութինի ասած.

ԺԹ.

Ինձ սիրէցիր, էշիւն նընդար, խաղի դավթար իմ քիզ ամա.  
Մի քաղի փըշի ծաղիկն՝ վարթ սուսանբար իմ քիզ ամա.  
Ձիմ թօղնի արէգագումն՝ բաղշի սաջար իմ քիզ ամա.  
Ես քու մահըն վճնց կու խընդրիմ՝ նուղլ ու շաքար իմ քիզ ամա:

Էլ քու բաղին մըտիկ արած, ուրիշ բաղէն վարթ չին տա քիզ.  
Աղ ու հացըն մի դէն գըցի, շափթէնը մէկ մըտիկ տնւ միզ.  
Թէգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չիս տէսնի ինձի պէս աղիզ.  
Թաք ուրիշ գօզալ չը սիրիս՝ իղըարօվ եար իմ քիզ ամա:

Թաք ես մօրէս չէի ծընի. վայ էն օրին՝ ես քիզ տէհայ.  
Դու բուլբուլ իս, ես կարմիր վարթ. չափոս, թէ՛ վարթըն ջալդ կէհայ.  
Մէ փութըր էղէնց գիմացի, շուտօվ չընդըստան մի էհա.  
Անգօրծիլ, անխարջ ու քըրիհ՝ մանդիլի գար իմ քիզ ամա:

Աստուած վըկայ, դիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի.  
Ե՛կ քիզիդ սիրօվ դամ անիմ, օ՛վ գուզէ բէգամաղ ըլի.  
Ես քու խօսկէն չիմ անց կէնա, թաք քու դամաղըն չաղ ըլի.  
Թէգուզ անմահութին ուղիս՝ սիրօվ կու ճարիմ քիզ ամա:

Քու դարդըն ինձի պառվէցուց. ճւմըն ասիմ, Սայեաթ Նօվա.  
Մի գըցի ձէռնէմէն ձէռն՝ օսկէ թաս իմ, Սայեաթ Նօվա.  
Փռանգըստանու միշէն էլած՝ դար ատլաս իմ, Սայեաթ Նօվա.  
Ծալէ դավթարըզ, դութին դի. ունգ ու բուքար իմ քիզ ամա:

Ղազարի էսպէս ասելէ մէկ հաւատարիմ սիրեկանն, և միւս երեսին Սայեաթ Նօվէն: Ապրիլ 1-ին քրօնիկօնի 412ին:

(1784).

Ի.

### Սայեաք Նովէն

Ի՛նչ կ'օնիր հէքիմըն, ի՛նչ կ'օնիր ջարէն՝  
Քու տըվածըն ուրիշ դիդ է, *հարիշ դիդ*  
Էրոււմ է մըհլամըն, չէ լամիւում եարէն.  
Քու տըվածըն, ուրիշ դիդ է, *հարիշ դիդ*

### Սիրէկանն

Ասաց թէ. *«Հիւացի գըլխէմէս գընս,*  
*«Քու ասածըն ուրիշ տիդ է, հարիշ տիդ*  
*«Էա քու արարմունքսըն քիդի չի մընա,*  
*«Քու ասածըն ուրիշ տիդ է, հարիշ տիդ».*  
ն'ւրիւ սիդ. ամա՛ն ուրիւ սիդ.

### Սայեաք Նովէն

Ասի թէ. *«Էշխէմէդ չիմ հանգչում տանըս,*  
*«Զէննիրըս թըլացաւ՝ չէ շինում բանըս,*  
*«Էրվէցաւ ջիգարըս, մաշվէցաւ ջանըս՝*  
*«Քու տըվածըն ուրիշ դիդ է, հարիշ դիդ».*

### Սիրէկանն

Ասաց. *«Իմ դիդէմէն քիդ չը կայ չարա,*  
*«Գընս թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճար արա,*  
*«Թէ չէ՝ անիլ կու տամ քիդ փարա փարա.*  
*«Քու ասածըն ուրիշ տիդ է, հարիշ տիդ».*

### Սայեաք Նովէն

Ես բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումըն.  
Կըբակ դըրբը սըրտիս խուցի եարումըն.  
Վհանց գըրանքումըն կայ, վհանց դավթարումըն՝  
Քու տըվածըն ուրիշ դիդ է, *հարիշ դիդ*

### Սիրէկանն

Ասաց թէ. «Քի զարար՝ շինէցիր շահըդ.  
«Պըտրէցիր աղաբըդ, կըտրէցիր ահըդ.  
«Մի վիթի արունըդ, մի շանց տա մահըդ,  
«Քու ասածըն ուրիշ տիղ է, հւրիշ տիղ»:

### Սայեաթ Նովէն

Ասի թէ. «Մաղիրըդ սուրմա իս անում,  
«Հէնց գիդիս՝ չիմ գիդի, եմը, չիմ իմանում.  
«Սէրըդ ինձ մահ դարաւ՝ Էլ չիմ գիմանում,  
«Քու տըվածըն ուրիշ գիղ է, հւրիշ գիղ»:

### Սիրէկանն

Թաքավուրի Թագի լայիղ քարըն իմ,  
Շիրինի պէս Փարհագի գիդաբըն իմ,  
Ես էն գըլխէն Սայեաթ Նովու. ետըն իմ,  
Քու ասածըն ուրիշ տիղ է, հւրիշ տիղ:

### Սայեաթ Նովէն

Հիդըս խօսի, մի կէնա խըռօլի պէս.  
Տալղա տըվիր՝ գէմիս տարար ծօլի պէս.  
Կու մէռնիմ, — չիս տէսնի Սայեաթ Նովի պէս.  
Քու տըվածըն ուրիշ գիղ է, հւրիշ գիղ, ամա՛ն,  
ուրիշ գիղ:

1756, սեպտեմբեր 3.

Էսպէս Աբութինն և իր սիրելեանն որ խօսել են, էն է. Սօլարումզ-տան շիրվանի հանդում. Սեպտեմբերի 3-ին քրօնիկօնի 444 ին:

ԻԱ.

Անգին ակըն վըրէդ շարած՝ անբան օսկուռ ռախտ իս, գօզալ.  
Աստուած քիզ ու նըրան պահէ՝ ում հիդ վուր նըվախտ իս, գօզալ.  
Բըլբուլին լիզու շինէցիր՝ դուն վաըթի դըրախտ իս, գօզալ.  
Վարթըն՝ մէ ամիս ումըր ունէ, դուն ամէնան վախտ իս, գօզալ:

Մէմէկ մէմէկ էլ չի ասվի՝ Թարիփը դարաւ քուլիչօվ.  
Պատիրըդ՝ դարօվ դարբարօվ, դօշամէդ՝ խալօվ խալիչօվ,  
Տախտակներըն՝ էրծաթէմէն, միխիրըն՝ օսկէ գուլիչօվ.  
Խօսրօվ փաշայէմէն Թօղած, դուն, Թօվուզի տախտ իս, գօզալ:

Սկանդարի Զուլդարի Թօղած ջաւահիր իս, անգին լալ իս.  
Դանդըն դանդի մէշէն հանած, հիդքաշած մըսխալ մըսխալ իս.  
Եփ դուն սէյրանգահըն կէհաս՝ օշ օվ այնուամըդ չէ գալիս,  
Փաք չունիս փաշահագադիմէն, անդամ առանց սախս իս, գօզալ:

Թէգուզ մըտօք ճարտար ըլի, կանց Սօդօմօն դադա ըլի,  
Թէգուզ մարքարիտօվ լիքըն, Թէգուզ սադափ սադա ըլի,  
Թէգուզ արէգադ լուսնիակ, Թէգուզ հուրիգադա ըլի,  
Էտ քնւ ամէն մարիփաթօվ դիփունին կու ախտիս, գօզալ:

Երգնուց վըրէդ ձուն է էկի՝ փունջ մանիշակ նուր իս, ջանում.  
Մօդըդ նըստօղըն կու էրվի՝ էտ նազի տէր վուր իս, ջանում.  
Դիւ Սայեսթ Նօվէն չէ մէսի՝ դուն ինչի՞ տըխուր իս, ջանում.  
Թաք ես մէռնիմ, դուն սադ ըլիս. գէրէզմանըս վադ տիս, գօզալ:

(1758)

Էս էլ դիքայի հանգում Արուսթինի ասած. Աստուած Թոգուսին շնորհէ սիրեկնէմէն սպանած Արուսթին Սայեսթ Նօվին. Զրօնիկօնի 446 ին:

ԻՅ.

Էջիւմէդ հիվանդացիլ իմ, դիդի համա իմ լալի.  
Վախում իմ թէ դարդըն հալէ, եղի համա իմ լալի.  
Շահի կարքած վէթիլի պէս դիդի համա իմ լալի.  
Տանէն դուս արածի նըման տիդի համա իմ լալի:

Մէ տիդ հուքմի հէքիմ չը կայ՝ դուռըն էհամ, կանչիմ հարա.  
Վի կէնայ լօղմայ հէքիմըն՝ բալըամ դարդիս անէ չարա.  
Տիս թէ ինչպէս է շրփօթիլի՝ դուն իմ խիլքին մըտիկ արա, —  
Ջուրն էկաւ՝ գէրանս տարաւ, ծիդի համա իմ լալի:

Սիրտըս էջիւմէն էրած է, դուգուն դադըն ինչ կ'օնիմ.  
Վհնց զօրա ունէ, վհնց շափար՝ ես էնպէս բաղն ինչ կ'օնիմ.  
Անդի լարըն կըտըրիլի է՝ դարգաղ սաղապն ինչ կ'օնիմ.  
Նիտըս քարումըն կօտըցի, թիդի համա իմ լալի:

Ղաւամըն գիրըս չէ գըրում՝ մէչ շուրացած թանքի նըման.  
Քօսկիրըս մէմէկ չի ասիլի՝ իմաստնէրու բանքի նըման.  
Մէչըն չիմ կանացի մըտնի, ծօվի ծածկած վանքի նըման.  
Քօստօջնահէրըս հիռացաւ, միդի համա իմ լալի:

Գիդըմըն՝ մէլիք տանուտէր, քաղաքտիդըն՝ Սուլթան խան իս.  
Բադումըն՝ վարթ ու մանիշակ, սարումըն՝ սընըուլ սուսան իս.  
Ղաբուլ ունէ Սայիտթ Նօվէն՝ թաք քու ձեռով դուն սըպանիս.  
Մէռնէլուս համա չիմ հօքում, ցիդի համա իմ լալի:

1758

ԻԳ.

Շատ սիրուն իս, Շախաթայի, ասողին՝ խար չիս անի.

Անջաղ գըցիս էշխի մէշըն, հիդ կէհաս՝ քար չիս անի:

Էշխըն հէսաի կըրակ ունի՝ վոնց կու էրվի, վոնց կէրթայ.

Թէգուդ նընգնիմ ծովի մէշըն՝ հօջնալու ճար չիս անի:

Բաս Աշուդըն վոնց դիմանայ էտ քու տըված կէծակուն

Դուն ինքնակալ թաքավուր իս՝ բէհուբազար չիս անի:

Թէ վուր սարէրուն հանդիբիս՝ կու հալիս մումի նըման.

Թէ վուր քաղաք տիդ հանդիբիս՝ կու քանդիս,—վար չիս անի:

Իսկի բէհուբազար չունի՝ Շախաթայիս չասողըն.

Էնդու համա, Սայեսթ նօվա, շատ էյթիբար չիս անի:

Էս, դիվանի խիստ լաւն է: օվ օր, սօվըի: օղորմի: ասէ. հիմի: գու-  
դիմ: Թէ: հայէվար, ասիմ: Ամէն Աստուած. ես, ժըղղըսու: վուրթի: Թրու-  
թինս: պասուց: ինչօրի: հարսուն տարին. գլուխ դրի: ամէնան: խաղին: ա-  
մա: սուբբ: Կարապիտի, կարօղութէնօվ սօվրէցայ. քամանչէն: ու չօնգուրն:  
ու ամբուրէն †

ԻԴ .

Ես քու զ'իմէթըն չիմ գիշի՝ ջալահիր քարին նըման իս.  
Տէսնօղին Մէջլում կու շինիս՝ Լէյլի գիղարի նըման իս:

Աշխարումըս իմըն գոն իս,  
Բէմուրվաթ իս, մուրվաթ չունիս.  
Պըռօշնէրիդ նարաթ ունիս,—  
Ղ'անդ ու շաքարի նըման իս:

Դագա պիտի՝ թարիփդ ասէ,—  
Ակնէքդ եաղ'ութ ալմաս է,—  
Ռանգըդ Փըռանգի ատլաս է,—  
Զար զ'ալամքարի նըման իս:

Մագիրըդ նըման ռահանի,  
Դուն ուրիշ խիալ մի անի,  
Ռահմ աբան, հօքիս մի հանի,  
Մուրվաթօվ եարի նըման իս:

Վժնց դիմանամ էսչափ չարին՝  
Աչկէմէս կաթում է արին.  
Սայեաթ Նօվա, նազու եարին  
Դընած նօքարի նըման իս:

Թապիր Արութինի ասած.

ԻՆ.

Թամամ աշխար պըտուտ էկայ՝ չը թողի Հաբաշ, նազանի.  
Զը տէսայ քու դիդարի պէս՝ դուն դիվունին բաշ, նազանի.  
Թէ խամ հաքնիս, թէ դար հաքնիս, կու շինիս դ'ումաշ, նազանի.  
Էնդու համա քու տէսնողըն, ասում է՝ վաշ վաշ, նազանի.

Դուն պատվական ջափահիր իս, էրնէկ քու առնողին ըլի.  
Օվ կու գըթէ՝ ախ չի քաշի, վայ քու կօրցընողին ըլի.  
Ափսսու վուր շուտով մէռիլ է, լուսըն քու ծընողին ըլի.  
Ապրիլ էր, մէկ էլ էր բէրի քիզի պէս նադ'աշ, նազանի:

Դուն էն գըլխէն ջուհարդար իս, վըրէդ դարնըշան է քաշած.  
Դաստամադիդ թիլի մէշըն մէ շադա մարջան է քաշած.  
Աչկերըդ օսկէ փխլա՝ շարխէմէն փընջան է քաշած.  
Թէրթէրուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր դ'ալամթըրաշ, նազանի:

Էրէսըդ՝ Փարսէվար առիմ, նըման է շամա ու դ'ամարին,  
Բարակ միչկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին.  
Դ'ալամըն ձէռին չէ կանգնում, մաթ շինէցիր նադ'ըշքարին.  
Եփ նըստում իս՝ թութի դուշ իս. եփ կանգնում իս՝ ուշ, նազանի:

Ես էն Սայեսթ Նօվասին չիմ՝ վուր ավզի վըրայ հիմնանամ.  
Աջմը միզիդ ինչ իս կամում՝ սըրտէդ մէ խաբար իմանամ.  
Դուն կըրակ, հաքածըդ կըրակ. վուր մէ կըրակին դիմանամ.  
Հինդու դ'ալամքարու վըրէն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի:

1758

Էս էլ դիքա ու Ենզի դունիայի հանգում, որն որ մուսադասի պէս կա-  
ւեն, Աբութինի (ասած) քրօնիկօնի 446-ին:

ԻԶ.

Դուզիմ՝ ումբորըս հէնց անց կացնիմ՝ օրըս մունաթ չը քաշէ.  
Թէգուզ հազար դարդ ունէնամ՝ դարըս մունաթ չը քաշէ.  
Հաստ անիմ՝ բարու հանդիբիմ՝ չարըս մունաթ չը քաշէ.  
Գըլուխըս չարէն ռադ անիմ՝ սարըս մունաթ չը քաշէ.  
Էրէսըս հայեալու պահիմ՝ արըս մունաթ չը քաշէ:

Հիռու տիղացէն գալիս իմ, խիթի դարար շահ իմ բէրի.  
Հուջրէս լիթն է անգին լալօվ, ջալահիրչուն ան իմ բէրի.  
Հինգու մէշէմէն դուս էկած դիմէթօվ մաթան իմ բէրի.  
Տէսնօղըն՝ թահրըն չի դիդի՝ մէ հէստի քարդան իմ բէրի.  
Հէստի տիղ դուքան բաց անիմ՝ դարըս մունաթ չը քաշէ:

Մէ բիռըս Փռանդի ատլաս է, տալիս է շօվդ ու շափաղաթ.  
Մէ բիռըն զար դալամքարի, տիղ ունի վունց օր մաքաղաթ.  
Մէ բիռըս Զինուամայինին կու առնէ թամամ փառաղաթ.  
Մի բիռըն հնգիդունիա, մէ բիռըն փաշայի խալաթ,—  
Վունց ձէվիլ գուզէ, վունց կըտրիլ՝ կարըս մունաթ չը քաշէ:

Մէ բիռըն դըրմըզ ու դափռանդ, մէ բիռըն էլ գանջափիլ ա,  
Մէ քանի բիռըս դարիչին, մէ բիռըն էլ դարանփիլ ա,—  
Բէրնիրըն վըրայ չէ գալիս, հակնիրըս է սիլա սիլա.  
Աստակ ծօվի մէշէն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա.  
Մարքարիտըս շադա շադա՝ շարըս մունաթ չը քաշէ:

Շատ մարթ էստունք կու իմանայ, կ'օտէ. «Հալըաթ սա գանգին ա».  
Զին դիդի թէ ուշկ ու միտկըս հազար մէ բաբաթ հանգին ա.  
Մարիփաթօվ քաղցըր լիզուն դիփունի վըրայ անգին ա.  
Սայեաթ Նօվէն էնդուր կու լայ՝ գըլուխը մահու ճանգին ա,—  
Աստուած սիրօղն ինձ ազատէ՝ հարըս մունաթ չը քաշէ:

Մուխամազ Արութինի (տասած):

Ի՛նչ .

Դունն է՛ն հուրին իս՝ վուր գէմի կու գալթէ .  
Զունքի ինձ զալթէցիր խափօյ, նազանի,  
Արիվիլք, արիվմուտ, հարաւ ու հիւսիս  
Զը կայ քիզի նըման՝ չափօյ, նազանի:

Շաս մարթ քու էշխէմէն կու դառնայ նզիդ .  
Արի մէ ռահմ արան, լաւ կացի միզիդ .  
Գուզիմ թէ համաշա դամ անիմ քիզիդ՝  
Սանթուրօյ, քամանչօյ, դափօյ, նազանի:

Դարգիրըս զատացաւ՝ ասիլ իմ ուզում .  
Աչկէմէս արատառնք հուսիլ իմ ուզում .  
Համաշա, եանր, քիզիդ խօսիլ իմ ուզում .  
Սիրտըս չէ կըշտանում գափօյ, նազանի:

Հայեալու ես, ադաբ ունիս, ար ունիս .  
Ձէռիդ դաստա կապած սուսանբար ունիս .  
Տնւր ինձի սըպանէ՝ իխտիար ունիս .  
Հէնչաք ըլի՝ կէնաս բափօյ, նազանի:

Սայեաթ Նօվէն ասաց՝ արդ անիմ Խանին .  
Դարբու ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին,  
Հէնչաք ըլի, եանր, գաս իմ գէրէզմանին, —  
Անիս խուղըն վըրէս ափօյ, նազանի:

ԻԸ .

Աջմբ քու սիրտըն օ՛վ շինից՝ խօնարից, հիգնից՝ բեղամաղ.  
Քանի գուզէ մարթ վուր հարփի, վճանց կուլի վաղնից բեղամաղ.  
Ծանր, ես քիզ ի՛նչ գէթ իմ արի՝ նըստած իս միգնից բեղամաղ.  
Քամէցիր էշխիդ մանգանօվ, — ես պիտիմ քիզնից բեղամաղ:

Ինչ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանուժս ջան չէ մըտի.  
Ուշկ ու միտկըս դուն իս տարի, ձէռիս մէջըն բան չէ մըտի.  
Հէնց գիդիմ՝ թէ չուրս տարի է Քաղաքըն քարվան չէ մըտի.  
Ռախտարի նըման նըստած իմ՝ իջարից, միգնից բեղամաղ:

Հալըսթ սէրըն կէս է էլի՝ վուր միգի ատիլ է ուզում.  
Չուրս տարէկան էրէխի պէս եւրըս խըրատիլ է ուզում.  
Բընիլ է էշխի դանակըն, սիրտըս կըտրատիլ է ուզում.  
Շատ մարթ կայ նըստած՝ լաց լէլիս, գօղալի նաղնից բեղամաղ:

Թէգուզ իմացի, կարթացի իմաստնատիրաց առակըն.  
Էշխէմէդ ջուհուն իմ էլի, վէր էկաւ սըրտիս վարակըն.  
Աստուած վըկայ, մարթ չը քաշէ՝ դըժար է էշխի կըրակըն.  
Տէսայ արունուտ ջէյրանըն՝ վուրսնուրքիմ գէնից բեղամաղ:

Անց կացաւ աշու . . . . . խաղալ է ուզում  
Հասաւ գորունքվան հուսանըն բըլ . . . . .  
Սայիսթ Նօվէն առանց նընգիր ճիտըն . . . . .  
. . . կօրցըցած խօնթկարի պէս նըստա . . . . .

Ըստ Գ. Ասատուրի՝ ԻԸ. տաղի վերջին երկու տներն ունեն Բ. դաւթարում հետեւեալ փոփոխակը.

Դուզիս խմացի, կարգացի, խմաստնաց սիրով արակըն  
Ախ քաշէլէն սիրտըս էրվից, վէրացաւ սրտիս վարագ'ըն.

Աստուած վրկայ, մարթ չը քաշէ, դըժար է էշխի կըրակըն.  
Տէսայ հարալու ջէյրանըն, վուրանուրթի միզնից բէգամադ:

Հասաւ գարունքվայ հուսանն բըյրուլնիւն գալ է ուզում.  
Կարմիր ու գուլգազա հաքի, սարեակը խաղալ է ուզում.  
Սայեաթ Նօվէն արանց նընգիր վիզըն գցած լալ է ուզում  
Ջարըն կօտրած խօնթքարի պէս նստած է խազնից բէգամադ:

ԻԹ.

Դարդ մի անի, ջան ու ջիգար, միտկըդ դիվաց չը տէսնէ.  
Աչկ խավրի, անգաւ խուլանայ՝ էրէսըդ թաց չը տէսնէ:

Վննց արեգագըն շուղկը տան, վննց լուսինը լուս անէ.  
Ավալ քու տէսնօղըն մէռնի՝ քիզ գըլխիբաց չը տէսնէ:

Դուն գըլուխըդ մահի կու տաս, ես էլ քիզ հէդ կու մէռնիմ.  
Միր էդնէն թամամ աշխարըս սօվ քաշէ, — հաց չը տէսնէ:

Թէ վուր չը գամ ու չը տէսնիմ՝ հազար բարաթ բան կ'օսիս.  
Բաշկա մարթ վննց գայ, վննց խօսի, վննց քի տըխրած չը տէսնէ:

Աստուծու բէրնէմէն առնիս մըխիթարիչ սուրփ հօքին.  
Էլ վաղ մէռնի Սայեաթ Նօվէն՝ ճիտըդ գըցած չը տէսնէ:

Էսպէս դիվանի լաւ աիդ տաած, որն գրոց Հայերէն տաւէր, որն Վրաց,  
Թուրքերէն էլ ուզում էի հետն խառնել, բայց չը խառնեցի:

Լ.

Դիրա ու ենգիդունիա, զարբար ու զար իս, գօվէլի.  
Հինդու դիարէմէն էկած զարդալամքար իս, գօվէլի.  
Շատ սօվդաքար քիզ կու պըտռէ՝ դու անգին քար իս, գօվէլի.  
Անտակ ծօվի մէշէն հանած անգին գօվհար իս, գօվէլի:

Եփ դուն բաղէն սէյրան կէհաս՝ ծօվի նըման կու քաւ ալիզ.  
Դըլուխըդ պահէլօվ արտ, նամ չը դիպչի խաթու խալիդ.  
Տէսնօղըն հէյբաթ կու մընայ՝ էտ քու սիրուն մահի ջամալիդ.  
Աշխարումըս նուր դուս էկած՝ թաղա նուգըար իս, գօվէլի:

Արի միզիդ մէ լաւ կացի, դուրբան ըլիմ մուրվաթումըն.  
Ման էկայ երկիր, չը տէսայ էտ քու նըման ջուրաթումըն.  
Վճնց Հինդու դիարումըն կայ, վճնց Փըռանդի սուրաթումըն.  
Քաշվիլ իս քարդահի մէշըն, ուրիշ թահար իս, գօվէլի:

Քարիփըդ դավթար իմ արի, փիլ պիտի՝ վուր դիրքըն տանէ.  
Դուն քու մըտկի հիդ մի էհա, էտ խիալըն սըրտէդ հանէ.  
Մէշկըդ՝ հադիդէմէն քաշած սիրմա մավթուլի նըման է.  
Աշխարիս շըվաք իս անում սալք ու չինար իս, գօվէլի:

Ես քիզանից չիմ հիռանայ՝ թէ չի հասնի մահիս վաղէն.  
Եփ մէռանիմ, շաղ տու վըրէս՝ դաստամազի թիլի շաղէն.  
Հէնչաք ըլի՝ ուրախ կէնաս. Սայեաթ Նօվէն առնէ դաղէն.  
Շատ մարթ կ'օտէ՝ թէ եար ունիմ, դուն ուրիշ եար իս, գօվէլի:

Էս խաղն ով որ սօվրի, Դօստի խաղի ձէնով ասէ՝ թէ որ չիմանաս  
հարցա՝ թէ զօգալար իղնաղինա քաղ դաստա քէդաստա թարփանուր:

ԼԱ.

Էշխըն վառ կըրակ է՝ էրվելօվ գու քամ, —  
Շատ մարթ կ'օսէ՝ ես եարի հիդ ման գու քամ,  
Էս դարդէմէն օվ չէ քաշի՝ վնչ քաշէ.  
Օվ եար սիրէ, Էլ չասէ թէ. «ջան, գու քամ»:

Շատ մարթ կայ՝ էն գըլիէն սըրտում ունէ դ'ամ.  
Բազի մարթ չէ քաշի, էշխէմէն է խամ.  
Ինչ ասիս կօնիլ տայ՝ սէրն է անըսկամ. —  
Հալվէցայ, մաշվէցայ. Էլ ինչ «ջան, գու քամ»:

Էշխըն վուր կայ՝ հազար բարաթ՝ հանգ ունէ,  
Ուշկ ու միտկըն կու քընէցնէ՝ բանգ ունէ.  
Բըռնածըն չի թօղնի՝ դ'այիմ չանգ ունէ. —  
Էնդու համա՝ խան հիդ կէհամ, խան գու քամ:

Թէ դուն էշխի հիդ մանգալըն՝ հարցընիս՝  
Ձի դիմանա Բօստօմ Զալըն՝ հարցընիս.  
Թէ բէմուրվաթ եարի հալըն՝ հարցընիս՝  
Ասում է թէ. «Սուլթան գու քամ, խան գու քամ»:

Սայեաթ Նօվէն ասաց. շատի ջանք դըրի,  
Մէ բափա չը տէսայ հում կաթնակիրի.  
Օվ օր ինձ չի սիրի, իս էլ չիմ սիրի.  
Սէրըն սէր կու բէրէ, սիրէկան գու քամ:

Ղափիա: Էսպէս լու օդութլամա Արութիւնի ասած:

ԼԲ.

Արի համօվ դ'ուլուդ արա՛, խալխի նօքար Սայեաթ Նօվա.  
Ամէն մարթ չի կանայ ճանգի շահօվ շրքար, Սայեաթ Նօվա.  
Օ՛վ քիզի լիդի պարքիվէ, դուն տա՛ շաքար, Սայեաթ Նօվա.  
Հաստ արա՛ շուշէդ չը կօտրին, չը խըփին քար, Սայեաթ Նօվա:

Քէզուդ դըպրատանըն պահ տաս՝ ծեծօվ չի խըրատվի խիվըն,  
Ինչըու անձնէն չը դուա էհա անախտէլի էն չար դիվըն.  
Բէդասլըն՝ ասըլ չի դառնա. թօլօվ չի սիպտակի խիվըն.  
Ծուռըն փէտըն չի դըրըստի ռանդան, դուրդար Սայեաթ Նօվա:

Քէզուդ իմանաս, գիդէնաս ասաղէրու համբարըըն սիրուն.  
Անքարի գուրձըն կօրած է՝ կարթա՛ Հարանց վարըըն սիրուն.  
Ալիտարանի խօսկիրըն՝ մարքարիտէ կաըըն սիրուն.  
Մի ածի խուզի առչիվըն լալ ու դօվար, Սայեաթ Նօվա:

Քէ էս կինաց փառըըն չուզիս՝ էն կինաց ալմասըն կու տան.  
Քէ հօքուդ խաթիր շա՛ հաքնիս՝ զար քաշած աալասըն կու տան.

.....  
Խօստօվնիս արած միխկըդ. չանիս ինքար, Սայեաթ Նօվա:

Վուր տիդ հասնիր, վուր տիդըն սուք, վուր տիդ սօյրաթ խադ է ըլում.  
Վուր տիդ ժամ, վուր տիդ պատարաք, վուր տիդ սիրօվ տադ է ըլում.  
Քէ վուր հօքուդ կամքն իս անում, մարմինդ բէդամադ է ըլում.  
Վուր մէ դարդին կու դիմտնաւ դա՛ն ջըրատար Սայեաթ Նօվա:

(1758)

ԼԳ.

Բըլբուլի հիդ լաց իս էլի,  
Վարթի նման բաց իս էլի  
Վարթաշրբով թաց իս էլի,—  
Թաց իս էլի.

Ձկայ քիզի նման, չկայ քիզի նման.  
Քիզ նման, քիզ նման,—  
Դուն իս աննման:

Սիրունութինդ էլաւ արբար.  
Մաղիր ունիս՝ սիւմ ու շարբար.  
Քիսազ գու քայ դ'ուշու գարբար,—  
Ղ'ուշու գարբար,

Ձկայ քիզի նման, չկայ քիզի նման.  
Քիզ նման, քիզ նման.—  
Դուն իս աննման:

Էրէսըդ է շամս ու դ'ամար.  
Ջանքս գուս գու քայ քիզ ամար:  
Մէչկիդ ունիս օսկէ քամար.—

Օսկէ քամար,

Ձկայ քիզի նման, չկայ քիզի նման.  
Քիզ նման, քիզ նման.—  
Դուն իս աննման:

Հաքիդ գարբն՝ ալ իս արի.  
Բըլբուլի հիդ լալ իս արի.  
Բարկ էրէսիդ խալ իս արի,—  
Խալ իս արի.

Ձկայ քիզի նման, չկայ քիզի նման.  
Քիզ նման, քիզ նման.—  
Դուն իս աննման:

Դարգըս ասիւմ՝ կուլան սարիր.  
Էս լինչ բան էր, վուր դուն արիր.—  
Սայեսթ Նօվուն՝ շունուն արիր.—  
Ջունուն արիր.

Ձկայ քիզի նման, չկայ քիզի նման.—  
Քիզ նման, քիզ նման.—  
Դուն իս աննման:

1752 ժարտ.

Քրօնիկօնի 440-ին ժարտի վերջին: Էսպէս բէլիր Ղ'ալիի հանգում թաս-  
լիք Օսմանցւոց մուղամի:

Աշխարհս՝ մէ փանջաբա է, — թաղէրումէն բէգարիլ իմ.  
Մըտիկ տըվսղըն կու խուցվի, — դաղէրումէն բէգարիլ իմ.  
Էրէգ լա՛վ էր կանց վուր էսօր, — վաղէրումէն բէգարիլ իմ.  
Մարթ համաշա մէկ չի քլի, — խաղէրումէն բէգարիլ իմ.

Դօվաթըն էյթիրար չունէ, եփ օր կէրթայ իր օրփարով.  
Լա՛վ մարթն էն է՝ գլուխըն պահէ աշխարումըս էյթիրարօվ.  
Աշխարհս միզ մընալու չէ իմաստնասիրաց խաբարօվ. —  
Դուգիմ թըռչի բըլբուլի պէս, — բաղէրումէն բէգարիլ իմ.

Օ՛վ կօնէ՛ թէ ես կու ապրիմ առուտէմէն ինչըու մութըն.  
Աստուծու ձէռումըն հիշտ է՝ մարթու աշխարք կլումուտըն.  
Ղուրթըս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն.  
Քըսանըն մէ դուլ չին պահում, — աղէրումէն բէգարիլ իմ.

Աշխարհս միզ մընալու չէ, քանի նըստինք դօղ ու ստփին.  
Հո՛ւմ կաթնակիր Աթամի դաթ, նալաթ քլի էս քու բափին.  
Համփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.  
Դօստիրըս դուշման ին դարի, — եաղէրումէն բէգարիլ իմ.

Սայեաթ Նօվէն ասաց. դարդըս կանց մէ նաքըն շատացիլ է.  
Չունիմ վաղվան քաղցըր փառքս, հիմի դառըն շատացիլ է.  
Բըլբուլի պէս էնդուր կու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է.  
Ձին թօղնում վախտին բացվէլու, — քաղէրումէն բէգարիլ իմ.

1759 ապրիլ.

Էսպէս Արուսթինի ասած ապրիլի իսկզբան քրօնիկօնի 467 ին.

ԼԵ .

Պատկերբերդդ դ՛ալամօվ քաշած, թահրըդ ռանգէ ռանգ իս անոււմ.  
Էրէսիդ խալըն ծածկոււմ է մազիրըդ, խափանդ իս անոււմ.  
Բացվիլ իս կարմիր վարթի պէս, ըըլբուլի հիդ հանգ իս անոււմ.  
Ակռէքըդ օսկոււմըն շարած, պըռօշըդ մահանգ իս անոււմ:

Էրէսըդ նուր լուսնի նըման՝ քանի կէհա, կու բօլըրվի.  
Դաստամաղըդ նամ չի ուզի, առանց հուսիլ կու օլըրվի.  
Էնդու համա քու տէսնօղըն իր ճամփէմէն կու մօլըրվի.  
Եփ մըտնոււմ իս մէջլիսոււմըն, շանգ շուխ շաբանգ իս անոււմ:

Էրէսըդ տէսնէլու դու քան քաղաք քաղիօվ, գիդ գիդի պէս.  
Մէնօղըն քիզմէն կու առնէ անմահական դիդ, դիդի պէս.  
Եփ տիդէմէդ ժաժ իս գալի, շըխշըխկոււմ իս ջիդջիդի պէս.  
Ի՛նչ կ'օնիս սանթուր, քամանչէն. զուքսըդ՝ չօնգուր, չանգ իս անոււմ:

Մուցիդ մէչըն վարթ, մանիշակ, սընբուլ ու սուսան իս շինի.  
Քու տէրըն բաղըն Բ՛նչ կ'օնէ, քու հուտըն ուհան իս շինի.  
Քամին մէչըն անց է կէնոււմ՝ մազիրըդ ելքան իս շինի.  
Աշխարքըն ծօվ, դուս մէչըն նավ ման իս գալի, լանգ իս անոււմ:

Տասնէմէդ մէկըն չին ասի՝ թէգուդ աշխարըս քիզ գօվին.  
․ . . . . մանիշակ բաց արած ծօվին.  
Բաս քու էշխին վճնց դիմանամ, ջուրըն տանէ Սայեսթ Նօվին.  
Թէ տէսնօղըդ մէկ էլ տեսաւ, դիվանա դաբանդ իս անոււմ:

(1759 մաբա).

Էս էլ դիբա ու ենգի դունիայի հանգոււ Արութինի (ասած) մաբաի  
վերջին քրօնիկօնի 447-ին:

Այս տաղի (լե.) երկու վարիանտը բերում են Գ. Ասատուր  
և Գ. Լևոնեան. առաջինը Բ. Ղազմարից, երկրորդը՝ իր սեպհական  
գրադարանի մի ձեռագրից:

Ա (Գ. Ասատուրի) վարիանտ.

Պատկերքըդ զ'ալամօվ քաշած, թահրըդ ոանդէ ոանդ իս անում.  
Երիսըդ խալըն ծածկում է մաղիրդ օձի հանդ իս անում.  
Բաց իս էլի, կարմիր վարթ իս, բուլբուլի հիդ հանդ իս անում.  
Ակրիքըդ օսկումըն շարած, պրոօշըդ մահանդ իս անում:

Եար քու ծուցըն վարթ մանիշակ, սընբուլ ու շուշան իս շինի,  
Քու տէրըն բաղըն լինչ կօնէ, քու հուտըն պէհան իս շինի.  
Քամին մէշըն անց է կէնում, մաղիրըդ ելքան իս շինի,  
Աշխարբս ծօվ, դուն մէշըն նափ, ման իս գալի՝ լանդ իս անում:

Քարիփըդ օչօվ չի ասի—քաղաք քաղքօվ, դիդ դիդի պէս,  
Մէրնօղըն քիզնից կու արնէ անմահական դիդ դիդի պէս.  
Եփ խաղում իս, պըտուտ գալիս, շրխլըլեկում իս ջիդջիդի պէս.  
Ինչ կ'օնիս սանթուր-քամանչա, զուքսըդ չօնգօր չանդ իս անում:

Տասնէմէն մէկըն չին ասի, թէգուդ աշխարբս քիդ գօվին.  
Նունուփար, ծաղիկ ծիրանի, մանիշակ բաց տրած հօվին.  
Բաս քու սիրուն վունց դիմանայ—ջուրը տանի Սայեսթ Նօվին,  
Թէ տէսնօղըդ մէկ էլ տէսնէ, դիվանա ու բանդ իս անում:

Բ. (Գ. Լեւոնեանի) վարիանտ.

Կարմիր վարթ իս էլի, գօզալ, բըլբուլի հիդ հանգ իս անոււմ,  
Էրէսիդ խալը ծածկիլ իս, մաղիրըդ խափանգ իս անոււմ.  
Պատկիրքըդ դ'ալամով քաշած, թահրըդ ռանգէ ռանգ իս անոււմ,  
Ակնէքդ օսկումըն շարած, պըռօշըդ մահանգ իս անոււմ:

Էրէսըդ տէսնէլու կուդան քաղքէ քաղաք գիդ գիդի պէս,  
Մէռնօղնէրըն քիզմէ գուզին անմահական դիդ դիդի պէս.  
Եփ տէղէմէդ շուռ իս գալի, չըխկչըխկում իս ջիդջիդի պէս.  
Ի՞նչ կ'օնիս սանթուր-քամանչա, գուքսըդ չօնգուր չանգ իս անոււմ:

Պատկիրքըդ նուր լուսնիակ է, քանի կէհա, կու բօլըրվի.  
Դաստամաղըդ նամն ի՞նչ կանէ, առանց հուսիլ կու օլըրվի.  
Էնդու համա քու տիսնօղըն իր ճամբէմէն կու մօլըրվի,  
Եփ նըստում իս մէջլիսումըն, չամչըաղը բանգ իս անոււմ:

Քու տէսնօղըն բաղն ի՞նչ կ'օնէ, քու հուտըն ռէհան իս շինի.  
Մուցիդ մէշըն վարթ մանիշակ, սումբուլ ու շուշան իս շինի.  
Քամին մէշըն անց է կէնում, մաղիրըդ ելքան իս շինի,  
Աշխաբքը ծօփ, դուն մէշը նավ, ժուռ իս գալի, լանգ իս անոււմ:

Տասնէմէն մէկըն չին ասի, թէգուզ աշխաբքըս քիդ զօվին.  
Նունուփար, ծաղիկ ծիրանի, մանիշակ բաց արած հօվին.  
Բաս քու էշխին վունց դիմանայ, ջուրըն տանէ Սայիաթ Նօվին,  
Թէ տէսնօղըդ մէկ էլ տէսաւ, դիվանա դափանգ իս անոււմ:

ԼԶ.

Էշխէմէն էնպէս վառվիլ իմ՝ վունց Մէջլում եմը իմ ասում.  
Գօզալի տիսուն կարօտ իմ՝ հիդ քաշվի սմը, իմ ասում.

Ղուրբան իմ ծուցիդ նըռանըն,  
Հօքիս տամ շիմշատ կըռանըն,  
Թաք պառկիմ ետրի դըռանըն,—  
Գըլխօքըս քար իմ ասում:

Հաքիլ իս ատլաս խասէմէն,  
Խըմէցնւ ձէռիդ թասէմէն,  
Համաշա էշխիդ բասէմէն  
Էրվում իմ, ճար իմ ասում:

Բադ կու սիրիմ, ես բաղման չիմ՝  
Բադի տիրուչըն ճանանչիմ.  
Բըլբուլ իմ՝ սիրօվ վարթ կանչիմ,—  
Հիդ քաշվի խմը, իմ ասում:

Մէջլիսնէրու խաղըն դուն իս,  
Վանքէրումըն տաղըն դուն իս,  
Սայեաթ Նօվու բաղըն դուն իս,—  
Կարօտ իմ, բառ իմ ասում:

1757 ապրիլ 5.

Աբուքինի ասած Ապրիլի 5-ին, քրօնիկօնի 443 ին: Էս խաղն էն ձէնօվ՝  
բըլբուլն նստած է վարթին լաւ կանչէր նա վարթի համա:

ԼԷ.

Բէգասըլին վուր խօսէցնիս, լալ անիլըն ինչին է շահ.  
Ռանգըն վուր սէվազէն նընգնի. ալ անիլըն ինչին է շահ.  
Մարթ վուր քու խօսկօվ մէռանի, գալ անիլըն ինչին է շահ.  
Պատանքըն մէ ռանգն է հէրիք. չալ անիլըն ինչին է շահ:

Մարթ պիտի թանգ հախ տայ, առնէ խօսկիւրըն փիւր ուստադէմէն.  
Ռանգըն ռանգէրուն ծածկում է, հաջրէքըն լիքն է սադէմէն.  
Խէզուզ գար զարբար հաքցընիս, վուր չըլի աօրլ շադէմէն.  
Սիւվ Արարի ճակտի վըրայ խալ անիլըն ինչին է շահ:

Լալ մարթն էն է՝ սիրօվ անէ բարի հրիշտակներու կամքըն.  
Իմաստունիւրըն չը տէսան էս աշխարիս հուտն ու համքըն.  
Չուրս գըլխանի ռաշի վըրէն աջալըն գըրիւ է թամքըն.  
Աշխարըս միգ մընալու չէ, մալ անիլըն ինչին է շահ:

Մէր ու մանուկ բաժանվեցան, մանուկն էնդուր ունի լալու.  
Ստտանէն մէ դամբ է գըրի Աթամի գաթըն վուրսալու.  
Շաաըն սատանէն է տանում, վիւրչըն մընում է վայ տալու.—  
Վուր չէ Ունիէլի նըման, կալ անիլըն ինչին է շահ:

Շուռ էրիտ չարիս ու փալազըն դօվաթըն, միգնից խըռօվ ա.  
Ում հաքին հին շալ ին տէսնում, էլ չին ասում՝ թէ էս օ՛վ ա.  
Եարօվտի մէկ մըլում չունիս, էնդուր կու լաս, Սայեաթ Նօվա.—  
Ջարէքըն դիզըդ չին գիդի, փալ անիլըն ինչին է շահ:

(1759).

ԼԸ.

Էշխէմէդ անդանակ էլայ, եկ մօրթէ՝ ջալլաթըն դուն իս.  
Մի սըպանի հասրաթէմէդ, սըրտիս խըջալաթըն դուն իս.  
Քաթալուրի քարխանէմէն դուս էկած խալաթըն դուն իս.  
Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խօրասնու Քալաթըն դուն իս:

Բարկ էրէսըդ՝ կըրակ նընգած օսկու նըման ջիւանում է.  
Էնդու համա քու տէսնօղի խիլթըն գըլլէն հիւանում է.  
Օվ չէ տէսի, ախդ է ուզում, օվ տէսնում է՝ միւանում է.—  
Օսկէ վարադ՝օվ վարադ՝նած սուրաթ, մաքաղաթըն դուն իս:

Շաաըն քու էշխէն կու մէննի, չի դիմանա ինթիզարի.  
Տարէնը մէ գամ բաց կու լիս մաթահ շահրադէլ բազարի.  
Էրնէգ ըլի քու տիրուչըն՝ մըտիկ տալէն չի բէգարի.—  
Ամառն ու ձըմէռն ծաղկած գուլբադ ու բաղաթըն դուն իս:

Մուզդ ունէ էն նադ՝ըջբարըն՝ վուր թահրըդ դալամօվ հանա.  
Ճակտէդ ունքըդ չի կարա դա, քանի դուզէ, վուր շատ ջանայ.  
Էնդու համա ծարաւ մարթըն՝ քու ջըրէմէն չի կըշտանա,—  
Շիրազու շուշումըն ածած՝ նարաթէ շարբաթըն դուն իս:

Էրնէգ մօղըդ նըստօղ եարին՝ վուր քիզի պէս համգամ ունէ.  
Խայէն եարին չէ ոաստ էկի, քիզանից խաթըրջամ ունէ.  
Սայեաթ նօլէն վուր քիզ ունէ, աշխարումըս ինչ դամ ունէ.  
Խաթաբանդօվ չարա ու չարդախ, կօշկ, ամարաթըն դուն իս:

(1758 սեպտեմբեր 6)

Էս էլ դիբա ու քնդի դունիաի հանգում Արուսթինի տասն սեպտեմբերի  
6-ին քրօնիկօնի 446-ին:

ԼԹ.

Աջաբ քանի ժամանակ է, թաք գիդէնսմ տարիդ, էրնէկ.  
Վունց ուտիլ գուգէ, վունց խըմիլ՝ մողըդ նըստող ետրիդ էրնէկ.  
Բացվիլ իս կարմիր վարթի պէս, փաթութ սուսանքարիդ էրնէկ.  
Բըլբուլին լալով ման կ'օծիս գիշիր ցերէկ խարիդ էրնէկ:

Հուարդ աշխարըս բըռնիլ է, բերնումդ ունիս զանջափիլըն.  
Կանց քիզ լաւ հուտ չի ունէնս Հընգու էկած զ'արանփիլըն.  
Գիշիր ցերէկ գուքսիդ մէշն իս, ձէռիդ ունիս զանջափիլըն.  
Դիրչում է ալ պըռօշնէրուդ՝ ունքիդ սամաֆղարիդ էրնէկ:

Շատըն հասրաթէդ կու մէռնի, սըրտումըն կունէնս զարուր.  
Օվ չէ տէսի՝ մէկ ան կօնէ, օվ կու տէսնէ՝ հազար հարուր.  
Քու զարթըն քու նըման կուլի, կըշտիդ ունիս օսկէ բարուր.  
Բըլքա մէկ էլ դէդէն բէրէ՝ նըման բարէբարիդ էրնէկ:

Մէ նաղըդ Արաբ անցկացաւ, մէ նաղըդ Հընղըստան զընաց,  
Մէ նաղըդ Ղըրիմ անցկացաւ, մէ նաղըդ Դաղըստան զընաց,  
Մէ նաղըդ Ուրումէլ կացաւ, մէկըն Փըռանղըստան զընաց.—  
Օվ քու սուրաթըն տէսնում է, ասում է՝ թահարիդ էրնէկ:

Արի նըստի, Սայեսթ Նօվա, խօսիլդ ասա լամղուբասով.  
Սաղին խիլքըդ չը տանուլ տաս էտ խիալօվ, էտ հաժասով.  
Զէռիդ բըռնածըն բըրօլ է. ածա,—խըմիլնք օսկէ թասով.  
Շատ աջայիբ մէյմանդար իս, սուփրի սաղանդարիդ էրնէկ:

(1755)

Խ.

Դաստամազըդ սիւմ ու շարքաբ, նամ շաղ էկած ուհան է  
Ունքիրըդ դ'ալամով քաշած, էրէսըդ զարնիշան է.

Ակըռքնիրըդ լալ ու մարքրիտ, ունդիդ մարթ կու երանէ,  
Թաք ես մէռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գէրէզման է.  
Նազիդ մէռնիմ, նազ մի անի. նազըդ ինձ կու սըպանէ:

.....  
Ուն օր կանց միդի լալ սիրիս՝ Աստուած չարին թամամէ.  
Դիրարէդ կարօտ մընացի էրկու տարին թամամ է:  
Թաք ես մէռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գէրէզման է.  
Նազիդ մէռնիմ, նազ մի անի. նազըդ ինձ կու սըպանէ:

Թառամէցաւ կարմիր վարթըն, բազըն բըլբուլ չէ գալի,  
Սիրտըս եարալու շինէցիր, էրվում իմ մըրմընշալի.  
Էշխէմէդ հիվանդացիլ իմ, պառկած իմ դըժար հալի:  
Թաք ես մէռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գէրէզման է.  
Նազիդ մէռնիմ, նազ մի անի. նազըդ ինձ կու սըպանէ:

Մէջլումի պէս սարն իմ նընդի, Լէյլումէն խաբար չունիմ.  
Էշխէմէդ սիրտըս էրվում է, հօլանալու ճար չունիմ.  
Աստուած վըկայ, աշխարումըս ես քիզ ավէլ եար չունիմ:  
Թաք ես մէռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գէրէզման է.  
Նազիդ մէռնիմ, նազ մի անի, նազըդ ինձ կու սըպանէ:

Սայեաթ Նօվէն ասաց. զովում, աչկըս լալիս է արին.  
Հում կաթնակիր Աթամի զաթ, նալաթ քու էյթիրարին.  
Իզրարէմէն շուտ անցկացար. ձուր է եարսուն տարին:  
Թաք ես մէռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գէրէզման է.  
Նազիդ մէռնիմ, նազ մի անի. նազըդ ինձ կու սըպանէ:

1754 մարտ 1.

Էդէս Արութինի ասած մարտ 1. ին քրօնիկօնի 442 ին, Էսպէս թա-  
լիբ մուխալիֆի հանգում:

ԽԱ.

Եմք, քիզ իսկի դավալ չըլի՝ քու դուշմենին շառ բացարած.  
Հուարդ աշխարհս բըռնիլ է՝ բալասանի ծառ բացարած.  
Թըխտիրըդ օսկէ վարադօվ Ասմավուր իս՝ ճառ բացարած.  
Տէսնօղըն շարքըն չի գիդի լուսնի աստղ պայծառ բացարած:

Ասէն մարթ չի կարա մըտնի էշխիդ ջուրըն ճիդ է գալում.  
Մըտնում է եարսուն կարմունջըն, չասիս՝ թէ մի գիդ է, գալում.  
Ունքիրըդ սալիդ սաղալս է. թէրթէրուկըդ նիտ է, գալում.  
Մըտնօղըն էլ չի գուս էհա՝ դուս մահու պատճառ բացարած:

Բարակ մէկկըդ՝ դարդուդամիշ. էրէսըդ թայգուլի նըման.  
Օրըն եարսուն ռանդ կու փօխիս, վոնց մէկըն չէ տօլի նըման.  
Եփ խաղում իս՝ վառվըռում իս օցի բէրնի հուլի նըման.  
Մութըն տիղըն լուս իս տալի առանց կըրակ վառ բացարած:

Բարօվին բարօվ չիս տա՝ թաքավուրի սալամի պէս.  
Ձէռնիրըդ՝ սիստակ մաքաղաթ, լիզուդ օսկէ դալամի պէս.  
Ջարուզարբաբէ դըրօշա՝ ման իս գալի ալամի պէս.  
Տէսնօղըն էնպէս կիմանայ՝ Շահ իս գալի շառ բացարած:

Եմք, քիզանից հիռանալըս մէռնէլուս վըրայ դըժար ա.  
Լիզուդ քաղցըր, խօսկըդ քաղցըր, ակըռքնիրըդ անգին քար ա.  
Երիք քսան ու տասըն խալըն էրէսիդ բօլօրքըն շար ա.  
Վոնց օր Սայեսթ Նօվու լիզուն եօթանասուն բառ բացարած:

(1758 հոկտեմբեր 9).

Էս էլ դիբա ու Ենգի դունիսի հանգում Արութինի ասած հոկտեմբերի 9 ին քրօնիկօնի 449. ին.

ԽՐ .

Քանի վաւր ջան իմ՝ եմք, քի դուրբան իմ. արա լինչ անիմ՝  
Արտասուէք հանիմ, շատ հօքուց հանիմ, — եմք, դադէդ տանիմ,  
Ասիր. «Յէյրան իմ» թնւդ քի սէյր անիմ, եար, մըտիկ անիմ,  
Մհւտ բաղչէն նազօվ, քիդ գօվիմ սազօվ, եար իլթիմազօվ:

Մադիրըդ դաստա, պըռօշըդ փըստա. հէյրանի վախտ է,  
Ե՛կ նընգնինք շօլըն՝ վաւր հասնինք գօլըն. Յէյրանի վախտ է,  
Բըլբուլըն վարթին, (ու) վարթըն բաղին. սէյրանի վախտ է,  
Մհւտ բաղչէն նազօվ, քիդ գօվիմ սազօվ, եար իլթիմազօվ:

Շուռ գանք հանդամօվ. երկնային նամօվ թուփըն թացվի է,  
Խաղ կանչինք հանդօվ. լալէքն ռանդօվ, վարթըն բացվի է,  
Սուսան սընբուլօվ, դարբի բըլբուլօվ բաղըն լըցվի է,  
Մհւտ բաղչէն նազօվ, քիդ գօվիմ սազօվ, եար իլթիմազօվ:

Պատվական շինած, նըման նըմանած Լէյլու դիդարին.  
Եմք, ուշկըս գընաց՝ մադիրըդ մընաց վրայ մուհաշարին.  
Բաղըն զարթարած, բըլբուլըն քընած վարթի սաշարին.—  
Մհւտ բաղչէն նազօվ, քիդ գօվիմ սազօվ, եար իլթիմազօվ:

Հաքիլ իս ասլաս, թուրլու գար ու խաս՝ սալբու գալ բօլուն.  
Ձէսիդ ունիս թաս, լըցնիս ինձ տաս՝ դուրբան իմ քօլուն.  
Թաք դուն բաղչէն՝ գաս՝ անիս մասնէ մաս քու Մայետթ Նօվուն,  
Մհւտ բաղչէն նազօվ, քիդ գօվիմ սազօվ, եար իլթիմազօվ:

1757 մայիս 2.

Էսպէս Արթինի տաճ թասիրն շինի, կարմիր գինի խաղի հանգում.  
մայիսի 2-ին քրօնիկօնի 445-ին:

ԽԳ.

Մօլորդ նըստողըն կու հարփի՝ դուն բանդ ու բօզա իս, ազիդ.  
Դիվանա-Փահլուլ կու շինիս, տէսնօղին՝ ջազա իս, ազիդ.  
Ինչ տիդ կուլիս, շնուք կու տաս՝ մէջլիսի մազա իս, ազիդ.  
Մադէն՝ մէ սահաթ լալ կուլի, դուն համան թազա իս, ազիդ:

Մէ խօսկըդ կանց շաքար քաղցըր, մէ խօսկըդ վառ՝ քուրայ-քուրայ.  
Մէ նըմանըդ աշի նըման, մէ նըմանըդ ջուրա-ջուրա.  
Մարքարիտօլ լիքըն կալ իս, սադափնիրըդ թուրա-թուրա.  
Էրծըթէ կօխպէքօլ կօխպած, դուն, օսկէ ազա իս, ազիդ:

Էրէսըդ առվուտվան արիվ՝ քանի կէհայ կու դարդանայ.  
Թաքավուրի քարխանի դար՝ ծառն ծառէն չի թարգանա.  
Խէ սուչ ունէնամ՝ սըպանէ, թէ չէ՝ նահախ մի բարկանա.  
Մէ ձէսըդ ջուր, մէ ձէսդ արուն՝ ջալլաթի ջազա իս, ազիդ:

Տէսնօղըն նախըդ կու տընդդէ էն . . . բուլի պէս.  
Ջընի տակէն նուր դուս էկած, արիվ դիբած սընբուլի պէս.  
Թուդ վըրէդ լալօլ պըտուա դամ՝ վարթի կարօտ բըլբուլի պէս.  
Դուն ինձնից շուտօլ մի թըռչի՝ շալարդան, բազա իս, ազիդ:

Էշխէմէդ հիվանդացիլ իմ. վունց զարար, վունց շահ ին առում.  
Հէքիմիրըս ափսոսուամ ին՝ ծընդան տալօլ վան ին ասում.  
Կանչօղըս դարդակ է դընում, ան Սայեսթ Նօվա, ին ասում.  
Թաք դուն տիս գաս, վիր կու կէնամ, — թէ սադիս՝ սազա իս, ազիդ:

(1758).

ԽԴ .

Անգաճ արւն, բարիթալուր,  
Գընն հիղըն խաղ մի անի,  
Եարի սիրողըն դադ մի անի,  
Էտ կըրակըն չադ մի անի.

Ձադ շուռ արի

Եարսուն տարի,

Եարին բէգամադ մի անի

Բէգամադ չըլի միղանից,

Ձը հիռանայ անմիդ բանից.

Եարըն նազով հօքիս հանից.

Հանած ծառ է,

Էշխով վառ է,

Ձի վախէնա Սուլթան Խանից,

Խանի պէս դիվան իս անում,

Շահդադի պէս սան իս անում,

Էտ ինչթալուր բան իս անում.

Բանըդ բանդ է,

Պոռըդդ դ'անդ է,

Քաղցըր լիզվով ջան իս հանում,

Ջան չուռիմ եարի ձէռնէմէն,

Հիվանդ իմ էշխիդ կըռնէմէն,

Դիդ անիս ծուցիդ նըռնէմէն.

Նըռիդ օսկով,

Քաղցըր խօսկով,

Կրակ իս վէր ածում բէրնէմէն,

Բէրնիդ մէշըն լալ է, գօզալ.

Հաքիդ դարըն ալ է, գօզալ,

Էտ ինչպէս խիալ է, գօզալ,

Էտ խիալով նազ իս անում. Եար,  
աման,

Նազ իս անում իխտիարիս,

Հիդ աշխարիս բարէբար իս,

Հընդու էկած դ'ալամբար իս.

Ղ'ալամ քաշած,

Ջանս է մաշած,

Ջանս հանէցիր՝ ջադուբար իս

Ջադուբար իս փէլ ու փանդով,

Շիրազու շուշա իս դ'անդով,

Այնիրանդ իս խաթաբանդով.

Ջամ հալիլա,

Լալ ու թիլա,

Ջանս հանէցիր էտ փըրսանդով

Էտ փըրսանդով համ իս անում,

Դաստամազըդ նամ իս անում,

Աբա խաթըրդ ջամ իս անում.

Ջամ իս Չինի,

Դօշդ է սինի,

Շամամիրըդ դամ իս անում,

Դամու դավրան իս համաշա,  
Դաստա դաստա մազըդ քաշ ա,  
Հաքածըդ դար ու դ'ումաշ ա.

Ղ'ումաշ դարով

Կու լայ տարով

Օյ քիդի գու քայ թամաշա:

Թամաշա իս՝ վարթի բանգ իս,  
Մօլ տէսած օսկու մահանգ իս.  
Սանթուր ու քամանշա չանգ իս՝  
Բարակ ձէնօվ սադ իս անում.

Եար, աման:

Սադ իս անում, դուր իս գալի.  
Բադչի մէշըն չուր իս գալի.  
Փունջ մանիշակ նուր իս գալի,  
Նուր գօլիմ քի,  
Անպատմէլի,  
Վարթի մէշըն շուռ իս գալի:

Շուռ իս գալի բըլբուլի պէս,  
Հուարդ գու քայ օընբուլի պէս,  
Սուփրի մէշըն թայգուլի պէս.

Դաստա կապած,

Ռէհնին կըպած,

Բաց իս էլի դուն գուլի պէս:

Գուլ իս կօօր սերեակալ,  
Ձիս թառամի, արեակալ,  
Թաքավուր իս բաքեակալ.

Բարօվ տամ քիդ, —

Մըտիկ տնւ միդ

Ձէ թէ ամսօվ, — օրեակալ:

Օրն ի օրըն շատանում իս,  
Էշիի մէշըն մօղանում իս,  
Սըրտի դարդըս հիդ անում իս.

Հիդ արան, տիս

Թէ թարիբ իս, —

Խիթըն գըլիէս հա տանում իս:

Տարար խիթըս, հէյրան արիբ.  
Բարակ միշկըդ սէյրան արիբ,  
Էտ կըրակօվ բիրեան արիբ.  
Հալբաթ մահիս հադ իս անում.

Եար, աման:

Հադ չունիմ խային եարէմէն,  
Ձիս շոգլուս անգին քարէմէն,  
Թաք չանցկէնաս իղրարէմէն.

Իղրար անիս,

Հօքիս հանիս,

Պըրծընիմ ահ ու զարէմէն:

Ահ ու զար իմ քաշում, աման.  
Քիզնից ուրիշ չունիմ գուման.  
Ծուցիդ մէջըն չայիր չիման.  
Զիման ասիմ.

Մուրախաս իմ,  
Սըրտումս ունիմ իղրար իման:

Իղրար իմանէն չանցկէնամ,  
Առանց քիզ մին օր վունց կէնամ.  
Բէրնումըս զընիմ սանձ՝ կէնամ.

Սանձահարիմ,  
Սիրտըս վառիմ,  
Անհընանալու դանձ կէնամ:

Գանձ իս սիրով ու սիրէկան,  
Ղիմէթ ունիս անդինական,  
Լալ ու ջափահիր պատվական.

Պատիվ անիմ  
Գանի ջան իմ՝  
Զուն աշխարս է անցողական:

Անց մի կէնա՝ թէ հալալ իս,  
Մի մօր ծընած, մի մօր դալ իս.  
Ղաբուլ անիմ թէգուզ հալիս՝  
Զունքի իլթիմազ իս անում.

Սար, աման:

Իլթիմազըս էս է, ջանըմ.  
Օրըս հիզըդ կէս է, ջանըմ.  
Էշխըն էստու պէս է, ջանըմ.  
Ջանըմ, ջան իս,  
Աննըման իս.

Աշխարս ուս ու տիս է, ջանըմ:

Ուս ու տիս արս, իմացի.  
Մըտիկ արս աղ ու հացի.  
Թաք իղրարին զըրուստ կացի.  
Կանց իղրարին  
Ահլի շարին՝  
Եփ մէռանիմ՝ վըրէս լացի:

Լաց քիս՝ աշկըդ դայ անիս,  
Դաստառ ուհան փայ անիս,  
Արտասունքըդ՝ չայ անիս.

Զաու ջուր իս,  
Խիստ տըխուր իս.  
Աղալաթըդ Շահի անիս:

Շահի զօւրիաք քաբաղըն  
Զի հարցընի դուգուն դաղըն.  
Վայ թէ էլ չը խօսիս վաղըն.  
Վաղըն կուլամ,  
Նըստիմ ու լամ,  
Ասիմ բարիթափուր խաղըն:

Յադ իս էլի, Սայեաթ Նովա.

Դադ իս էլի, Սայեաթ Նովա.

Բադ իս էլի, Սայեաթ Նովա.

Դլուխըդ փխնդադ իս անուճ. Եար, աման.

Էսդէս լաւ բարիքովուք. եարանա, Արութիկ ասած.

ԽԵՆ.

Ես կանչում իմ լալանին. բազէշխանէն լալ անին,  
Վայ թէ հասրաթէդ մէռնիմ, բըլբուլ լիզուս լալ անին,  
Դօստիրըս հիռու կանգնին, հադիրըն զան՝ լալ անին:

Դիզ սազ գու քայ ալ դ՛ուժաշըն, նազանի—  
Ե՛կ ճակատիդ կապէ զարու մուղճայիշ.  
Ձէսիդ բըռնէ օսկէջըրած մըկըտաըն,  
Խուճուճ խուճուճ կալէրուդ տո՛ւր արայիշ:

Ես կանչում իմ հարանին. թէջնիս վարսադ՝ հար անին,  
Օվ ասաւ՝ թէ նահախ տիդ, հարիդ մէշըն հար՝ անին,  
Ավէտարանըն կու տայ խօնար մարթուն երանին:

Պատվական տէսնէլու նօվար ու նազար.  
Բըլբուլին զըժվէցնօդ թուսի՝ վարթի սաջար.  
Աչկիրըդ ունքէրուդ էլաւ մուհաջար.  
Թէրթէրուկիդ մազըն՝ զար, օսկու զարնիշ:

Ես կանչում իմ զայանին. նու (ն) այիբ (ա) զայբ (դ) անին,  
Դուն իս ասի՝ նահախ տիդ, հարի սիրտըն զայ անին,  
Շահն էր քաշի, չէր դիմնա էս իմ քաշած զայանին:

Հուտըդ աշխար բըռնից, Փըռանդի մաջուս.  
Դաստամազըդ դարաւ՝ սիմ ու արբէշուս.  
Պըռնիրըդ շիմշաս է, մասնիրըդ է մուս.  
Դուցըդ բազա ունիս, մէկըդ է դ՛ամիշ:

Ես կանչում իմ մէրանին, ըսկըզընական մեր անին.  
Թուղ դօստիրըն շատանան, թըշնամիքըն մէռանին,  
Ասի՛ թէ ես քու ակաղէր, քու մէրն ինձի մէր անին:

Բէմուրվաթ եար, խիլքըս գըլխէս մի տանի.

Դարդիրըս շատացաւ քանի մէ քանի.

Գիդիմ՝ վուր, եար, ինձ լայիղ չիս անի՝

Դուն մէ թաքավուր իս, ես մէ խիղճ դավրիշ:

Ես կանչում իմ մասանին. ու (ս) այիբ (ա) մաս անին,  
Սայեաթ Նօվէն քու եարն է՝ թէ գուղ մասնէ մաս անին:

Դաստամազըդ նըման սընքուլ սուսանի.

Վախում իմ՝ թէ սէրըդ սիրտըդ կէս անի.

Կու մէռնիմ, էլ ինձի պէս չիս տէսանի.

Դու Սայեաթ Նօվէն իմ, մի անի դիմիշ:

1753.

Քրօնիկօնի 441-ին Արութինի (աստ) բուբայի բայեաթի Թասլիբ:

ԽԶ.

|                             |                              |
|-----------------------------|------------------------------|
| Խըմէցնէր ձէռիդ թասէմէն      | Օվ քիզի աշեան մըտիկ տայ      |
| Ջուր իմ ասում . . . .       | Արէլին Կայեան մըտիկ տայ      |
| . . . ացի սրկու մասէմէն     | Ինչ աչկ քիզ խայեան մըտիկ տայ |
| Աչքի լուս քուր իմ ասի       | Ջում Եար կուր իմ ասի         |
| . . . . . չիմ ասի           | Նուր չիմ ասի, նու . . .      |
| Թուր չիմ (ասի) տուր չիմ ասի | . . . . .                    |

|                             |                         |
|-----------------------------|-------------------------|
| Գողալ, Աստուած քիզի լավ տայ | Օվ օր ինձ շինից դիվանա  |
| Ջուղօղի աչկէրուն ցավ տայ    | Սուրբ Կարապետէն խիվանայ |
| Անդալի խօսին մի ավտա        | Վազի էրէսըն սիվանայ.    |
| Աչքի լուս ուր իմ ասի        | Աչքի լուս կուր իմ ասի   |
| Ջուր չիմ ասի, զուր չիմ ասի  | Ջուր չիմ ասի . . . . .  |
| Ջու . . . . .               | . . . . .               |

Էշխէմէդ խըմած մաստ էկած  
 Գըլուխըս մահին վախտ էկած  
 Սայեաթ Նօվէն իմ տիսդ էկած  
 Աչքի լուս ուր իմ ասի  
 Սուր չիմ ասի, զուր չիմ ասի  
 Տնւր չիմ ասի . . . . .\*)

1758 մայիս 10.

Էսպէս Թասիբ Արութինի ասած մայիսի 10-ին քրօնիկօնի 446 ին:

\*) Թերթն՝ որոյ վրայ գրած էր էս խաղն՝ պատուած էր, և շատ տեղ էլ խկի չէին ջողովում բառերն:

8 տաղ Բ. դավթարից լոյս տեսած Գ. Ասատուրի հրատարակութեամբ 1903 թին (Ազգագրական Հանդէս գիրք X)

ԽԷ.

Աչկ ու ունքըթ վէր իս թօղի, հէքիմըթ անճաբի բաբաթ.  
Աշմփ, քիզ ինչ գէթ իմ արի—խօսում իս դու չարի բաբաթ.  
Օվօբ քիզ խայէն մըտիկ տա, սիրտըն դարնա քարի բաբաթ.  
Թէգուզ պահէ, թէգուզ սպանէ դըրանըթ նօքարի բաբաթ:

Դըրանըթ նօքար չիս պահի, թաքառւր իս՝ դուլ սըպանօղ.  
Խօսկըս արակօվ իմացի, Զօհրա աստղ, փուղուլ սըպանօղ.  
Բացվիլ իս բաղի միշումըն, կարմիր վարթ, բուլբուլ սըպանօղ,  
Կարիլ տու քանի կտրում է—քու թուրըն սարգարի բաբաթ:

Եար ինձ մէ ճամփա կանգնէցրու—կէնամ խաթըրշամի նըման.  
Գիշիր ու ցէրէկ լալիս իմ, աչկիրըս է նամի նըման:  
Թօղ դըրանըթ նընդած ըլիմ օտար բարէկամի նըման:  
Անգալըն Աստուած սըպանէ, Փարհադ Շիրին դարի բաբաթ:

Գարնան շնչի ծաղկի նըման կարմիր վարթըն բաց է ըլում.  
Ինչ օքուտ է քու բաղմընչուն, վուր բուլբուլըն լաց է ըլում.  
Պըռօշէմէթ միդը է կաթում, թօղնիս, եախէթ թաց է ըլում,  
Էնդուր համա քախցը իս խօսում—լիզուլ է շաքարի բաբաթ:

Մարթ իր խօսկօվ կու ճանաչվի, գուզէ Շահի վէզիր շինին.  
Բէդասըն ասըլ չի դարնա, թէգուզ վէքիլ, նազիր շինին.  
Թէ կու մընաս, ամէնան տիղ քու հունարըն հազիր շինին.  
Սայեաթ Նօվա, խօսկըթ տաս—չըլի քամու դարի բաբաթ:

ԽԸ.

Հընդկաց քաղաքիցըն հանած, ջալահիր քար արմանելու,  
Ինչին դիփչիս նաղըշ կօնիս, վօսկէ՝ փարգալ արմանելու.  
Ամէն մարթ չի կարա ճարի շահօվ շրքար արմանելու.  
Մարթ հիղըթ չի կարօղ խօսի, Բօստօմի Զալ արմանելու:

Շիմշատի ծար բըհամ էկար, շէնքըթ տաշիլըն ինչ կօնէ.  
Էրանի է քու՝ տիրուչին — եադին եաշիլըն ինչ կօնէ.  
Էրէսըթ խասա մուրասա — դալամ քաշիլըն ինչ կօնէ.  
Կարմիր ու կանանչ ու ճէրմակ, սարխսար ալ արմանելու:

Դուն հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաք վարած, դըժար ճարած.  
Օվօր էրէսըթ կու տէսնէ, խիլքըն կու դարնա շրվարած.  
Անդին եադուլթ, անդին ալմաս, բօլօրքըթ ջալահիր շարած,  
Սկանդարի Զուլղարէն թօղած, ջընաղ հէքալ արմանելու:

Համաշա սէյրան իս անուս, վարթ ու մանիշակ քաղուս իս.  
Շուշա բըրօլէ գուլարդան բէրնէթ վարթաշուր մաղուս իս.  
Թաքաուրի թաքի ջիդա, վօսկէ թէլըդ շաղմաղուս իս.  
Վուրսնուրթի ձէրիցըն փախած ջէյրան, մարալ արմանելու:

Եար, քիզանից հիրանալըս մէրնելուս վըրա դըժար ա.  
Էշխէմէթ ջունուն իմ դարի — ինչպէս անիմ ինձի շարա.  
Ավէլի չէ Սայեսթ Նօէն — քիզի ծարալ ու նօքար ա.  
Նըրանից ձիրքըթ քաշիլըն էա էլ շատ ա արմանելու:

ԽԹ.

Է՛յ, բէմուրաց մի սըպանի, չունքի արիւր սէր, նազանի.  
Թէ քիզ ավէլ հազ հար սիրիմ, ումբրէս չանիմ խէր, նազանի:

Աշխարումըս դուն իմ ջան իս,  
Դուն իմ Շահ իս, Սուլթան, Խան իս.  
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս.  
Հազարէն մէ ջէր, նազանի:

Ղարիբ դավըիշ իմ, հաջ չունիմ.  
Գլխիս էրծաթէ թաջ չունիմ.  
Ես քիզ ավէլ իլաջ չունիմ.  
Դուն դարի ինձ տէր, նազանի:

Կըրակ տըվիր կրակն ավէլի.  
Ջախմախ ունիս դուն ցավէլի.  
Աշխարում քիզնից ավէլի  
Օ՛վ ասավ թէ կէր, նազանի:

Սայեսթ Նօվէն իմ, ճար չունիմ,  
Ես վարթըն իմ, մին խար չունիմ.  
Թէ դուն ասիր հազ հար չունիմ,  
Իղրարըթ զըթար, նազանի:

Ծ.

Խաբար զընաց բուլբուլի մօդ. «վարթըն քու գալուն մընում է,  
ճուխկընիրըն բացրացըրած վէրէն շուր գալուն մընում է.  
Արաւուտուց զանգակի պէս քախցըր ձէն տալուն մընում է»:  
Բուլբուլն ասաց. «Զիմ կարօդ դա, պուճպուճէս լալուն մընում է»:

Վարթըն ասաց. «Իմ բուլբուլին ալ պուճպուճէն վճնց կու խափէ.  
Թէ խիք ունիս, դ'արիւր բուլբուլ, էլ քու բաղի ճամփէն չափէ»:  
Քանի գուզէ քընած տիղըն իր թըշնամին կուրըն կապէ,  
էլի վիրչում մէղան (?) \* Բօստօմի Զալին մընում է»:

Վարթըն ասաց. «Խային բուլբուլ, նալաթ էտ քու էթաիբարին,  
Անցկացաւ ապրիլ, մայիսըն, մէկ օր չը հարցըրիր եարին»:  
Զէ թուդ թէ մուրագին հասնին, տիտ, ինչ աբաւ քաւթար դ'արին,  
Փահրագին քլունդըն սըպանից, Շիրին խանջալին մընում է»:

Աշխարումըն վարթն է էլի բուլբուլնէրի սիրէկանըն:  
Բուլբուլի լիզվօվ իմ ասում, Տէր, պահէ վարթի նըմանըն:  
Աշխարումըն քանի սաղ իմ, Սայեսաթ Նովի գէրէգմանըն  
Շահաբասի լալի նըման շահի վէր գալուն մընում է:

---

\*) Անընթեռնելի բռնեբը ես յիշատակարանիս մէջ սովորաբար արտա-  
նշեկարում էի:

Ծ. (վարիանս)

Գ. Ասատուր յայտնագործել է Գ. Ախվերդեանի թղթերի մէջ, որոնք գտնուում են Հայաստանի թանգարանում եւ գրուած է վրացերէն տառերով. արտատպել է Վէմը (Ջ. յուլ. օգ. 1934).

Քաբար գընաց բլրուլի մօդ. «Վարթըն քու գալուն մընում է, ձըիկընիրըն բացատրիլ է, վըրէթ շուր գալուն մընում է, Առաւուտան գանգակի պէս քաղցրը ձէն տալուն մընում է».  
Բլրուլն ասաւ. «Զիմ կարայ գայ, պուճպուճէն լալուն մընում է».  
Վարթըն ասաւ. իմ բլրուլին ալ պուճպուճէն մնց կու խափէ.  
Քանի վաղ է, դարիւր բլրուլ, դուն քու բաղի ճամփէն չափէ,  
Հաղար գուգէ դայրաթ անէ, Սիպտա Դիվը կուրըն կապէ.  
Էլի վերջումը մէյգանըն Ռոստոմի Զալուն մընում է».

Վարթըն ասավ. «Քային բլրուլ, նալաթ գայ քու էնթիրարին.  
Անցկացաւ ապրիլ, մայիսըն, մէկ օր չը հարցրիւր եարին».  
Զէթուղ մուրազին հասիլ էր, տիս՝ ինչ արաւ քաւթար դարին,  
Փահրադը իրան սըպանից, Շիրին խանջալուն մընում է,  
Հաղըէմէն մէկը չին ասի, թէգուղ աշխարքը դիփ գովին.  
Դարունքին ծաղկներով հուտ կուտաս ամարուայ հովին.  
Հէնչաք ըլի դուն սաղ ըլիս, ջուրըն տանէ Սայեաթ Նովին,  
Շահաբասի լալի նըման Շահըն վրէթ գալուն մընում է.

ԾԱ.

Փարհադըն մէրած, Շիրին ասաց՝ դարէն էրված իմ.  
Բաշուիլ է վարթըն. մօդ չէ թօղնում, չափարէն էրված իմ.  
Բուլբուլըն ասաց՝ վարթիս խաթրի խարէն էրված իմ,  
Տասնումէկ ամիս մուշամ կացի, տարէն էրված իմ.  
Աստված կու սիրիս, դար մի հաքնի, դարէն էրված իմ,  
Մէջլումի նըման ման իմ գալի, եարէն էրված իմ:

Զըկա Փաչահի խաղինումըն մալ քիզի լայիդ.  
Հալա չին գօրծի թիրմանումըն՝ շալ քիզի լայիդ.  
Օսկէ մասնումըթ դուն դըրիլ իս լալ քիզի լայիդ,  
Հաթիլիս ասլաս, բանդն է գուլգադ ալ քիզի լայիդ,  
Աստված կու սիրիս, դար մի հաքնի, դարէն էրված իմ,  
Մէջլումի նըման ման իմ գալի, եարէն էրված իմ:

Խօսկիրըթ քախցըր, լիզութ շաքար շարթի միչումըն,  
Գարունքվան ծաղիկ, բացիս էլի մարտի միչումըն.  
Մաղիրըթ բէհան, փաթըթած է վարթի միչումըն.  
Կանաչ տէրէվէն նամ չի կաթի վարթի միչումըն.  
Աստված կու սիրիս՝ դար մի հաքնի, դարէն էրված իմ,  
Մէջլումի նըման ման իմ գալի, եարէն էրված իմ:

Սայեսթ Նօվէն իմ, էնդուր կուլամ, դարդիրըս արբար.  
Մաղիրըթ բէհան, կլապիտօն է, հուսիրըթ շարբար.  
Բարակ սուրաթիթ խիստ սաղ գուլքա դիբա ու դարբար...<sup>\*)</sup>  
Աստված կու սիրիս, դար մի հաքնի, դարէն էրված իմ,  
Մէջլումի նըման ման իմ գալի, եարէն էրված իմ:

\*) Այս վերջին տան մէջ, ինչպէս երևում է, պակասում է մի ամբողջ տող:  
Ման. Գ. Տ. Ա.

ԵՐ.

Այրըն Աստված սիրիս, բէն բարի կացի  
Գիմ դադաթիթ արա դա ու այբ թօ.  
Էլ էրանի չբկա դա զալում մարթուն.  
Ընթ էրէսիթ գի թօ ու այբ թօ:

Փէ ժամանակ հասալ աչկէրիս լալու  
Ին ինձի գըցէցիր դարդըս վուխալալու.  
Լին լալօլ իմ էս աշխարհ մընալու,  
Էնդուր նախ քաշէցի խէ ու այբ թօ:

Ծա ծօլումըն մընաց, դուս չէկալ նաւըթ,  
Կէն կամօլ ալէլցրիթ քու սըրտի ցաւըթ.  
Հօ համան կանչում իս ձա ձայնօլ դաւըթ,  
Ղաթ դարուլ կաց ճարիս...\*

Բէ բուն ցօ ցամքիլ է, հին հունար ունէ,  
Փիւր փակէցին դուրըն, քէ շըբար ունէ,  
Եվ օ ֆէն կարթալու Աստված ճար ունէ  
Հալալ Սայեսաթ նօվէն կէն ու այբ թօ:

---

\* ) Ոտանաւորի կազմը ցոյց է տալիս, որ այստեղ պակասում է մի ամբողջ տուն, եթէ ոչ աւելի: Ծան. Գ. Տ. Ա.-ի:

ԾԳ.

Այբիմըն կարթացիլ իմ դասէդաս  
Հասա բաէ, հասա ջէ, հասա սէ,  
Անգըրծակի մէ ձէն էկավ դասէդաս  
Անգաճ կալա, չիմացա ինչ հասաս է:

Հագար տարին մարթու աչկին թաք աուր  
Քանի տընագ, քանի հարուստ, թաքաուր  
Զը հարց ախկատ, հարուստ թաքաուր,  
Մահըն վուր կայ արանց կըշիւք հասաս է:

Դարնացավ, ավելցավ, կինքըս ծովացավ  
Ախ քաշէլէն սիրտըս նընգավ, ծովացավ.  
Կաթէլօվ, կաթէլօվ դարդըս ծովացավ  
Մէ մարթ չըկա, վուր ինձ խրատ հասասէ:

Հագար տարին մարթու աչկին քարա սուն,  
Օ՞վ է միացի աշխարումըս քար սսուն  
Սայեաթ Նօվա, տարիթ էլավ քարասուն  
Դուն մահի հիդ, մահ քիզի հիդ հասաս է:

ԾԴ.

Մըտայ էշիւի քուրէն խալիս դառնալու  
Սիրտըս էլաւ քէ ու այբ, երկու բեն. (քաբար)  
Կամալ... մտայ դարդըն բառնալու  
Ում բըռնիմ աէ ու այբ երկու բեն. (սաբար)

Դադա պիտի խօսկըն դադամի շինէ  
Շարբարի միչումըն սամթիլ շինէ

. . . . .  
Մարթ վուր ըլի նու այբ երկու բեն. (նաբար)

Խնչպէս վուր կըրակին շի դիմանայ մում,  
Էնպէս սադաթ ըլի, օվօր խօսի հում.  
Սայեաթ նօվէն ասաց էնդուր չի պակսում  
Երկու աչկէս երկու այբ երկու բեն. (աբար) Խ. բառարան

Ջանազան հրատարակութիւններում լոյս տեսած տաղեր.

Եւ.

Թաքաւոր իս, դիմանա արա, Թաք քու արիւնն կու սիրիս  
Ուր օր գընաս, ինձ էլ հիտդ տար քու արիւնն կու սիրիս  
Ակռավը բուլբուլ չի դառնայ, քանի գուզէ վուր ախ անէ.  
Ամէն ունգ ծաղկի մէջը կարմիր վարթը սիրեկան է,  
Գուղ մարթն մանգաղով դու քայ, ձիք կու տայ տակուն կու հանէ,

Մի Թօղնի ասկիտ ? քաղէլու վարթ, քու արիւնն կու սիրիս,  
Բուլբուլը սարէմէն գուքայ, իր լիզվօնն բաղ կանչէլօվ.  
Սայեաթ Նօվէն վուր բէզրիլ է, շատին էրէց խաղ կանչէլօվ  
Օվ ջալահիր անգին ալմաս եար, քու արիւնն կու սիրիս:

Ս.—Նովա. Մուխամմադ  
Գ. Տէր Աղէքսանդրեան  
ԷԹԻՓՈՒԿԱՆԵՐԻ ՄԱՍԼՈՐ ԿԵԱՆՔԸ:

ԾԶ.

Գէլն ու չօրանը մէկս մէկու ոստտ էկան.

Գէլն ասալ. ճւր իս գնում, բարով, իմ չօրան արագէր.

Չօրանն ասալ. գլխէմէս ուղ էլ,

Վունց քու խէրը գուզիմ, վունց քու շառը

Գէլն ասալ, հէստի թաքուն գու քամ, դուն էլ չիմանաս.

Ակոէքըս կու գըցիմ զօչի դմակին.

Կէսը կու կօտօրիմ, կէսը կու խէխտիմ.

Առուտեհան վիր կու կէնաս, խէրն ու շառը շանց կու տամ:

Չօրանն ասալ, հէնց գիղիս, թէ դուրթ քուն ունիմ.

Մէ աճկս ու անգաճս քու կունէն ունիմ.

Թէ ճանգս կու նընգնիս, իս իղ'բալ ունիմ

Առուտեհան շինքիտ էրկթէ կրկալը շանց կու տամ:

Գէլն ասալ. հէստի թաքուն գու քամ, դու էլ չիմանաս.

Ակոէքս կու գցիմ զօչի դմակին.

Կու քցիմ քամագիս.

Առուտեհան մէկ մէկ, մէկ մէկ սարի ծէրին շանց կու տամ.

Ս. Նովէն ասալ. իս կարմիր կօլ իմ,

Կօլկիթըս կօտրէցի, հարսի հիդ խոօլ իմ.

Գիլի հիդ բան չունիմ, չօրնին կու գօվիմ,

Մէգամ էլա գառնի համը շանց կու տամ:

Ս. Նովա Թէյնիս

Գ. Տէր Աղէքսանդրեան

«Թիֆլիսեցւոյ մտաւոր կեանքը».

Սկանդար Նոսթան տպագրել է «Կովկասի լրագրեր» թերթում 1912 թ.

№ 36, որ վարկանտ է ԾԶ-ի

Գէլըն ու Ջօբանըն մէկ մէկու հիդ ոստտ էկան  
Գէլըն ասալ բարով տէհա, Ջօբան ախալէր  
Ջօբանըն ասալ ես քու բարօրն ինչ կօնիմ  
Գըլխէմէս ոսդ ըլի՛չիմ քընի անդիր (?)

Գէլըն ասալ էնքան մուլադի կու տամ գէտինը մթնի  
Ուսուլով ման կու գամ բինէդ կու քթնիմ.  
Շնէրու հաշոցէմէն իսկի չիմ խրտնի  
Էգուց առուտէհան խէրըն ու շառը շանց կու տամ:

Ջօբանըն ասալ դուն հէնց գիդիս քուն ունիմ  
Ամէն ոչխարի գլխին մէկ մէկ շուն ունիմ  
Թէ վար գու քաս ինձի, մինձ իղբալ ունիմ  
Երկըթէ կրկալը ճտիտ շանց կուտամ:

ԾԷ.

Մախուխն ու ոչխարի միսը իրար կովեցան,  
Ամէն մէկը զօվում էին թէ մազէն իս իմ.  
Քու մէջն ինչ դվաթ կայ, ինչ իս դուս տալիս,  
Մարթու դվաթ տուողն ու բազէն իս իմ:

Մախուխն ասաւ՝ ռՕխտը շաբաթ պաս ունիմ.  
Աթամովուրթու սրտի մուրազն իս իմ:  
Գլխիս դուլուղչի օխտը նսրահարս ունիմ,  
Համիմ, սխտոր, իսպանախ, պիտնա, պրաս ունիմ.  
Աթամովուրթու սրտի մուրազն իս իմ:

Օչխրի միսն ասաւ. թմ մէջն է համը  
Կու զնին փլաւումն, կու քաշին դամը,  
Ինձ մաթլարէն կօծին, քիզ կօծին ջամը,  
Ջգրու կը պատուեցնիմ, քու բուզէն իս իմ:

Մախուխն ասաւ. Քանի՜ փքվիս, պատուվիս,  
Պիտի պաս պահիս հազար փշրտվիս.  
Միխկիբիդ դարձ դաս, պիտի հաղորդվիս,  
Դժօխկի ու դրախտի միշտ բազէն իս իմ:

Օչխրի միսն ասաւ. Քակսիլ է օրըն  
Դիսի ինձ ին գովում, քաշալըն ու քոռըն.  
Լավաշում փաթաթած թավազէն իս իմ:

Սայեաթ Նօվան ասաւ. խօս գիդիք օձ իմ,  
Գուզիք երկուսիդ մէտի մէ բաշ սղոցիմ.  
Կու վիկայնիմ ես ձիզ մութ տիղը կօծիմ  
Կողպէքն վրէն կու զնիմ, ձիր բազէն իս իմ:

ԾԸ.

Հիմքըդ վերստին նուրեցին, չաղ արին, Մօղնու սուրփ Գէվուրք,  
Բար ու կիր . . . չաղ արին, Մօղնու սուրփ Գէվուրք.  
Աչ ու ձախ կախեցին բրուէ ջահ դարին, Մօղնու սուրփ Գէվուրք,  
Երգնուց լուսըն վրէտ կամար թաղ արին, Մօղնու սուրփ Գէվուրք:

Պատիրըտ կարմիր ազուրով, սընիրըտ տաշ մարմար քարով.  
Հընդու միչէմէն դուս էկած վարաքուրըտ դալամքարով,  
Թագիրըտ անգին ակնիրով, ըզզիստըտ զարբարով զարով  
Բիմըտ ու խաչկալըտ զբախտի բաղ արին Մօղնու սուրփ Գէվուրք:

Վերնատունըտ սանդալէ տախտակ, ուանգն է տորոնի նման  
Հոքով ու մարմնով կու սրփըվի, ով քիզ գու քայ մոնի նման  
Տապանակ ուխտի կըտակով, խորանըդ Ահաբոնի նման  
Միաբանքըդ քախքը ձայինով տաղ արին Մօղնու սուրփ Գէվուրք:  
Ամեն բորոտըն կու սրփվի քիզ գու քա ով փափակով...

Գ. Ասատուր Ա. Ղաթարից  
Երանքեր էջմիածնի, 1921—22.

ԾԹ.

Ամէն մի մտիկ տալով տարար խիլքս, քեամալըս  
է՛յ նազանի, ռահմ արա, դուն մի դառնայ աջալըս.  
Հէնց ձէռովըս կապեցիր, էնպէս բաց էր իղբալըս.  
Էշխէմէդ հիվանդացայ, չիս հարցընում իմ հալըս,  
Քիզի քիզ մտիկ արա, փոշմանելու վախտըն է:

Իմ թալնիլը քու բանն էր, չստացիր ինչ իմ անում  
Սրտով սիրածս դուն իս, էլ ինչի՞ ես արմանում,  
Ուրիշների խօսկէլով կապած եարէս հիդ անում.  
Աչկըս ճանապարհիդ է, ինչի՞ ես շատ ուշանում.  
Մեր խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է:

Քու պատվական գլուխըդ դուն ավարա մի անի,  
Էս իմ խունի ջիգարըս հազար փարա մի անի,  
Իմն ու քու սրտի բանն դիփ աշկարա մի անի  
Արութինի շախ սիրտըն մէկ էլ եարա մի անի,  
Կամքով ու ճիտ անելով փաթաթվելու վախտըն է:

ԵՄարա-կոչ, 1924 թ. № 171.

## ԵԱՐ, ՔՈ ԿԱՐՕՏԴ

Գ. Քարվերդեանը լսել ու գրի է առել 1908 թ. Ասեկ է հաղարար-  
ցի 85 տարեկան Աննա Մուրադեանը, որ գիտէր քաղմաթիւ երգեր, հէք-  
իաթներ, առակներ եւն. իր ասելով՝ շատերի հետ նաեւ Ս. Մ-ի երգերը նա  
սովորել է ջութիկ ժամանակ իւր քեռի տիրացու «Գէվարթից», որ գիտէր  
ճիւղաւոր ամեն եւ խաղ կանչել:

Եար, քու կարօտըդ քաշում իմ անմահական ջրի նըման.

Ռահմ արա, դուռըդ իմ էկի օջախի ու փերի նըման.

Սէրըդ սիրտըս կէս է արիւ ջանվարդարի թըրի նըման,

Էշիիդ ալաւը ինձ վառից բաբելական հըրի նըման:

Էլ քանի՜ զըցիս սարէսար, ռահմ արա այ բէմուրվաթ

Վուչ աչկումըս լուսի մնացի և վուչ գեառդանումըս թաղաթ,

Թէ պատժում իս, էդ էլ բան է, տանջեցիր ինձ թամամ, բարաթ,

Էրված հոգիս հովցընելու բըղիւր դու տխուրի նըման:

Վունց որ կարօտ մի ուխտաւոր դուռդ է էկիլ Սայեսթ Նովէն,

Անց է կացի ամէն չարկապ, ամէն արկիլ Սայեսթ Նովէն.

Թէ վուր կուրցնիս, էլ չիս զթնի նորից մէկիլ Սայեսթ Նովէն,

Նա մէկ հատ էր աշխար էկաւ, քանց մէ դարիւր հուրի նըման:

«ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ՄԱՅԵՆԹ Ն ՈՎԱՅԻՑ»

Ա. Երեմեանի, «Կեանք եւ Արուեստ»

թիւ 10—դեկտեմբեր 1938.

Ա.

Աշխարհում դժւն իմ եարն իս,  
Քանի սաղ իմ, դժւն իմ ջան իս.  
Ի՞նչ կուլի ինձ մըտիկ անիս,  
Դուն ինձ համա սուլթան խան իս:

Առանց քիզ ի՞նչ կօնիմ սաղըն,  
Կու կըտրիմ սաղիս սիմըն.  
Օխնըվի քիզ բէրող մէրըն,  
Աշխարհումըս դուն իս իմըն:

Մարալի պէս ման իս գալիս,  
Կըրակ իս տվի ջիգարիս.  
Սայեաթ Նօվէն իմ, նազանի,  
Ես էլ ուրիշ եար չիմ սիրի:

Բ.

Թէ արէգազ ասիմ, եար, դուն իս աննըման.  
Թէ ջաւայիր ասիմ, ջան, չկայ քիզ նըման,  
Մուցիդ մէշըն՝ վարթ, մանիշակ, սընբուլ, սուսան,  
Դժւն իս աննման:

Թէ վարթ ասիմ բացվիլ իս կարմիր վարթի պէս,  
Շատ սիրուն իս, բաց իս էլի դուն մեխակի պէս,—  
Սայեաթ Նօվէն վճնց դիմանայ, չկայ քիզ նըման,  
Դժւն իս աննման:

Գ.

Անգաճ արահ, մատաղ իմ քիզ, դողալ հար,  
Դուն խօս էն գլխէն գոված իս, դողալ հար,  
Էշխէմէդ ջունուն իմ դարի, դողալ հար,  
Գիշիբ ցէրէկ ման իմ գալի հանա-հանա:

Էս դարդէն օչով չըբաշէ, աչկիլուս,  
Էշխէմէդ հիւանդացիլ իմ, աչկիլուս.  
Մըհլամ արահ, մատաղ իմ քիզ աչկիլուս,  
Գիշիբ ցէրէկ էրվում իմ հանա-հանա:

Աշխարիս մէշըն քիզ նըման դողալ հար  
Ձիւմ տէսած, ման իմ գալի զիւմանա.  
Էշխէմէդ լալիս իմ, կանչում իմ աման,  
Ռահմ արահ, ձէն իմ տալի հանա-հանա:

Մըտիլ իս բաղի մէշըն, վարթ իս բաղում,  
Ջէյրանի նըման ման իս գալի բաղչում.  
Ջիգարիս կըրակ իս ալի, չիս խղճում,  
Ջալում, Սայեսթ Նօվուն քիբեան իս անում\*):

Գ.

Արի, մէ դարդըս իմացի,  
Էրած խօրված ման իմ գալի,  
Սալբու չինար, էս ի՞նչ արիլ,  
Խնձ հուրեան քիբեան շինէցիլ:

---

\*) Այս վերջին տողն սկզբում գրուած է այսպէս. «Սայեսթ Նօվն վո՛ւնց դընջանայ. տյ գալում». ապա ջնջուած է. ծանօթութիւն և ընդգըծում Ա. Երեմեանի.

Իսկի չիս գալիս, չիս ասում՝ «ջան իս»,  
նազ ու դամբալդ հանէցիր հօքիս.  
Ինչ կուլի Սայեաթ Նովու մօտ նստիս,  
Գօգալ, քաղցր քաղցր հիղըս խօսիս:

Ե.

Հասիլ է ծուցիդ շամամըն, հէյրան իս անում տէսնօղին,  
Եւր պըռօշներիդ նարաթ ունիս, էրնէկ մօղըդ նըստողին.  
Մէշկըդ սալըու չինար է, շուղկըդ արէգաղի նըման է,  
Եւր, ես քիդ վճնց թարիփ անիմ, աչկիրըդ օսկի փընջան է.  
Սայեաթ Նովու անդին եարն իս, հուտով միխակ, մանուշակ իս,  
Եւր, նազով հանէցիր հօքիս, ինչ կուլի մէկ հիղըս խօսիս:

---

Մազիր ունիս դաստա ուհան,  
Ունքիրըթ դալամով քաշած.  
Թէրթէրուկըտ նիտ ու նաշտար,  
Աչկիրըտ օսկէ փիալա,  
Աստղի նըման հաւասար,  
Ջանըս արավ դավար—դավար:

Ակըռքնիրըդ անգին քար  
Պըռօշէմէդ միղը է կաթում.  
Վիզդ է նըման դարդարի,  
Ինձ ամա չիս տար դարի,  
Մում դունգըդ արաւ ինձ սարսարի:

Կիշիւր ցէրէկ էշլօի մէշն  
Կանչում իմ աման-աման,  
Հուտըդ գուգա աննըման.  
Այստեղ երկու տող կը պակսին

Շամաման կու բխեցնէ  
Կաթնէ ախպուր չայիւ-շիման,  
Սայեաթ նօվու գօգայն աննըման է,  
Մարթու հօքին կու հանէ,  
Մարալ, էշլըդ ինձ կսպանէ:



## ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Տաղ 1 տան 2 տող. չի կանա, «կանա» պէտք է մի վանկ լինի.

Գ. III 1 մի վանկը («դուն») աւելորդ է.

Դ. III 3 երեք հարուրու — բուր ու մի վանկ պիտի լինի.

Զ. II 2 III 2 IV 2 և V 2 տողերում մի մի վանկ աւելորդ է.

Ը. III 1 «Եմբայուն» երկու վանկ կարգալու է.

IV 2 բաց է թողած «կանա» (ամեն մարթ չի կամա).

Թ. II 2 «շուղկըդ» մի վանկ պէտք է կարգալ, կամ է (նման է) պէտք է կրճատել և կամ «նման» մի վանկ կարգալ.

III 2 դըրանըդ պէտք է լինի 4 վանկ. ( $\frac{270}{270}$  դըրանըդ).

III 4 «ուրադան» պէտք է լինի երկու վանկ.

V 1 լաց ըլի պէտք է լինի լաց լի.

ԺԱ. IV տան կից քառեակի 1 տող. հուր սիրով պէտք է լինի «հուրիս սիրով».

ԺԷ. այս երգը տաղաչափական տեսակէտից ունի բաղմաթիւ խտորումներ:

ԻԹ. I 2 «աչըկ» ը աւելորդ է դրած.

ԼԸ. V 4 խաթթաբանդով և այլն. միանգամայն ընդունելի է ն. Աղբալեանի առաջարկը՝ ու շաղկապի տեղափոխութեան մասին, որով կը ստացւի խաթթաբանդով | չարա չարդախ | կօշկ ու ամա | բաթըն դուն իս:

ԼԹ. V 3 եարսուն. մի վանկը պակասում է (եարսսուն?)

ՍԱ. I 4 Տէսնօղըն շարքըն չի գիգի, լուսնի աստղ պայծառ բաց արած. պ. Գ. Լեոնեան առաջարկում է լուսնի աստղի փոխարէն լուստտող. ընդունելի է:

IV 1 բարովին բարով չիս տայ. մի վանկ պակաս է. կարելի է լրացնել դու-ով բարովին դու բարով չիս տայ.

ԽԲ. II 3 բըլբուլըն վարթին վարթըն բաղին. մի վանկ պակասում է (բու. ու վարթըն բաղին).

ԽԵ. IV 2 վրայ մուհաջարին. վրայ պէտք է կարգալ մի վանկ.

IV 6 «ինձ» պէտք է լինի երկու վանկ (ինձի).

ԽԹ. IV 1 կըրակ տըվիր կըրակն ավելի. երկու կըրակներէց մէկը պէտք է կարգալ առանց ը-ի (մի վանկ).

Ծ. IV 1 բուլբուլն երի պէտք է միասին գրուի — բուլբուլների.

ԾԱ. I 2 չափարէն՝ մի վանկն աւել է.

ԾԶ. և ԾԷ. տաղաչափութիւնն աղաւաղուած է.

### ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. երգ IV տուն 2 տող. — բրափայումս պարտալ ժամանակ դարսում էին իրեղէնները.

Բ. I 1 բրօյի բրօյի Բնչ բառ է և ինչ լեզուից վերցրած, ինձ յայտնի չէ. Ախվերգեանի բացատրութիւնը տ. բառարան.

Զ. III 1 էշխիցդ դառել եմ խելագար, բարբարոս Նգիզը (տ. բառարան).

է. IV 2 տ. բառարան քալադ բառը.

Ը. II 1 տ. բառարան հուքմի հէքիմ և Բօստօմի Զալ.

II 3 գլուխս արա տալ Թաքավուր — Վլուխս խփել տուր». Ախվերգեանի ըմբռնումը միանգամայն հիմնաւոր է.

III 2 տ. բառարան զաւփ.

Թ. III 4 ուրաղանը եթէ ուրազան չէ (մըրիկ), ապա անհասկանալի է.

IV 3, 4 տ. բառարան զալս և զահանդազ բառերը.

Ժ. II 1 բառըն բրառ էլ պէտք է հասկանալ. պարսկերէն բար գործ է ածուած միայն այսպիսի արտայայտութիւններում. եկբար, դօբար (մի անգամ, երկու անգամ).

III 1 «դիզարը» զղիղարովս փոխարինելու ոչ մի կարիք

չը կայ (տ. Գ. Լեոնեանի Սայեաթ Նովա 158 էջ). հմ. Ի VIII 2 Շիրինի պէս Փահրադի դիպարըն իմ (տ. բառարան).

ԺԱ. II քառեակ 2. տ. բառարան խէչ.

V քառեակ 3, 4. քաղաք — Տփիսիս. — խան — վրաց թագաւորը.

ԺԲ. II 1 շարթըն պէտք է լինի շարթին (այսինքն նման շարթին ու մեղրին).

IV 1 տ. բառարան «դար».

ԺԳ. II 1 տ. բառարան դախ բառը.

III 1 մար պէտք է լինի մարթ.

ԺԴ. I դարօվ տ. բառարան դար (دَار) բառը.

III 2 «թայդուլին». այս բառի ստուգաւմը մեզ չը յաջողուեց, թէև կառուցուածքը պարսկական է և ծաղկեփնջի իմաստ ունի.

IV 4 զալամբարըն պ. Լեոնեան առաջարկում է ուղղել զալամբարին, ճուղղականն ընդունելով զալամբարին. բացի այն, որ «զալամբարին» յանգի պահանջ է, Ս. Նովան ինքը ևս ուղղական է ընդունել զալամբարին ԻԶ. III 2.

V 4 «Սայեաթ Նովան կախադանին մնաց».

ԺԶ. II 4 միրա տ. բառարան «միրա».

IV 4 տ. բառարան «զարա» բառը.

ԺԷ. IV 2 տ. բառարանում «սաղչա» բառը.

ԺԸ. II 4 լալ Բաղէշիսան կամ լալ-ի բաղէշիսան. տ. բառարանում այդ երկու բառերը. բաղախշանի սուտակ.

ԺԹ. V 4 տ. բառարան բուքար բառը.

ԻԵ. III 1 տ. բառարան «ջուհարդար» բառը.

ԻԶ. I 2 դարըս. դար = دَار — դեղ, դարման.

II 5 դար = գազ. III 3 փառազաթ, տ. այս բառը բառարանում.

ԻԸ. վերջին տան վարիանտի մէջ շարըն կոտրած խոնթ-քարի պէս» շար նշանակում է բազմաճիւղ աշտանակ, ջահ.

ԻԹ. I 1 դիվաց — դեքերին. II 2 գլխիբաց տ. բառարանը.

Լ. 11 1 «ալի» տ. բառարանը. 11 3 մահի ջամալիդ կարող է լինել մահ ջամալիդ, ինչպէս ոմանց կողմից արդէն նկատուած է.

ԼԲ. 111 4 զովար պէտք է լինի զովհար.

ԼԳ. 11 1 արբար տ. բառարանում այդ բառը.

ԼԴ. V ճարըն. նախընտրելի բացատրութիւնը Ախվերդեանինն է «վրաց այրուրենի ճ (ճար) տառը 5000-ի թվանշանն է».

ճարի նաև զետակ վրաց.

ԼԵ. 1 2 խափանդ տ. բառարան. 1 4 մահանդ տ. բառարան.

V 4 դարանդ տ. բառարան.

ԼԶ. վերջին տան վերջին տողի բառ իմ ասումս. բառի փոխարէն բարձ հազիւ թէ մեծ առաւելութիւն ունենայ, բայց կարելի է ընդունել.

ԼԷ. V 1 Շառ էրիտ... տ. «չարի ու փալագըն» բառարանում.

ԼԸ. 11 4 սամանդարիդ տ. բառարան «սամանդար».

ԽԱ. 11 1 էշխիդ շուրըն հիդ է գալում. գալում(է) բայ է, նշանակութիւնն անյայտ.

11 3 ունքիբըդ սալիդ՝ սադախ է տ. բառարան «սադախ».

111 3 Տուլի նման. անյաշող է յանգաւորումը, բայց ունի որոշ իմաստ. աւելի անյաշող է պ. Լեոնեանի առաջարկած «Տուլի նման», որ պէտք է նշանակի «ջրհոս», պարսկերէն ջրհոս դուլ (چال) է կոչւում. գործ է ածւում և դուլ (چال), որ մեր դոյլ բառն է նոյն նշանակութեամբ և միայն արևմտեան տառադարձութեամբ կարող է տուլ դառնալ, և միևնոյն է, սչ. մի տալիսութիւն չունի տուեալ հատուածի հետ. Տուլ պարսկ. چال նոյնպէս չի համապատասխանում իր նշանակութեամբ (կախ, վէճ), այնպէս որ Ախվերդեանի առաջարկը մնում է իր ուժի մէջ.

V 1 մեռնելուս վրայ — քան մեռնելս.

ԽԲ. V 1,2 դալ բովուն և քովուն անհասկանալի է. Ախվերդեանի նկատողութիւնը՝ վերապահութեամբ.

ԽԳ. 1 3 դիվանա Փահլուլ տ. բառարանը.

111 2 թարգմանայ — պարզ չէ.

ԽԳ. III 2 սան իս անոււմ տ. բառարանը. — VI 1 նաղ իս անոււմ իխտիարիս — իխտիար ունիս, իրաւունք ունիս:

VII 4 ջամ հալիւտ տ. բառար. ջամ:

VIII 1 համ պարզ չէ VIII 3 խաթրըջ ջամ իս անոււմ տ. բառարան խաթր:

XIV 6 խիլքըն գըլխէս հատանոււմ իս — հան տանոււմ իս:

XVI և XVII ահ ու գար. տ. բառար. ահ ու գար:

ԽԵ. I 5 մուղայիշ. հնարաւոր չեղաւ մեզ ստուգել այս բառը. տ. բառարան:

ԽԶ. V 2 վախտի ռաստով փոխարինելը միանգամայն տեղին է ոչ միայն ըստ իմաստի. այլ և որովհետեւ եթէ ոչ ռ և վ, գոնէ ս և լս վրաց այբուբենի մէջ իրար խիստ նման են:

ԽԸ. V 1 մէռնէլու վըրայ գըժար ա — քան մահը, մահից աւելի:

ԾԱ I 1 դարէն էրված իմ, որովհետեւ փարհազը տառապել էր անձաւ փորելիս:

ԾԲ. ԾԳ. և ԾԴ. տաղերը գրչի խաղ են, կամ ինչպէս պ. Լեոնեանն է ասոււմ, սպորտ. ըստ տառերի փոխանակութեան կարգի այսպիսի ոտանաւորները կոչոււմ են ւալէֆլամա, ըստ տառերի և մտքի թազնուած դրութեան՝ թէջնիս تجنی (թաջնիս) արաբ. բառախաղութիւն, կալամբուր, համ. ա. سحر (ջնաս) — արիտերացիա, նոյնաձայնութիւն:

ԾԲ.ի թազնուած տառերը բաց անելով կը ստացուի

Գիմ գագաթիդ արա դա այբ Թօ (դաթ)

Ըեթ էրէսիդ դի Թօ ու այբ Թօ (թաթ)

Էնդուր նախ քաշեցի խէ այբ Թօ (խաթ)

Հալալ Սայեաթ Նօվէն\*) կեն ու այբ Թօ (կաթ):

ԾԳ. III 2 նըգավ - նընգավ:

ԾԴ. բառերը բաց արած կը ստացւի քաբար, սաբար, նաբար, արար:

II 2 սամթիլ չինէ — անհասկանալի է:

\*) Պէտք է լինի Ս. Նովին կամ Ս. Նովուն:

# Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա.

Աբա — ապա

Աբաբ ١١ Թաբա Preparing for a journey ճանապարհորդութեան պատրաստութիւն

Աբրէշում պր. ١٢ Թրէշում (թրէշում) մետաքս, ապրէշում

Ագուր պ. ١٣ Թ (աջօր) կամ ١٤ Թ (աջուր) — թրծած աղիւս

Ագաբ ար. ١٥ Թ (աղաթ) քաղաքավարութիւն, բարեկրթութիւն

Ագալաթ ա. ١٦ Թ (աղալաթ) արդարութիւն, օրէնք, դատարան

Աղիգ ա. ١٧ Թ (աղիգ) — սիրելի, թանկագին, յարգելի

Աթամի գաթ ա. պ. ١٨ Թ (ադամի գաթ) մարդ

Ալ թուրք. խաս կարմիր գոյն

Ալամ ա. ١٩ Թ (ալամ) — դրօշակ

Ալամ ٢٠ Թ (ալամ) — աշխարհ, տիեզերք

Ալ անիլ (ալ ա.) կարմիր գոյնով ներկել

Ալի — ալիք ٢١ Թ 1 Թ ալիք կը տաս ծովի նման

Ալմաս պ. ٢٢ Թ (ալմաս) — ադամանդ

Ախպէր — եղբայր

Ախպուր — աղբիւր

Ախտել — լաղթել

Ախր ա. ٢٣ Թ (ախր) — վերջ, վերջապէս, վերջին

Ակնակապ — ակներով զարդարուած

Ակուէք — ատամներ

Ահլ ա. ٢٤ Թ (ահլ) մարդիկ. ԽԴ XXII ամարդկանց շարքում

Ահ ու գար — ահ (ահ) և գար (պր. ٢٥ Թ) ողբ, հեծեծանք. ահ ու գար — ախ ու վախ

Թ V 2 Ելլը ես կը կրեմ այս վիշտը, թէ կուզ ախ ու վախ ունենամ

ԽԴ. XVI 6 Ելլը ծնեմ ախ ու վախից

ԽԴ. XVII 1 Ելլը ու վախ եմ քաշում, աման

Ադա պ. ٢٦ Թ (ադա) — պարոն, տէր, ադա. աղէրումէն — աղաներից

Ամա — համար, վասն

Աման ար. ٢٧ Թ (աման) ապահովութիւն, խաղաղութիւն, խնայում, ողորմութիւն. միջարկութիւն՝ աման — գութ, ողորմութիւն՝ հայցելու միջոց

Ամարաթ ա. ٢٨ Թ (ամարաթ) — ապարանք, պալատ, շէնք

Այեան ٢٩ Թ (այեան) — աչքեր

Այրիմն = այրենմն, այր բնէր

Այրվան պ. ٣٠ Թ (այրվան) — պարզամբ, սրան, դանիւն, պալատ

Այն ա. ٣١ Թ (այն) աչք. — տխու-

մըդ—աչքումդ

Այնիրանդ պ. عین (այնէ) և عین (բանդ)—կապ բառերից, փոքրիկ հայելիներով շինուած պատ Անախտէլի—անյաղթելի

Անբար ա. عجز (տնրար) - յամպար

Անբարի— ոչ բարի, չար

Անդալ թ. թուլամորթ. ասարածամ եկած մարդ, որ խանգարում է մտերիմ խօսակցութիւններն. Զ. Գր. Կովկ. Ընկ.

Անդաճ—ակտնջ

Անգրծակի—յանկարծակի

Անդանակ էլայ—մեռած, դանակով մորթուելու չը հասայ

Անխարջ—հայերէն բացասական մասնիկ ան + ար. عجز (խարջ) ծախք, հարկ. անխարջ—առանց ծախքի

Անդալամ ա. դալամ. — առանց գրիչ

Անդամ դամ—ա. ۶ (դամ) տըխրութիւն, վիշտ—անդամ—առհոգ, անվիշտ

Անդի—անեղի, այսինքն՝ աղեղի

Անմիդ—անմեղ

Անջադ—հագիւ, հագիւ թէ

Աշուղ ա. آشا (աշէդ) սիրահար, տարփածու, սովորաբար՝ ժողովրդական երգիչ. հմ. «էջն» բառի հետ

Աչկիր—աչքեր

Աջար ա. عجب (տշար) զարմանք, զարմանալի, տաւօրինակ

Աջալ ա. آجا (տշալ)—մահ, ճակատագիր, օրհաս

Աջայիւ ա. عجايب (տշայէբ) յոգնակի عجب (տշիբէ) բառի. զարմանալի բաներ, հրաշքներ, զործ է թծում և եզակի իմաստով

Առուտէմէն—առաւօտից

Առչիւլ—առջև

Աս ա. آسا (ասլ)—արմատ, սկիզբն, հիմք, ծագումն, ազնւութիւն, իսկական, ազնւազարմ

Ասլադա ա. آسا (ասլ) + ա. آد (լադդ) պապ, նախահայր. — տաւրջադդ—քաջատոհմիկ

Ասկ—ազգ

Ասմավուր—Յայսմաւուրք

Ավալ ա. آوا (ավալ)—առաջին, առաջ, նախ

Ավէլի—առաւել

Ատլաս ա. آتلا (տթլտս)—սընդուս, սատին

Ար ա. آرا (ար)—ամօթ

Արա տալ (գլուխս)—հրամայիր, որ կտրեն, կտրել տուր

Արար, Արարտտան—ա. Արարիա

Արադ—Երասխ, Արաքս

Արադ ա. آرد (արդդ)—օգի.—քրքրտինք

Արայիշ պ. آيش (արայէշ) պա-  
ճուճանք, զարդարանք.— մաղե-  
րի յարդարելը վարսավիրի ձեռ-  
քով

Արբար ա. ارباب (արբ) (եզ. ար-  
բար) տէրեր. գործ է ածւում  
և եզակի իմաստով տէր. ար-  
բար ըլի՛ւ՝ տէր լինել

Ը III որքան կուգէ տիրական լի-  
նի ծառան՝ տիրոջ դէմ յան-  
դըգնութիւն չը պէտք է ցոյց  
տայ (ակնարկ իր արարքի վը-  
րայ)

ԸԳ II 1 սիրունութիւնդ իշխող  
դարձաւ

Արգ անիւ ա. ارغ (արգ) խնդիր և  
کرد (քորդուն) անել. խնդիր  
յայտնել, (կրտսերի կողմից ա-  
ւագին կամ իշխանաւորին) ա-  
սել, յայտնել

Արիվ—արև

Արկիւ—արգելք

Արմանէլու—զարմանալու

Արունուտ—արիւնոտ

Արք—իշխանութիւն

Ավտալու հաւատալու

Բ.

Բաբ պ. باب (բաբ) համեմատ, հա-  
մապատասխան. բաբ անիւ—հա-

մեմատել

Բարաթ պ. بارث (բարթ) նիւթ, ա-  
ռարկայ.— նկատմամբ, վերա-  
բերմամբ: Սայեսթ նովան գործ  
է ածում այս բառը տեսակ  
իմաստով

Բադէշիւան պ. بادشاه (Բողաթշահ)  
գաւառ Միջին Ասիայում, որ-  
տեղ գտնւում է լաւագոյն սու-  
տակը (կարկեհան)

Բադա պ. باد (բադ) բազէ

Բադի ա. بادى (բադի) ոմի, ո-  
մանք, մի քանի, որոշ

Բադ պ. باد (բադ) այգի, պար-  
տէզ

Բադաթ արաբական յոգնակի ան-  
վերջաւորութեամբ բազմա-  
բից. այգիներ, այգեստան

Բադման պ. بادمان (բադման) այ-  
գեպան

Բադմանչի—նախորդ բառն է. վը-  
րան թուրքերէն մի աւելորդ չի  
մասնիկ աւելացրած

Բադշա պ. بادشاہ (բադշէ) փոքրիկ  
այգի, պարտէզ

Բանդ պ. بند (բոնդ) թմբեցնող  
դեղ, պատրաստուած կանեփի  
տերևներից

Բանդ պ. بند (բոնդ) բանդ, կապ.  
բանդ անիւ—կապել, բանտար-  
կել

Բանդա պ. ١٤ (բոնդո) — ստրուկ  
Բանք, բանքիր — խօսք, ասաց-  
ուած. — խօսքեր, ասացուածներ

Բաշ Թ. զլուխ

Բաս ա. ٢٠ (բոնս) վէճ, վիճաբա-  
նութիւն, բանականիւ

Բաս ինչի՞ — իսկ ինչո՞ւ համար  
Բար ١٢ (բար) բեռ. — միւրգ. — ան-  
գամ

Բարգ — բարկ

Բարէբար պ. ٢٠ (բորարոր) —  
հաւատար, նման, հակադիր

Բարիթովուր ա. ١٠ (բորիթ-  
թովիւ) քնարական բանաստեղ-  
ծութիւն երկար ձևով և ման-  
ուածապատ. Թուրք. կոչուում է  
դինջիլամա — շղթայաձև. Սա-  
յեսթ Նովան այս բանաստեղ-  
ծութեան օրինակը տուել է ԽԴ.  
տաղում

Բարուր — խանձարուր

Բափա ա. ١٢ (վոֆա) խոստումը  
պահելը, ուխտապահութիւն, հա-  
ւատարմութիւն

Բէդամալ պ. ١ (բի) բացաս. մաս-  
նիկ + ա. դամալ (ա.) անտրա-  
մադիր, սիրաբ կտաբած

Բէդասլ պ. ա. ١٢ (բոդ-ասլ)  
վատթարագի ծագմամբ անագ-  
նիւ

Բէգարիլ, բէգրիլ պ. ١٢ (բիգար)

խոնջացած, ձանձրացած, յոգ-  
նած. — բիգար + շողտն (լինել) —  
ձանձրանալ, յոգնել

Բէիդրար պ. ١ (բի) բացասական  
մասնիկ + ա. ارا (էդ'րար)  
խոստովանութիւն. — բէիդրար  
(բիէդ'րար) ուխտազանց, ուրա-  
ցող

Բէհ ու բազար. բէհ — ա. ٢ (բէյ)  
վաճառ բազար — պ. ١٢ —  
շուկայ

Բէլլու Թ. (բալլի) յայտնի, նշա-  
նաւոր, ա. ٢ (հանդադ

Բէմուրազ պ. ١ (բի) բացասակ.  
մասնիկ + մորազ (مرا) իղձ,  
փափագ, մուրազ, բէմուրազ =  
բիմորադ՝ իղձը չիրականացած

Բէմուրվաթ. բի բացասակ. մաս-  
նիկ + ա. ١٢ (մորուվաթ)  
բառը, որ նշանակում է ազն-  
ւութիւն, մեծահոգութիւն, սքի-  
բազործութիւն, կորուվ. — բիմո-  
րուվաթ նշ. անգութ, անողորմ,  
անխիղճ

Բէրնիրն — բեռները

Բըրօլէ պ. ١٢ (բուր) — բիւրեղ. —  
բիւրեղեայ

Բիւր — բեռն

Բիրեան, բիրիան. — պ. ١٢ (բէր-  
եան) — խորով, խորոված, տա-  
պակած. — բիրեան անել — խորո-

վել, այլեւ  
 Բլբուլ պ. بلب (բօլբօլ) — բլբուլ,  
 սոխակ  
 Բլքամ պ. بلك (բալքէ) — գուցէ  
 Բհամ գալ պ. بآمد (բէհամ ա-  
 մոդան) երևան գալ  
 Բութա պարսկերէն ب (բօթ) բա-  
 ոըն է, որ նշանակում է կուռք.  
 د ب (բօթ բույ) գեղեցիկ ինչ-  
 պէս կուռք  
 Բունիթա պ. بنه (բոնիթա) հիմք,  
 ֆունդամենտ  
 Բօյի բրօյի — աննշափ ու անհա-  
 մար, Ախվերդեան  
 Բօդա — արքեպիսկոպոս խմբիչ, որ  
 պատրաստում են Կովկասի լեռ-  
 նաբնակները կորեկից, նաև բը-  
 րընձից, Հայ Գր. Ընկ.  
 Բօյ — թ. հասակ  
 Բօլուն — հասակին? բօյին?

Գ.

Գալ անիլ Լէ 1 3 — մեռելի վրայ  
 գալը  
 Գարդիշ պ. گاردش (գարդէշ) — զբօ-  
 սանք, պատյոս  
 Գափ պ. گاف (գաֆ) — պարծենալը,  
 boasting  
 Գեառդան պ. گاردان (գարդան) վիզ,  
 պարանոց

Գէդին — գետին  
 Գէթ — փաս. գէթ անիլ — փաս-  
 տալ  
 Գէմի թ. նաւ  
 Գիդ — գետ  
 Գիթ պ. گيث կամ گيث (գիշ կամ  
 գիշ) — խելագար, գիթ. — մէկը,  
 որի գլուխը պտոյտ է գալիս  
 Գիդ — գիւղ  
 Գլխիբաց, գլխարաց — նշան սգաւո-  
 բութեան. Թիֆլիսում արևելեան  
 սովորութեամբ կահայք մեռելի  
 վրայ սուգ անելիս են եղել  
 գլխարաց և հիւսերը ձեռքին  
 Գլխօքս — գլխիս տակ  
 Գուդիս — կուզես  
 Գուլ պ. گول (գօլ) վարդ, ծաղիկ  
 Գուլարդան պ. گولاردان (գօլար-  
 դան) — վարդաշրի շիշը  
 Գուլբաղ պ. گولباغ (գօլբաղ) — դը-  
 բախտ  
 Գուլգաղ պ. گولگاه (գօլգ'աղ) —  
 խառ ալ  
 Գուլիշ քրեոնի տափակ կամ բո-  
 լորակ գլուխն Ախվ.  
 Գուման պ. گومان (գօման) — ենթա-  
 դրութիւն, կասկած, կարծիք.  
 Գուման անել — երևակայել, կար-  
 ծել  
 Գունք — գոյն  
 Գուրձ — գործ

Կօզալ թ. սիրուն, չքնադադեղ  
Դօլ թ. (գ'եօլ) — լիճ  
Դօվհար պ. ڤوھ (գօվհար) — դո-  
հար, մարդարիտ, անզին քար

Դ.

Դարանդ պ. ڤاراند (դարանդ) այ-  
լանդակ, պալարներով ծածկ-  
ուած մարդ. ԼԵ. V 4 Եթէ տես-  
նողդ մէկ էլ տեսնի, խելագար  
և այլանդակ ես դարձնում

Դադա պ. ڤاڤا — մանկանց վերահըս-  
կող ծառայ (վարպետ, իմաս-  
տուն)

Դաթ ڤا դադ - դատ, արդարու-  
թիւն, օրէնք

Դալ — ռծննդականի առաջին կա-  
թը և այլ Գրողն. Կովկ Ընկ.

Դադ պ. ڤاڤا (դադ) խարան. դադ  
անել խարանել

Դադստան — լեռնազաւառ Կովկաս-  
եան լեռների հիւսիս-արևելքում,

ներկայումս հանրապետութիւն  
Դամ պ. ڤا (դամ) — ցնծութիւն,

հրճուանք, բերկրութիւն, քէֆ  
Դամ ڤا (դամ) որոգայթ, թակարդ,

ուռկան. դամ անիլ որսալ  
Դամաղ ա. ڤاڤا (դամաղ), ուղեղ,

քիմք. այլաբ. տրամադրութիւն,  
հպարտութիւն

Դամբ (տես դամ) — ուռկան, ցանց,  
որոգայթ

Դանդ պ. ڤان (դանդ) — դանկ,  
մի վեցերորդ մասը (քաղաքի,  
գիւղի, անշարժ կայքի).

Դաս — օրքեստր, նուագախումբ  
Դաստտ պ. ڤاسا (դաստտ) փունջ. —

դաստտ դաստտ — փունջ փունջ  
Դաստամազ ա. դաստա (և մազ).

փունջ մաս, հիւս, դէս  
Դաստուր պ. ڤاسور (դաստուր) —

գործելակերպ, սովորութիւն, կա-  
նոն, թոյլտուութիւն, հրահանգ

Դավ պ. ڤا (դավ) յաւակնու-  
թիւն, յանդգնութիւն, մեծամը-  
տութիւն. Ը. III 2 Տիրոջ դէմ  
յանդգնութիւն չը պէտք է ցոյց  
տայ

Դավթար պրս. ڤاڤار (դաֆթար) —  
տետրակ, մատեան

Դավրան ա. ڤاڤران (դավրան) շրթ-  
ջան, շրջանառութիւն

Դար — դար (100 տարի)  
Դար պ. ڤا (դար) կախաղան. ԺԲ.

IV 1 Տարօրինակ է, ինչպէս  
դիմանամ ես այսքան տառա-  
պանքին (կախաղանին)

Դար ա. ڤا (դար) տուն, բնակա-  
րան, երկիր, կողմ

Դար պ. ڤار (դարու) դեղ, դար-  
ման

Դարդ ډار (գորդ) — ցաւ, կսկիծ,  
 վիշտ  
 Դարդակ — դատարկ  
 Դարիլ իմ — դարձել եմ  
 Դարիչին պ. ډارچ (դարչին) կի-  
 նամոն  
 Դափ ա. ډا (դաֆ) դափ (բուրնա)  
 Դէգա վր. մայր  
 Դէվէր — եղէպի վայր ք, նուսստ,  
 կրտսեր  
 Դժար — դժուար  
 Դի — դիր  
 Դիար ա. ډا (դիար) յոգնակի  
 դար-ի՝ ռոններ, ապարանք ք. յոգ-  
 նակի դայիրմ-ի՝ գաւառներ,  
 երկրներ, սահմաններ  
 Դիրա պ. ډا (դիրա) — դիպակ  
 Դիդար պ. ډاډار (դիդար) երես,  
 գէմք. երբեմն՝ սիրելի, սիրեկան  
 Դիդ — դեդ  
 Դին — դեն  
 Դիվ պ. ډا (դիվ) — դև դիվաց —  
 դևերին  
 Դիվան պ. ډان (դիվան) աս-  
 եան, տրիբունալ  
 Դիվանա պ. ډان (դիվանա) — դի-  
 ւահար, խելագար  
 Դիփ — համակ, ողջ, պիփունանց —  
 ամենքին  
 Դնջանալ թ. հանգստանալ. (դինջ —  
 հանգիստ)

Դուգուն թ. կապ. — պալար  
 Դուդ — դոդ  
 Դուշման պ. دشمن (դոշման) — թըշ-  
 նամի, հակառակորդ  
 Դուս — դուսս  
 Դուրգար պ. ډورگ (դորուդգար) —  
 հիւսն  
 Դուքան ա. ډكا (դոքան) — խա-  
 նութ  
 Դրախտ պ. ډراخت (դրախտ) — ծառ  
 Դրուստ պ. ډرست (դորոստ) — ու-  
 ղիղ, ճշմարիտ  
 Դրստել (հմ. դրուստ) ուղղել  
 Դրոշա վր. դրոշակ, պարսկական  
 ծաղումից. պ. ډرشت (դորոշիշ) —  
 դրոշակ  
 Դոշ պ. ډوش (դուշ) ուս. հայերէ-  
 նում՝ լանջ, կուրծք  
 Դոշամա թ. ډوشمه (դոշմա) — դորդեր, սրվ-  
 ոսց են.  
 Դոստ պ. ډوست (դուստ) ընկեր, սի-  
 բելի, սիրոյ տուարկայ  
 Դովա ա. ډوا (դո՛ւա) — աղօթք  
 Դովլաթ ա. ډولت (դովլաթ) —  
 հարստութիւն, պետութիւն  
 Դովրան ա. ډوران (դովրան) շր-  
 ջան, դար. թաւալում

Ե.

Եա . . . եա . պ. Է . . . Է (Եա . . . եա)

կամ...կամ  
 Ետդ թ. օտար. երբեմն՝ թշնամի  
 Ետխա թ. Կ (եռիսէ) — օձիք  
 Ետդի պ. Ե (եռդի) — ապստամբ.  
 երբեմն՝ թշնամի  
 Ետդերուձէն — ապստամբներից,  
 թշնամիներից  
 Ետդուձ ա. Ե (եռդուձ) — յա-  
 կինթ  
 Եանա եանա թ. այրուած, տո-  
 չորուած  
 Եաշվիլ թ. Ե (եաշ) — հասակ. —  
 համեմատել, հաւասարուել  
 Եար պ. բարեկամ, ընկեր. — սիրա-  
 կան  
 Եարա թ. խոց, վէրք  
 Եարալու թ. խոցուած, խոցաւոր,  
 վիրաւոր  
 Եարանի, «երաժշտական եղանա-  
 նակի անուն է» Ախվ.  
 Եար անիլ — սիրելի անել, յարմա-  
 րեցնել  
 Եարսուն — երեսուն  
 Եարովտ, եարօտ տ. եարա. խո-  
 ցաւոր, վիրաւոր  
 Եզիդ 1) Մոսպիտայի որդին, Օմա-  
 յեան երկրորդ խալիֆը. նրա հը-  
 բամանով մարտիրոսական մա-  
 հով նահատակուեց Հոսէյնը՝ Ա-  
 լիի որդին. Շիաների աչքում  
 Եզիդի այդ արարքը համարու

է վերին աստիճանի բարբարոս  
 սական և խելագար. Եզիդը շի-  
 աների աստիճութեան առարկան  
 է. 2) քուրդ եզդի ժողովուրդը  
 Ելումուտ — Շնունդ և մահ» Ախվ.  
 Ելեան թ. (ելեոն) — նաւի առա-  
 զաստ  
 Ենգիզունիա. այսպէս էր կոչոււմ  
 Իրանում Ամերիկան. — մի տե-  
 սակ կերպաս, որ թերեւ Ամերի-  
 կայից է եկել առաջին անգամ  
 Երզնուց — երկնքից  
 Եփ — յիփ — երբ

## 2.

Զադ թ. յ (զադ) — առարկայ, բան  
 Զաթ պ. յ (զադ) — զարմ, ցեղ  
 Զալում ա. Զ (զալէմ) — բռնա-  
 կալ, դեսպոտ  
 Զախ պ. Զ (զոխ) կրճատում  
 Զչ-ի (զախմ) — հարուած, վէրք,  
 խոց  
 ԺԳ. II 1 «Սիրտս փորումս թու-  
 լացաւ անգալների (տ.) հար-  
 ուածներից, վէրքերից»  
 Զայ ա. Զ (զայէ) փչացած,  
 զայ անիլ — փչացնել  
 Զայան պ. Ն (զիան) զեան, վը-  
 նաս  
 Զայանի «երաժշտական եղանակ է»  
 Ախվ.

Ձայ. անիլ — աւերել, փչացնել, վը-  
նասել

Ձանդին, հաւանաբար պ. سكين  
(ստնգին) ծանր, ծանրակշիռ. —

բայց դուցէ և պ. سكين (զտնգի)  
եթովպացի, խափշիկ

Ձանջափիլ ա. زنجيل (զտնջորիլ)  
կոճապղպեղ

Ձավալ ա. ذوال անկում, կործա-  
նում, արևի թեքում

Ձավթիլ ա. ذب (զտթ) գրաւել,  
յափշտակել, տիրապետել

Ձար պ. ذ (զտր) ոսկի

Ձար պ. ذار (զար) ողբ, հառաչ,

Ձար ա. ذر (զտր) գազ, մեթր

Ձարա. վրացներէն նոսրագիր զ և խ

տառերը շատ նման են իրար

և հաւանական է, որ դափթա-

րում խառա է եղել և Ախվերդ-

եանը զարա է կարդացել. այդ

դէպքում կունենանք խարա պ.

خارا (խարա), որ միևնոյն է

سك خارا (ստնգէ խարա) որձա-

քար, գրանիտ կամ միայն խա-

րա՝ ալեծովի մետաքս. — զարա

նշանակութիւն չունի

Ձարար ա. ذر (զտրոր) — վրաս,

գեան, կորուստ

Ձարբար պ. ذربار (զտրբար) — ալև

զտրբարֆտ, զտրբարֆտէ — ոսկէ-

հիւս, զառնաւուխտ. զտրբար

(ذربار) նշանակում է մաքուր  
ոսկի

Ձարդ պ. ذرد (զտրդ) դեղին, արժ-  
գոյն. — զարդ անել — դեղնացնել

Ձարլու պ. զար (ա.) թուրքերէն —  
լու ածանցով ուսկենուս, ոս-

կենկար

Ձարդալամբար. զար և դալամբար  
բառերը (տ. ոսկենուս դալամ-

բար

Ձարնիշ } պ. ذشان (զտրնշան)

ոսկենուս, ոսկէ նը-

Ձարնշան } կարներ պողպատի

վրայ

Ձարուր ذرد (զտրուր) անհրա-

ժեշտ, անյետաձգելի, գազանի

Ձաւալ ա. ذال (զտվալ) անկում,

կործանում, ընդհատում կեան-

քի

Ձափուանդ ա. ذفران (զտֆորան)

քրքում

Ձէն — գէնք

Ձուլղար ա. ذولقرين (զուլղտրնոյն)

երկեղջրանի (Ալէքսանդր Մա-

կեդոնացու մակդիրն է)

Ձուրիաթ ա. ذر (զորրիէ) — սե-

րունդ

Ձուքս — պանուճանքի զգեստ իր

զարդարանքով

Ձօհրա . ذهر (զօհրէ) Արուսեակ մո-

լորակը (Վեներա), որ երկնա-

յին երաժիշտ է

Զօղ ա. ذوق (զօվ) — ճաշակ, հա-  
ճոյք, հրճուանք

է.

էղիվըն կամ էղնէն — յետեից

էլ աւելի, աւելի ևս

էկած — եկած

էյթիրար ա. ايتار (էյթէրար) վըս-  
տահութիւն, հաւատ, վարկ  
էն գլխէն — սկզբից, ստանշուց  
էնդուր — նրա համար, այն պատ-  
ճառով

էշխ ա. عشق ('էշղ') սէր, տար-  
փանք. հմ. «աշուղ» բառի հետ  
էսանց էլ — սրտնից աւելի, բացի  
սրտնից

էրէզ — երեկ

էրիտ — տուեց

էրծաթ — արծաթ

էրկաթ — երկաթ

էրնէկ — երանի

էրվինք — այրուում ենք կամ՝ պի-  
տի այրուենք

թ.

Թաբաղ ա. طبل (թաբաղ) մեծ  
փայտէ մատուցարան, որ սո-  
վորաբար գլխի վրայ դրած են  
տանոււմ

Թաբաղ, հաւանականաբար طبل  
(թաբախ) խոհարար

Թարիբ ա. طيب (թարիբ) բժիշկ

Թաղա պ. تال (թաղէ) նոր, թարմ

Թաթ պարսկերէն բառ չէ. երևի  
հայերէն թաթ բառն է

Թախշտ ա. طاش (թաղ'), տ. եւ  
պարսկ. ածանց ۱-չէ թաղ' չէ —  
կամարակապ փորուածք պատի  
մէջ, որմախորշ, որ որպէս դա-  
րակ է ծառայում

Թահր ա. طور (թօր) կերպ, ձեւ,  
եղանակ, տեսակ

Թաղ ա. طاق (թաղ') 1) կամար,  
կամարակապ շինութիւն. 2)  
բանջարանոցի թմբեր

Թաղաթ. նշանակում է կանթ  
վարունգի, ձմերուկի ևն.

Թաղշաթ. թախշա

Թամամ ա. تمام (թամամ) ամբողջ,  
կատարեալ, բոլորովին, վերջ,  
վերջաւորութիւն

Թամամիլ — թամամ բառից (տ.)  
վերջացնել

Թամաշա պ. تماشا (թամաշա) տե-  
սարան, հանդէս

Թայգուլ պ. «ծաղիկների փունջ»?  
Հայ Գր. կովկ. Ընկ.

Թաջ պ. تاج (թաջ) թագ

Թառ ա. طاس (թաս) բաժակ

Թավաղա ա. تواضع (թավաղօ) խո-

նարհութիւն, քաղաքավարութիւն, հիւրասիրութիւն  
 Թավուր ա. روضه (թօւլը) — կերպ, տեսակ, եղանակ  
 Թարգսնալ ա. تاراج (թարթ) լքում, հրաժարում. — անալ վերջաւորութեամբ՝ լքել, հրաժարուել  
 Թարիփ ա. تريف (թարփիֆ) ծանուցում, գովասանք. Թարիփ անել — նկարագրել, գովաբանել  
 Թաք պ. تاخت (թաք) միակ, միայն թէ  
 Թէգուզ — թէկուզ, թէէն, թէպէտեւ  
 Թէջնիս ա. تجسس (թուջնիս) զուարճալի բառախաղ. աշուղական տաղաչափութեան մի ձևն է  
 Թէրթէրուկ արտևանունք  
 Թիլ — թիւ  
 Թիլա ա. تله (թուլա) ոսկի  
 Թիղ պ. تلغ (թիղ) սուր. նետի ծայրը. տէգ  
